

Մ. Հ. ՄԽԻԹԱՐՅԱՆ

**1848-1849 ԹԹ. ՀՈՒՆԳԱՐԱԿԱՆ
ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ
ԱՐՉԱԳԱՆՔՆԵՐԸ ՀԱՅ
ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ**

ԵՐԵՎԱՆ



943.9 + 947.925

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԿԱԿԱԵՄԻԱ

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Մ. Հ. ՄԽԻԹԱՐՅԱՆ

1848-1849 ԹԹ. ՀՈՒՆԳԱՐԱԿԱՆ
ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ
ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ ՀԱՅ
ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ



ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՄԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 2003

ՀՏԴ 940+941 (479.25)
ՊՄԴ 63.3 (4 Հունգ)+63.3 (2Հ)
Մ – 793

Տպագրության պատրաստեց՝
պատմական գիտությունների թեկնածու
Վարուժան Պողոսյանը

Մ 793 Մխիթարյան Մ. 1848–1849թթ. հունգարական
հեղափոխության արձագանքները հայ իրականության
մեջ: «Գիտություն», հրատ., Եր., 2003, 140 էջ:

Մ. Հ. Մխիթարյանի (1920-2001) աշխատության մեջ հայ պարբերական մամուլի նյութերի և XIX դ. երկրորդ կեսի հրապարակախոսների (Մ. Նալբանդյան, Ա. Հովհաննիսյան, Ստ. Պալասանյան և ուրիշներ) ելույթների հիման վրա հանգամանորեն քննարկվում են 1848-1849 թթ. հունգարական հեղափոխության արձագանքները հայ իրականության մեջ: Հեղինակը համակողմանիորեն ուսումնասիրում է հեղափոխական շարժումների լուսաբանումը 1840-1850-ական թթ. հայ պարբերականներում («Եվրոպա», «Ազգասեր Արարատյան» և այլն), մեծ ուշադրություն հատկացնում հունգարական ազգային ազատագրական շարժումների՝ հայ հասարակական մտքի վրա ունեցած բարերար ազդեցությանը XIX դ. երկրորդ կեսում, որոնք մեծապես խթանել են հայ ժողովրդի ազգային զարթոնքին: Նախատեսված է պատմաբանների և բանասերների համար:

Մ 0503030000
703 (02) – 2003

ՊՄԴ 63.3 (4 Հունգ)+63.3 (2Հ)

ISBN 5 – 8080 – 0526 – 4

© ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2003

ԱՌԱՋԱԲԱՆ

Պատմական ճակատագրի բերումով հայ ժողովրդը մշակութային իր օջախները հիմնադրել է աշխարհի զանազան երկրներում և օտար այդ ավերում ստեղծել հայկական առաջին տպագրական մեքենան, լույս ընծայել հայերեն առաջին գիրքը, հրատարակել առաջին պարբերականը: Ինչ վերաբերում է բուն Հայաստանին, ապա պետականությունը կորցնելուց հետո միջնադարի անընդմեջ պատերազմներից ու ավերածություններից ուժասպառ երկիրը XVI դարում վերջնականապես բաժանվելով երկու մասի, ընկել է թուրքական և պարսկական բռնապետությունների լծի ներքո:

Ակսած 1828 թ., Ռուսաստանին միանալուց հետո, Արևելյան Հայաստանը հաղորդակցվելով քաղաքակիրթ ռուս ժողովրդի մշակույթին, ձեռք է բերում տնտեսական ու մշակութային զարգացման լայն հնարավորություններ: Արևմտյան Հայաստանը, սակայն, մնալով թուրքական բռնատիրության ներքո, ժողովրդի կյանքի և գույքի ծայրահեղ անապահովության պայմաններում, իր մշակութային արժեքները ստեղծում է ծանր մաքառումների գնով: Այսպես, պատմական Հայաստանի տարածքում դարեր շարունակ կողք-կողքի ապրում և գործում էին միևնույն ժողովրդի միմյանցից տարանջատ երկու հատվածները, որոնք կապված էին ամենասերտ հոգեկան շղթաներով և երբևէ չէին կորցնում ազատագրվելու և միանալու հույսերը:

Եվրոպայի փոքր ժողովուրդների, այդ թվում և հունգարացիների պատմական ճակատագիրը նրանց ծանոթ էր, իսկ 1848-1849 թթ. ազատագրական շարժումները միանգամայն հասկանալի: Ահա թե ինչու, երկու հատվածների հայ մտավորականները հսկայական ուշադրություն էին դարձնում եվրոպական ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումների ընթացքին և այդ իրադարձությունները լայնորեն

լուսաբանում ոչ միայն 1848-1850-ական թթ., այլև հետագա տասնամյակներում, ընդհուպ մինչև դարավերջը:

1848-1849 թթ. հունգարական հեղափոխության օրերին հայկական պարբերաթերթեր էին հրատարակվում Վենետիկում, Վիեննայում, Զմյուռնիայում, Կոստանդնուպոլսում, Կալկաթայում¹: Եվրոպական երկրների քաղաքական անցքերը հայկական թերթերը լուսաբանում էին գլխավորապես եվրոպական լրագրերի նյութերի հիման վրա, ուստի և բացառությամբ «Եվրոպայի», դրանք՝ իբրև սկզբնաղբյուր, մեծ հետաքրքրություն չեն ներկայացնում: Միաժամանակ վերոհիշյալ թերթերում զետեղված նյութերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ չնայած դրան, այդ լրագրերից յուրաքանչյուրը ժամանակի պաշտոնական քաղաքական լուրերը և մասնավորապես հունգարական իրադարձություններին առնչվող տեղեկությունները հրապարակում էր որոշակի մեկնաբանություններով, անուղղակիորեն արտահայտելով խմբագրության վերաբերմունքն այս կամ այն հարցի նկատմամբ: Այսպես, հավանաբար ինչ-որ ձևով կապված լինելով Տրանսիլվանիայի հետ, թերևս այնտեղ ունենալով սեփական թղթակից, «Հայաստան» թերթը հունգարական հեղափոխության հետ կապված նյութերի ծանրության կենտրոն դարձրել է հունգարացիների հաղթանակների նկարագրությունը Տրանսիլվանիայում և Բեմ գորավարի սխրագործությունների փառաբանումը:

Կալկաթայում հրատարակվող «Ազգասեր Արարատյան» թերթի խմբագիր, հայ նշանավոր գրող և հրապարակախոս Մեսրոպ Թադիադյանը շատ հեռու գտնվելով Եվրոպայից, անմիջականորեն զուրկ լինելով պատերազմական անցուդարձը լուսաբանելու հնարավորությունից, հունգարացիների պարտությունից հետո ուշադրությունը կենտրոնացնում է հեղափոխական վտարանդիների ճակատագրի վրա: Նա հետևում էր Ռուսաստանի և Թուրքիայի կառավարությունների բանակացությունների ընթացքին՝ պաշտպանում լեհ և

¹ Անդրկովկասում կարճ ժամանակ հրատարակվելուց հետո դադարել էր լույս ընծայվել «Կովկաս» լրագիրը (1846-1847), իսկ արևելահայ հաջորդ թերթը՝ «Արարատը» հիմնադրվում է միայն 1850 թ.:

հունգարացի փախստականների իրավունքները և նշավակում ցարական կառավարության պահանջների անարդարացիությունը: //

«Արշալույս Արարատյանն» աչքի է ընկնում իր կարգապահ չեզոքությամբ, մի «կարգապահություն», որն ինքնին բնութագրում է քաղաքացիական պոռթկումից զուրկ այդ թերթի խիստ կասկածելի վարքագիծը:

Ժամանակի հայկական պարբերականներից հունգարական հեղափոխությունն ամենայն մանրամասնությամբ լուսաբանել է Վիեննայի Մխիթարյան միաբանության օրգան «Եվրոպա» շաբաթաթերթը, որն իբրև քաղաքական լրագիր, հայ ընթերցողներին հանգամանորեն ծանոթացնում էր եվրոպական երկրներում տեղի ունեցող անցուղարձի հետ²:

² Հունգարական հեղափոխությունը չի արտացոլվել Վենետիկի Մխիթարյան միաբանության օրգան «Բազմավեպ» ամսագրում, որն ուներ ընդգծված բանասիրական բնույթ:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

«ԵՎՐՈՊԱ» ՇԱՐԱԹԱԹԵՐԹԸ ԵՎ ՀՈՒՆԳԱՐԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Հաշվի առնելով լրագրերի այն ամանձնահատկությունը, ըստ որի ընթացիկ դեպքերն արձանագրվում են տեղի ունենալու պահին, Մխիթարյաններն ամբողջ խորությամբ գիտակցում էին պարբերական մամուլի՝ իբրև պատմական սկզբնաղբյուրի նշանակությունը: Քանի որ 1848-1849 թթ. իրադարձություններն իրենց բարոյական և քաղաքական նշանակությամբ նրանք Իսլասարագոր էին համարում մեկ դարի պատմական անցուդարձի, «Եվրոպայի» խմբագրությունը հսկայական ուշադրություն էր դարձնում հրապարակվող նյութերի ճշմարտացիությանը: Կամովին ստանձնելով իրենց ապրած ժամանակաշրջանի պատմագրի դերը, Մխիթարյանները բազմիցս հայտարարել են, թե իրենց «լրագրի կնիքը» պետք է միմիայն ճշմարտությունը լինի: Ղեկավարվելով այս միակ սկզբունքով, նրանք քաղաքական դեպքերը նկարագրում էին եվրոպական տարբեր թերթերի նյութերը համադրելուց և փաստերի ճշմարտացիությունը կատարելապես ստուգելուց հետո միայն: Այս առումով, հետաքրքրական է նրանց խոստովանություններից մեկը ևս. «Եվրոպայի երևելի ազգերուն գրածներն իրարու հետ բաղդատելով և անաչառ ու ազատ դատաստան ընելով՝ ճշմարիտ ու հաստատուն տեսած լուրերնիս մեր հարգի ընթերցողներուն առջևը՝ *իբրև ստույգ դրիմք*» (ընդգծումը մերն է— Մ. Մ.)³:

Հիրավի, «Եվրոպայի» բազմաթիվ համարներում դրոշմված է խմբագրության քննախույզ աշխատանքի կնիքը, որն անկասկած բարձրացնում է թերթի՝ իբրև պատմական սկզբնաղբյուրի արժեքը: Այսպես, կասկածի ներքո առնելով այն հաղորդումը, թե պատերազմական գործողություններից մեկի ժամանակ հունգարացիները 350 զոհ են տվել, իսկ ավստրիա-

³ «Եվրոպա», 1849, թիվ 24, էջ 93:

ցիները՝ կիսով չափ, Մխիթարյաններն ավելացնում են, թե «այդպես է ասվում», բայց ստույգը՝ հայտնի չէ։ Մեկ այլ տեղ նրանք չափազանցություն են համարում Ներքին գործերի նախարարության օրգան «Լոյդի» այն հաղորդումը, ըստ որի հունգարացիք գյուղեր են այրել և բնակիչներին սպանել։ «Կրնա ըլլալ, — գրում է խմբագրությունը, — որ երևակայության առաջին տաքությամբը աս լուրերը քիչ մը չափազանց գրված ըլլան»⁴։ Միևնույն ձևով թերթը տարակարծություն է հայտնում իտալական «Բենսիերոյ» լրագրում հրապարակված մի լուրի առիթով, ըստ որի Վինդիշգրեցը վիրավորված էր, իսկ հունգարական և իտալական զորքերը մեծ հաջողությունների հասնելով՝ հասարակապետություն էին հռչակել։ Այդ տեղեկությունը «Եվրոպան» համարում է «բանաստեղծություն», որը բորբոքել է իտալական վառվռուն երևակայությունը⁵։

«Եվրոպա» շաբաթաթերթի արժեքը բարձրացնում է ևս մեկ հանգամանք։ Եվրոպական բազմաթիվ թերթերին զուգընթաց, Մխիթարյանները հաճախ օգտվում էին նաև հունգարական լրագրերից և սեփական լրատուների հաղորդած նյութերից։ Այսպես, խոսելով 1849 թ. հունիսին Տենեշվար բերդի մոտ տեղի ունեցած ճակատամարտում հունգարացիների կրած կորուստների մասին, թերթը գրում է. «մույնիսկ մաճառ լրագիրներում պատմածներեն այնպես կերևա, որ մաճառները շատ վնաս կրեր են»⁶։ «Եվրոպայի» խմբագրությունը 1849 թ. գարնանն օգտվում էր նաև հունգարական հեղափոխական կառավարության գրեթե պաշտոնական օրգան «Բյուլետենի» ("Közlöny") նյութերից։ Սեփական աղբյուրների մասին կան մի շարք հիշատակություններ, որոնցից բերենք երկու օրինակ։ 1848 թ. հրապարակելով լրագրերի իրարամերժ լուրերը Միլանի դեպքերի շուրջ, թերթը հայտնում է. «բայց հոկտեմբերի 14-ին շիտակ Միլանեն գրված նամակները և 15-ին, 16-ին եկած ճամբորդները հաստատեցին, որ Միլանը հանդարտ է»։ Արդեալի հետ կապն ընդհատված լինելու պատճառով, ինչպես գրում է խմբագրությունը, «լուրերը մեզի անուղղակի ճամբով, այսինքն Յաշեն կամ Պուբրեշեն՝ Լեմբերգի և կամ Կալացի վրայեն կուգան»։

⁴ Նույն տեղում, թիվ 17, էջ 65։

⁵ Նույն տեղում, թիվ 11, էջ 42։

⁶ Նույն տեղում, թիվ 24, էջ 99։

Բազմաթիվ լուրեր Մխիթարյանները հաղորդում են իբրև դեպքերի ականատես. այսպես, 1848 թ. հոկտեմբերյան նշանավոր մարտերից հետո նրանք գրում են. «Ասանկ երևելի դեպք մը պետք է, որ մանրամասն պատմենք, որուն շատ մասերը աչքով տեսած ենք»⁷:

Այս ամենից բացի հսկայական արժեք են ներկայացնում ժամանակին Ավստրիայում, Ֆրանսիայում, Յուգոսլավիայում հրապարակված Սահմանադրությունների բնագրերի, այլևայլ հրովարտակաների, կոչերի, քաղաքական խոշոր գործիչների նամակների և ճառերի հայերեն հրապարակումները: Այսպես, մեր խորին համոզմամբ, Մխիթարյանների «Եվրոպա» շաբաթաթերթը թե՛ հրատարակության վայրի, թե՛ հրատարակիչների աշխատանքի գիտական-ակադեմիական ոճի առումով, հայ հասարակական մտքի պատմության ուսումնասիրության համար ստանում է բացառիկ կարևոր սկզբնաղբյուրի արժեք:

Սակայն մինչ ծանոթությունը «Եվրոպայի» նյութերի հետ, մի քանի խոսք այն մասին, թե քաղաքական համոզմունքների ինչպիսի պրիզմայից էին Մխիթարյանները դիտում և մեկնաբանում շաբաթաթերթում զետեղվող նյութերը: Խոսելով ճշմարտության և անկողմնակալության չափանիշների մասին, նրանք հակված չէին դեպի պասսիվ անկողմնակալությունը: Ընդհակառակը, նրանք գտնում էին, որ պետք է կողմնակալ լինել օրենքի, կրոնի, ազգի շահերի և արդարության հարցերում: Այսպես, նրանք թեև գրում են, թե դեմ չեն ճշմարիտ ազատությանը և ոչ էլ պաշտպանում են բռնակալներին, բայց յուրովի են մեկնաբանում բռնակալություն և ազատություն հասկացողությունները: Նրանց հայացքով օրինավոր թագավորները բռնակալներ չեն և ոչ էլ նրանց կարգադրությունները՝ բարբարոսական: Մխիթարյանները մերժում են Եվրոպայում մեծ տարածում գտած կոմունիզմի ուսմունքը, գտնելով, որ եթե հասարակապետությունը Ֆրանսիայում կործանվի և կոմունիզմ հաստատվի, ապա ոչ միայն Ֆրանսիային, այլև աշխարհի մեծ մասին «սաստիկ ու մահացու հարված մը կը կլլա»: Ուստի, «Եվրոպայի» խմբագրությունը խորհուրդ է տալիս լինել շրջահայաց և ֆրանսիական ու իտալական լրագրերից ընտրել ճշմարիտ

⁷ Նույն տնդում, 1848, թիվ 45, էջ 185:

ազատություն ուսուցանող հողվածներ: Ըստ Մխիթարյանների, ճշմարիտ ազատությունը չէր ենթադրում անիշխանություն, այլ օրենքների և կառավարության առկայություն: Նրանք գտնում էին, որ ովքեր ազատություն չունենան, պետք է ջանան այն ստանալ, սակայն, «օրինավոր միջոցներով՝ զորոնք ուղիղ կրոնը մեզի կտրվցնե, զոր օրինակ տերության առջևը սիրելի ըլլալով, հավատարմություն ու մեծ արդյունք ցուցնելով, խնդրելով, համոզելով և այլն, ինչպես որ կըներ իռլանդացի Օ'գոնելը»⁸:

Եթե սոցիալական հեղափոխության հարցում Մխիթարյանների համոզմունքները կայուն են և որոշակի, ապա չի կարելի նույնն ասել ազգային-ազատագրական պայքարի վերաբերյալ արտահայտած նրանց կարծիքների մասին: Թերթի 1848 թ. վերջին համարներում (թիվ 48-52) նրանք գետեղել են «Հայրենասիրություն» հոդվածը, որը հիմնականում նպատակ ուներ ժամանակի պատերազմական և հեղափոխական շարժումների թոհուրեհում՝ հայերին կոչել հավատարմության՝ իշխող պետություններին: Հոդվածի մամրագնին ուսումնասիրությունը, սակայն, ցույց է տալիս խմբագրության հարցադրումների հակասականությունը: Ծավալուն այդ հոդվածի եզրափակիչ հատվածում միայն, խմբագրությունը դատապարտում է այն անհատներին, որոնք իրենց փառամոլության կամ այլ պատճառներով՝ հայրենասիրության պատրվակով զանազան չարիքների պատճառ են դառնում: Նման հայրենասիրությունը համարելով շինծու և վնասակար, հոդվածի հեղինակները հայերին հորդորում են հետևել իսկական հայրենասիրությանն՝ ու ազգը զերծ պահել կարծեցյալ վնասակար հայրենասիրությունից:

Մեր կարծիքով փառասեր անհատների մասին արված ակնարկը վերաբերում էր Լայոշ Կոշուտին, որին հետագայում նույնպես Մխիթարյանները քննադատում էին հայրենասիրության անվան ներքո հայրենիքը դեպի կործանում տանելու համար: Մեր տպավորությամբ Մխիթարյանները, մանավանդ 1848 թ., դեռևս հասու չէին կռահելու Կոշուտի անվան և գործի հետ կապված մեծ առեղծվածի գաղտնիքը: Ուստի, իրենց գնահատականներում նրանք չեն կարողանում որդեգրել որևէ

⁸ *Լույս տեղում, 1849, թիվ 31, էջ 132:*

հստակ սկզբունք. եթե երբեմն հանդիմանում են նրա այս կամ այն քայլը, ապա երբեմն էլ ընդգծում են նրա բուռն հայրենասիրությունը: Ավելին, գրեթե երկու տարի լուսաբանելով հունգարական հեղափոխությունը, նրանք ակնածանքով են արտահայտվում հունգարացիների ավանդական հայրենասիրության և խիզախության մասին: Ուշագրավ երևույթ է, անշուշտ, որ Մխիթարյաններն ընդգծված համակրանքով են արտահայտվում նաև հայազգի գորավար Էրնեստ Գիշի մասին, թեև նրան, իբրև հայրենակցի, կարող էին առավել ազատորեն կշտամբել:

Շատ հետաքրքրական է, որ «Հայրենասիրություն» հոդվածի առաջին չորս բաժիններում քննարկված հայրենասիրություն հասկացողությունն անկողմնակլորեն չի հակասում հունգարացիների վարքագծին: Ո՞վ կարող է կրել հայրենասեր անունը հարցին՝ հոդվածագիրը պատասխանում է. նա, ով բարձր է պահում հայրենիքի պատիվը, նպաստում նրա բարգավաճմանը՝ «չէ թե միայն երջանկության ատեն, ապա նաև թշվառության ժամանակ» չի բաժանվում իր հայրենակիցներից: Պերճախոս է հոդվածագրի գեղումներից մեկը. «Հայրենասեր մարդուն հատուկ եղած աս ամեն չքնաղ ու ցանկալի գործքերը, Հայրենասիրության առաջ բերած աս ամեն բարիքները տեսնելեն ետև՝ ո՞վ կրնա չաղաղակել. ո՞հ, գեղեցիկ առաքինություն, ազնվական հուր, սքանչելի՛ սեր. երանի՛ ազգին՝ որուն անդամները աս գեղեցիկ կապով իրարու հետ կապված են, երանի՛ ժողովրդյան՝ որուն որդկոցը սրտին մեջ աս ազնվական հուրը վառված է, երանի՛ աշխարհին՝ որուն բնակիչներուն մեջ աս չքնաղ առաքինությունը կտիրե»⁹:

Կյանքը հայրենիքին նվիրաբերել կարողանալու այս ամբողջ ներքողը չէր կարող ինքնանպատակ լինել: Մեր խորին համոզմամբ, տիրասիրական ու կրոնապաշտական սկզբունքների չափանիշներով կաշկանդված «Եվրոպայի» խմբագրությունը թեև մի կողմից հայերին հնազանդության երկոչում, մյուս կողմից՝ իրադարձությունների բովում ջանում էր իմաստավորել հունգարական հեղափոխական շարժումը, որը եթե չէր համատեղվում տիրասիրության բարոյականության հետ, բայց և խորհրդանշում էր այն ժողովրդի բարոյական նկարագիրը,

⁹ Նույն տեղում, 1848, թիվ 48, էջ 200:

որի զավակների սրտում այրվում էր Մխիթարյանների ջատագոված հայրենասիրության «ազնվական հուրը»: Հետագայում ևս, Մխիթարյանների ազնիվ հայրենասիրությունը փորձում էր հաղթահարել տիրասիրական այն հորդորները, որոնք 1848 թ. վերջերին նրանք ձևակերպում են իրենց հողվածում իբրև համերաշխության տուրք այն կոչին, որն ավստրիական եպիսկոպոսների և արքեպիսկոպոսների՝ Վիեննայի հավաքի մասնակիցները հղել էին ժողովրդին:

Ամեն դեպքում, սակայն, «Եվրոպայի» խմբագիրներն իրենց շաբաթաթերթում հսկայական փաստական նյութ են հրապարակել ինչպես եվրոպական հեղափոխական շարժումների, այնպես էլ հունգարական հեղափոխության մասին, մեծ ծառայություն մատուցելով հայ պատմագիտությանը:

Քանի որ «Եվրոպա» շաբաթաթերթը հրատարակվել է 1847-1863 թթ., խմբագրությունն ուստի ամենայն բարեխղճությամբ լուսաբանում է եվրոպական երկրների հեղափոխական իրադարձությունները, սկզբնապես դատապարտելով այդ շարժումները, իսկ գրաքննական ազատություններից հետո՝ ավելի ու ավելի անկաշկանդ շարադրելով տեղի ունեցող անցքերը: Այսպես, շաբաթաթերթը հանգամանորեն ներկայացնում է իտալական շարժումները, դրանք մեկնաբանում իտալացիների «կույր ազգասիրությամբ» և «անսամձ ազատության» ոգով, որը նրանց մղում է «Երիտասարդ Իտալիա» ընկերության ղեկավարությամբ «ամեն օրինավոր իշխանություն տակնուվրա ընել, նոր կարգ, նոր իտալական դաշնակցություն մը դնել, կամ թե ինչպես իրենք կկարծեն՝ քաղաքականության կողմանե մեռած Իտալիայեն նոր Իտալիա մը ծնանել»¹⁰: Այս օրերին թերթը շարադրում է Պադուայի համալսարանի ուսանողների խռովության և այն ճնշելու պատմությունը, ներկայացնում Պալերմոյի ապստամբության հետ կապված նյութերը, խոսում նաև Իտալիայի միավորման ծրագրի, Լոմբարդիայի, Սարդինիայի, Տոսկանայի խմորումների, «երբեմն քաղցրությամբ, երբեմն սաստկությամբ»՝ ավստրիական կառավարության ձեռնարկած միջոցառումների մասին և այլն:

1848 թ. փետրվարին ֆրանսիական հեղափոխությանը

¹⁰ *Նույն տեղում, 1847, թիվ 13, էջ 49:*

վերաբերող լուրերը զբաղեցնում են շաբաթաթերթի քաղաքական բաժնի սյունակները: «Քանի մը օրվան՝ մեջ Գաղղիա եղած սոսկալի դեպքերը ստորագրելու մարդուն գրիչը առաջ չերթար», – գրում է «Եվրոպայի» խմբագրությունը և ամենայն մանրամասնությամբ նկարագրում և՛ Լուի Ֆիլիպի հրաժարականը գահից, և՛ ժողովրդական զանգվածների շարժումը: Այնուհետև՝ տպագրվում են ֆրանսիական հանրապետության առաջին հայտարարություններն ու հրովարտակները, ավելի ուշ՝ Սահմանադրության բնագիրը¹¹:

Հետագայում, ողջ 1848 թ. ընթացքում, «Եվրոպան» լուրեր է հաղորդում ավստրիացիների հանդեպ իտալական ժողովրդի տարած հաղթանակի, մոլդավացիների և չեխերի խռովությունների, հունիսյան արյունահեղության մանրամասների մասին՝ քաղված ֆրանսիական թերթերից:

1848 թ. սկզբներին իրադարձությունները զարգանում էին մեծ արագությամբ: «Եվրոպայի» խմբագրությունը, արդեն ակամատեսի աչքով, ներկայացնում է «իդ տանը»՝ Վիեննայում սկսված շարժումների պատկերը: Չսպասելով հաջորդ համարի հրատարակությանը, մարտի 14-ին տպագրվող 11-րդ համարի հետ խմբագրությունն ընթերցողներին է ուղարկում մի փոքրիկ թերթիկ-հավելված, որով ծանուցում է Վիեննայում սկսված խռովությունների լուրը և այն նորությունը, որ «բարձրապատիվ Մեղդեռնիկ իշխանը իր պաշտոնը կայսեր ձեռքը հանձնել է»: Այնուհետև՝ հաջորդ համարում մի հանգամանալից տեսությամբ ներկայացվում է քաղաքական այն իրավիճակը, որը մախորդել էր մարտի 13-ի դեպքերին (ժողովուրդը պահանջում է Սահմանադրություն ընդունել, դեմոկրատացնել պետական հաստատությունները, ժողովրդի ներկայացուցիչներին ևս ընտրել Ավագների ժողովի անդամ, ստեղծել ազգային պահապան զորք, վերացնել գրաքննությունը և այլն):

Վիեննայի ուսանողների հայտնի հուզումներին հաջորդում է մարտի 15-ի ազգային պահապան զորքի ստեղծումը: Նույն օրը Վիեննա հասած հունգարական խորհրդարանի պատգամավորները ներկայացնում են իրենց պահանջները: Կայսրը

¹¹ Ֆրանսիայում տեղի ունեցող քաղաքական անցքերի նկարագրությանը նվիրված 11-րդ համարը լույս է ընծայվում վեց էջով:

երեկոյան հրապարակած հրովարտակով ողջ պետության համար Սահմանադրություն է խոստանում¹²: «Եվրոպան» փորձում է բացատրել հեղափոխական շարժումների պատճառները: «Եվրոպայի հիմնական խռովություններուն մեկ պատճառն ալ մարդիկներու շատնալն է, որոնց ոչ երկրին բերքը հերիք կըլլա, և ոչ ալ ապրուստնին հոգալու համար բավական գործք, զբաղմունք ու վաստակ կգտնվի: Անոր համար աս շատցած անգործ գործավորները ամեն տեղ ոտք կ'ելլեն, կժողվուին, և իրենց կերակուրը ճարելու մտքով հուսահատությամբ ու հանդգնությամբ զանազան չարիքներու ձեռք կգարեն»¹³:

Այս ամենից Մխիթարյաններն առանձնացնում են հունգարական հարցը: Թերթը հաղորդում է, որ ներկա ճգնաժամի պահին Յունգարիան ևս հուզվում է: «Բեշթի բնակիչները նոր տրված տպագրության օրենքը առեր հրապարակավ այրեր են: ... Ժողովուրդը միշտ տփգոհ է, ինչու որ աս օրենքը շատ խիստ է, ու վերջին խռովությունները պատահելեն ու տպագրության ազատություն հրատարակելեն վեց շաբաթ առաջ հին գաղափարով շինված է, կըսեն, որն որ պաշտոնյաները հիմա պահել տալ կուզեն»¹⁴: Յատուկ ուշադրություն է նվիրվում Յունգարիայում պաշտոնյաների ժողովի ստեղծմանը (որտեղ ի թիվս այլ նախարարների նշանակվում է «Լյուդովիգոս Գոշուդ՝ պաշտոնյա ելևմտից»):

Յունգարացի երիտասարդները գոհ ձեռք բերած ազատություններով, ապրիլի 17-ին մեկնում են Վիեննա և հանդիսավոր պայմաններում իրենց ազգային դրոշը նվիրելով Վիեննայի քաղաքացիներին, ողջույնի խոսքում, ի դեպ, շեշտում. «Ազատությունն է, որ զմեզ ձեզի եղբայր ըրավ»¹⁵:

«Եվրոպան» հաղորդում է Կրակովի բուռն մարտերին առնչվող լուրերը և միանգամայն անկողմնակալորեն ընդգծում, որ հազիվ թե լեհերը կռիվը դադարեցնեն, «ինչու որ մեծեն մինչև պստիկ, նույնիսկ եկեղեցականներն ալ օտար լուծը վրաներենն

¹² «Եվրոպա» շաբաթաթերթի 19-րդ համարում հրապարակվում է Ավստրիական կայսրության հռչակած Սահմանադրության բնագիրը (էջ 80):

¹³ «Եվրոպա», 1848, թիվ 14, էջ 57:

¹⁴ Նույն տեղում:

¹⁵ Նույն տեղում, թիվ 17, էջ 69:

նետելու խելքով են, ու ավստրիացվոց դեմ սաստիկ ատելութիւն մ'ունին»¹⁶:

Այնուհետև՝ թերթը նկարագրում է Վիեննայի մայիսյան շարժումները, ուսանողության բուռն ելույթները, կայսրական ընտանիքի փախուստը Ինսբրուկ, հաղորդում ձերբակալութիւնների, բռնութիւնների, մամուլի ազատութիւնը սահմանափակելու վերաբերյալ լուրերը: «Եվրոպայի» խմբագրութիւնն ականատեսի լավատեղյակութեամբ ներկայացնում է մայիսյան հուզումները Վիեննայում: Կայսրի փախուստից հետո կառավարութիւնը փորձում է ցրել ուսանողական (ակադեմիական) լեզեոնը: Երբ զենքերը հավաքելու համար զինվորները պաշարում են համալսարանը, ժողովուրդը հավաքվում է համալսարանի շուրջը և սկսում բարիկադներ կառուցել: Ներկաներից մեկը վիրավորվում է. «Ամեն կողմանէ զենքի կանչելու թմբուկներ կհնչեին, հարձակման զանգակներ կզարնվեին ու զարմանալի բան մըն էր տեսնելը, որ մարդիկ, կանայք, տղաք պատնեշներ կշինեին ու տներուն դստիկոնները քարեր կժողովեին: Ամեն մեկ տուն բերդ մը եղած էր»: Զինվորներն ավելի սակավաթիվ լինելով, չեն կարողանում խանգարել նրանց. «բանվորները, ազգային պահապաններն ու ուսանողները քիչ ատենի մեջ բոլոր քաղքին փողոցներուն քարերը հանեցին ու բարձր պատնեշներ շինեցին, քաղքին դռներն ալ առին»¹⁷: Ժամը 12-ին պաշարումը վերացվում է: Պաշտոնյաների ժողովը համոզվելով, որ «այնչափ բազմության դեմ չկրնար ելլել՝ ժամը 12-ին հարկադրեցաւ հրամանը ետ կանչել, ուսանողներուն լեզեոնը առաջինին պես պահել»: Ժողովուրդը չհավատալով տրված խոստումներին, շարունակում է ավելացնել բարիկադների թիվը: Ապստամբներն ազատում են բանտարկված խմբագիրներ Դեֆներին և Դաֆորային, սակայն, չեն դիպչում որևէ անհատի ունեցվածքի: Արվարձաններուն խաղաղ էր («ուր որ մեր վանքն ալ կգտնվի»), «բանվորները ամենևին մեկուն ստացվածքին վնաս չտվին, ամեն կողմ թղթեր փակուցած էին, որ մասնավորներուն ստացվածքին ձեռք պիտ'որ չդիպցուի. և ստուգիվ և ոչ մեկ տեղ մը հափշտակութիւն

¹⁶ Նույն տեղում, թիվ 19, էջ 81:

¹⁷ Նույն տեղում, թիվ 22, էջ 94:

կամ ավերում եղավ»¹⁸: Վիեննայում ստացվում է կայսրի հայտարարությունը, «որն որ այնչափ սիրով չընդունվեցավ»: Կայսրը բացատրում է իր փախուստի հանգամանքները և խոստանում կատարել ժողովրդի բաղձանքները՝ խաղաղ բանակցությունների ճանապարհով: Թերթը սուր դիտողականություն է հանդես բերում գրելով. «թե՛ հասարակ ժողովուրդը, թե՛ ազգային պահապանները, և թե՛ ուսանողները (գուցե արտաքուստ) կառավարության հետ սրտանց կապված, անոր հրամանները սիրով կընդունեն»:

Դրությունը շիկանում է նաև Յունգարիայում: Պեշտի լրագրերի մայիսի 12-ի նյութերի հիման վրա «Եվրոպան» պատմում է ուսանողական հուզումների, պաշտոնատար անձանց տների մոտ «կատվային» համերգների մասին: Նշվում է մասնավորապես մայիսի 10-ի ցույցի մասին, երբ 400 հոգի հավաքվում են Բուդայի զորքերի ընդհանուր հրամանատար Լեդերերի տան մոտ և սուլում, գոռում, մլավում, որպեսզի նրան ստիպեն հեռանալ: Հեծելազոր և հետևակ զորքերը հարձակվում են ցուցարարների վրա, ոմանք վիրավորվում են և ժողովուրդը գրգռված այդ հարձակումից, ուռշում է զենքով վրեժխնդիր լինել: Մայիսի 12-ին մի հատուկ պատգամավորություն փոխարքայից պահանջում է երկրից հեռացնել Լեդերերին: Վեջինս փախչում է Վիեննա:

Այս օրերին հունգարացիներին տագնապի մեջ էին պահում խորվաթական ընդվզումների մասին մայրաքաղաք հասնող լուրերը: Արդեն մայիսի 16-ին թերթը հիշատակում է հունգարա-խորվաթական հակասությունների լուրը. «Հունգարացիք, ինչպես որ հայտնի է, աս մոտերս իրենց ազգայնությունը ամեն կերպով հաստատեցին. լեզուն ամեն բանի մեջ՝ մաճառերեն, պաշտոնատերները՝ բոլոր մաճառ, զատ խորհրդարան, իրենց արժանքովը ստակ կոխել և այլն: Բայց ասով զոհ չեղան, հապա ուզեցին, որ Հունգարիայի և խռուատներուն երկրին մեջ եղող

¹⁸ Նույն տեղում: Շատ հետաքրքրական է, որ հոկտեմբերյան հուզումների օրերին նույնպես չարժման մասնակիցների կողմից որևէ անկարգություն չի նկատվում. «քաղքին բնակիչները որչափ որ իրարու հետ ինկած ալ էին մե, ամենևին եկեղեցականաց չդպան և մեզի հետ սիրով կապված էին» (տես նույն տեղում, թիվ 48, էջ 197):

սլավյան ցեղերն ալ՝ ինչպես սլովակները, խռուատները, ռուսնիակները և այլն, իրենց հետ և իրենց խորհրդարանին հետ միացած ըլլալով՝ ժողովքին մեջ անոնց մաճառերեն խոսիլ տան և իբրև թե իրենք անոնց վրա տիրող ազգ մը ձևանան»¹⁹։ Այդ ազգերն ընդդիմանում են։ Նրանք ցանկանում են անջատվել Յունգարիայից։ Շուտով ավստրիական կառավարության հրահրումով սկսվում են խորվաթա-սերբական ընդհարումները հունգարացիների հետ, հանգամանք, որը «Եվրոպայի» մեկնաբանությամբ, անդրադառնում է հունգարա-ավստրիական փոխհարաբերությունների հետագա ընթացքի վրա («հունգարացիք, որոնք որ Ավստրիայեն զատվիլ կուզեին, խռուատներուն իրենց դեմ ապստամբելովը՝ ստիպվեցան Ավստրիայի խոնարհիլ»)։

Հուլիսի 11-ին պատգամավորների ժողովում Կոշուտը երկժամյա ելույթ է ունենում և կոչ անում ելնել խորվաթների դեմ։ Նա խոստանում է 200.000 զորք ուղքի հանել հայրենիքի պաշտպանության համար։ Թերթը պատմում է և հետագա իրադարձությունների, խորվաթա-հունգարական պատերազմական միջադեպը վերացնելու նպատակով տեղի ունեցող բանակցությունների, ավստրիական խորհրդարանում այդ հարցի քննարկման մասին։ Այն բանից հետո, երբ պան Ելաչիչն օգոստոսի 31-ին գրավում է Ֆիումեն, սեպտեմբերի 4-ին Կոշուտի առաջարկով որոշվում է մի պատգամավորություն ուղարկել Վիեննա՝ բանակցություններն ավարտելու, հունգարական բանակի վերաբերյալ ընդունված որոշումները հաստատել տալու և կայսրին Պեշտ հրավիրելու համար։ «Եվրոպան» պատմում է հունգարական խորհրդարանի 133 պատգամավորների Վիեննա կատարած այցի և նրանց պահանջների հետ կապված միջադեպի մասին²⁰։ Կայսրը չի ընդառաջում հունգարացիներին, գտնելով, որ նրանց պահանջների ոճը հանդուգն է։ «Կայսեր աս հունգարացվոց ուզածները չկատարելուն պատճառն ան է, որ ասոնց մեկ մասը չափե դուրս ազգային ոգով վառվելով՝ Ավստրիայի հպատակութենեն բոլորովին բաժնվիլ, Յունգարիայի մեջ եղած ազգերը բոլորն ալ

¹⁹ Նույն տեղում, թիվ 20, էջ 84։

²⁰ Պատմագիտական գրականության մեջ պատգամավորության թիվը նվազեցվում է 125-ի։ Տե՛ս P. A. Авербух, Революция и национально-освободительная борьба в Венгрии. 1848-1849, М., 1965, с. 162.

նվաճել հունգարացի ընել, անոնց ազգայնությունն ու լեզուն խափանել, և այսպես, Եվրոպայի մեջ մեկ նոր ինքնիշխան Յունգարիայի թագավորություն մը հաստատել կուզեն»²¹:


Այնուհետև՝ լրագիրը շարունակում է. «Յունգարացոց պատգամավորները կայսեր պատասխանին վրա նեղանալով՝ վիեննայեն գացած ատեննին կարմիր դրոշ բացած ու գլուխին կարմիր փետուր խոթած էին, որ արյուն ու պատերազմ կնշանակե»: Պեշտում իրարանցում է սկսվում: Բատիանին և նախարարները հրաժարական են տալիս: Կոշուտը և Ներքին գործերի նախարար Սեմերեն հայտնում են, որ պահպանում են իրենց պաշտոնները. սակայն, փոխարքան հանձնարարում է Բատիանիին նոր ընտրությունների համար պաշտոնյաներ որոնել: Մինչդեռ Յունգարիայում ժողովուրդը հուզումների մեջ էր և նոր կառավարության ստեղծման խնդիրներն էր քննարկում, սեպտեմբերի 11-ին Ելաչիչի բանակն առաջ էր ընթանում. կռիվը սկսվել էր: «Եվրոպայի» խմբագրությունը համառոտակի հաղորդում է Ելաչիչի երեք հայտարարությունների բովանդակությունը, որոնք նա հրապարակել էր Յունգարիա մտնելու օրը («ինչու որ Յունգարիայի մեջ մոտերս պատահած դեպքերուն ամփոփ հիշատակությունն է, ու կարողացողներուն լույս մը կրնա տալ»)²²: Այնուհետև՝ նկարագրվում են Գիշ գորավարի մղած մարտերը Պերլաշ քաղաքում: Նա հետ է մղում սերբերին, որոնք նվաճել էին քաղաքը: Խմբագրությունը մասնավորապես կանգ է առնում այն դրամատիկ իրողության վրա, որ սերբերը գրավում են Գիշ գորավարի կալվածքը և պալատը, իսկ նա ստիպված է լինում գնդակոծել իր սեփական պալատն ու ծանր կորուստներ կրելով նահանջել²³:

Թերթում արդեն հաճախակի է նկատվում Կոշուտի անունը: Երբ սկսվում են ազատագրական կռիվները, «Եվրոպան» հայտարարում է. «Պ. Գոշութ, որն որ միայն իր լեզուավը մաճառներուն Ավստրիայեն գրեթե բաժնվելուն պատճառ եղած է, տեսնելով, որ ալ իր ուզածը առաջ տանելու ճար չկա, պաշտոնյաներեն իշխանություն առավ, որ ինք հայրենասերները

²¹ «Եվրոպա», 1848, թիվ 38, էջ 160:

²² Նույն տեղում:

²³ Նույն տեղում, թիվ 39, էջ 164:



գլուխը ժողվելով՝ թշնամվույն դեմ երթա, ու արդեն շատերը իրեն հետ կմիանան»²⁴:

Պատերազմական գործողությունները տեղի են ունենում Տեյաչայում, սերբերն ավերում են Բանատը. «Ողորմելի Պանադը անապատ դարձավ,– գրում է թերթը,– արտերն ու դաշտերը ապականեցան և հունձքերնին այրեցավ: Ան բերրի Պանադը, որ Ավստրիայի համբարանոցն էր, հիմա աղքատացավ և ագարակները երեսի վրա մնացին: Գալ տարվան շատ դժբախտ գուշակություններ կան: Սով, սղություն, ընչից հափշտակություն ամենը կվախցնե»²⁵: Խմբագրությունը պատճառը համարում է հունգարացիների «հանդուգն պահանջողությունը» և սերբերի մեծերից մի քանիսի վարքագիծը, որոնց կամքով սերբական դպրոցների և եկեղեցիների մեջ հունգարերեն լեզու էր մտցվել, որը և երկպառակությունների տեղիք էր տվել:

«Եվրոպան» առանձնահատուկ ուշադրություն է նվիրել Լամբերգի սպանությանը: Ավստրիական կայսրը՝ բանակների հրամանատարի լայն իրավասություններով վերջինիս ուղարկել էր Յունգարիա՝ հեղափոխական շարժումները երկրում ճնշելու համար: Լամբերգի միջոցով կայսրը միաժամանակ ուղարկում է հունգարական խորհրդարանը փակելու կարգադրությունը: Բատիանին, որ մինչ նրա գալը ծանոթ էր ուղարկվող փաստաթղթերի բովանդակությանը, զորքի հետ խորհրդակցելու նպատակով մեկնում է գործող բանակ, կանխապես կարգադրելով պատգամավորների խորհրդին՝ որևէ որոշում չկայացնել:

«Բայց Պաթիանին ճամբա ելլելուն պես՝ արմատական պատգամավորները մարդ խրկեցին, որ Գոշուքը կանչեն, որն որ գեղերը գացած էր բնակիչները զենքի գրգռելու: Գոշուք երկաթի ճամբով դարձավ ու գիշերը 12-ին ժողովք ընելով՝ ինքը, Մատարաշ և կողմնակիցները (որոնք խորհրդարանին մեջ շատվոր կողմն են), կայսեր հրովարտակը ապօրինավոր ու Լենպերկ կոմսն ու անոր հնազանդողները մատնիչ հայրենյաց հրատարակեցին, ու բանակը Պաթիանին մարդ խրկեցին խորհրդարանին աս որոշումն իմացնելու»²⁶:

²⁴ Նույն տեղում, թիվ 40, էջ 168:

²⁵ Նույն տեղում:

²⁶ Նույն տեղում, թիվ 41, էջ 172:

Բատիանին զորավարների հետ խորհրդակցելով, լրաբերի միջոցով կարգադրում է խորհրդարանին՝ անսալ կայսրական հրամանին:

Սեպտեմբերի 28-ին, երբ Լամբերգը հասնում է մայրաքաղաք, «Գոշուֆ, որ մաճառներուն գլուխ վերցնելուն գլխավոր պատճառն է, անոր հասնիլն իմանալով՝ պատգամավորաց ժողովույն մեջ բեմն ելավ խոսելու, ու կայսերական գործակալին հասնիլն իմացնելով՝ *հիմա ժամանակն է, ըստվ, հարկավոր միջոցներն ի գործ դնելու* (ընդգծումը մերն է— Մ. Մ.): Աս խոսքիս վրա Դովիաննես Պալոկ պատգամավորը վերնատուններու մեջ նստողներեն խել մը բազմություն գլուխը ժողված, սրահեն դուրս ելավ, նույնպես Սեմպեշի անունով ուրիշ պատգամավոր մը ոտք ելավ, ու ժողովականներեն զենք խնդրեց. և իմանալով, որ Դանուբ գետին քով եղած նավերուն մեջ մանգաղներ կան, զնաց խել մը մարդիկ անոնցմով զինավորեց, ու անոնցմով Բեշթին ու Օֆընին մեջ եղած կամրջին վրա հարձակեցավ, ան մտքով, որ Լամպերկը բռնե ու խորհրդարան բերե: Միևնույն ատեն Լամպերկ կոմսն ալ կառք մտած կամրջին վրա աս կատաղիներուն պատահեցավ: Լուկով անուևով ուսանողին մեկը զինքը ճանչցավ, սուրը հանեց՝ կառքին մեջ սաստիկ վիրավորեց: Երբ որ ասանկ վիրավորած կառքեն դուրս քաշեցին, կոմսը խնդրեց, որ զինքը գոնե Գոշուֆին տանին, բայց իսկույն սուրերով ու շամփուրներով (շիշերով) զինքը մեռցուցին, մանգաղներով ասդին անդին կտոր կտոր ըրին. ասով ալ գոհ չըլլալով, մերկացուցին ու երկայն ատեն փողոցներու մեջ քաշկռտեցին: Երիտասարդ մը խորհրդարան վազեց, ու հաղթանակով արյամբ թաթխած սուրը ցուցնելուն՝ վերնատունները ուրախության աղաղակներով սկսան պոռալ, պոռչըտալ»²⁷:

Հաջորդող իրադարձությունները հանրահայտ են: Հունգարական խորհրդարանը լուծարվում է և նրա ընդունած որոշումներն անվավեր են ճանաչվում, երկրում հայտարարվում է պատերազմական դրություն, Ելաչիչը մշանակվում է ոչ միայն ընդհանուր զորահրամանատար, այլև ստանում կայսրի տեղակալի անսահմանափակ լիազորություններ: Մխիթարյանները

²⁷ Երևյալ տեղում:

խիստ դատապարտում են կատարվածը. «Աս նախատական գործքը մաճառներուն վրա անջնջելի պիտ'որ մնա, որուն օրենսդիր ժողովքը ասանկ ոճիրի մը գործիք եղավ: Ասոր պատճառն ուրիշ բան չէ, բայց եթե ապականյալ բարքը. ան ժողովուրդը, որն որ մարդկություն ու բարոյական իմաստություն չճանչնար, իշխանության ալ արժանի չէ»²⁸:

Մխիթարյաններից սպասել հեղափոխական իրադարձությունների այլ գնահատական, քան այն, ինչ տրված է նրանց կողմից, ճիշտ չէր լինի: Հասկանալի է, սակայն, որ գնահատականների մեջ չէ, որ պետք է փնտրել «Եվրոպայի» մատուցած ծառայության արժեքը, այլ այն բանի, որ հրատարակվելով հեղափոխության բուն օջախում, թերթը հայ ընթերցողներին ծանոթացնում էր եվրոպական երկրներում ծավալվող հեղափոխական շարժումների հետ, միաժամանակ այլ լրագրերի հետ մեկտեղ սկզբնաղբյուրի դեր կատարում ժամանակի հայ պարբերականների համար:

Այս առումով, «Եվրոպա» շաբաթաթերթը բացառիկ լավատեղյակությամբ է լուսաբանել 1848 թ. հոկտեմբերի իրադարձությունները Վիեննայում: Լինելով դեպքերի ականատեսը, խմբագրությունը մեծարժեք նկարագրություններով անվերապահորեն հարստացրել է պաշտոնական հաղորդագրությունները: Մխիթարյանները Վիեննայի դեպքերը դիտում են եվրոպական հեղափոխությունների ընդհանուր հետմախորքի վրա. սկսած մարտից, գրում են նրանք, Եվրոպայում ամենուր խռովություններ են տեղի ունենում. հունիսին՝ «Փարիզի մեջ հազարավոր մեռնողներուն արյունը դեռ ամենքը կսոսկացնե: Անցած ամսույն 17-ին ու 18-ին Ֆրանկֆուրտի փողոցները արյամբ ներկվեցան, նույն օրերը Պերլին Պա'տլնի դքսության, Վյուրդենբերկի թագավորության մեջ խռովություններ ելան, ու Գոլոնիա քաղաք պատնեշներ շինվեցան: ... Սակայն անցած շաբթու ամսույս 6-ին առաջագույն պատրաստված խռովությունը իր բովանդակ դաժանությամբը դուրս ելավ, որն որ որչափ որ կարելի է ստույգ աղբյուրներեն առնելով կպատմենք»²⁹:

Հոկտեմբերի 6-ին, երբ Ռազմական նախարար Լատուրը

²⁸ Նույն տեղում:

²⁹ Նույն տեղում, էջ 171:

մի քանի գնդի կարգադրում է մեկնել Հունգարիա՝ ճնշելու հեղափոխական շարժումը, զինվորները հրաժարվում են կատարել այդ հրամանը: Նախարարը նոր գորախումբ է ուղարկում նրանց դեմ, որը քաղաքից դուրս, Թաբոր կամրջի վրա ընդհարվում է առաջինների հետ: Այս գնդերը ուսանողական լեգեոնի և ազգային պահապան գնդի հետ մեկտեղ, դիմադրում են նոր եկած զորքին: Հրամանատարի կարգադրությամբ կրակ է բացվում, բայց կայսրական զորքը պարտվում է: Երկու կողմից սպանվում են իննսուն հոգի: Այդ պահին քաղաքում հնչում են զանգերը և ժողովուրդը հավաքվում է: Խոսվում է Ռազմական նախարարին բռնելու մասին: «Խառնիճադանճ բազմությունը գնաց պաշտոնեին պալատը պաշարեց ու կուզեր վեր ելլել ու զինքը բռնել ու սպաննել: Վարի սակավաթիվ զինվորները չկրցան դեմ դնել. խռովարարները ներս մտան պալատին մեջ բնտռեցին, ու ինչպես կըսվի վերնահարկին մեջ գտնելով՝ վար բերին, չարաչար ու անգթությամբ սպաննեցին ու դիակը հրապարակին մեջ կանթեղի մը ցցեն վար կախեցին: Գացին նաև զինանոցին վրա հարձակեցան, ու սկսան ներսեն դրսեն մինչև առտու թնդանոթներով պատերազմիլ»³⁰: Առավոտյան զինանոցի դռները բացվում են. կայսրական ընտանիքը երկրորդ անգամ է փախչում Վիեննայից: Ժողովուրդը հոկտեմբերի յոթին մտնում է զինանոց և այն ավերում. բոլորը մեծից փոքր զինվում են: Կայսրական զորքը քաղաքից հեռանալով, դիրքավորվում է Բելվեդեր և Շվարցենբերգ պարտեզներում: Հրապարակվում է կայսրի հայտարարությունը, բայց այն «խռովարարներուն վրա ազդեցություն մը չըրավ: Աս անգամուն կայսեր հեռանալը առջի անգամուլանին չնմանիր, թեպետ հասարակապետություն հրատարակող չեղավ, ու ամենուն գեթ դրսանց ուզածը Սահմանադրություն է, բայց ամեն մարդ կարծելով, որ հին վիճակը պիտ'որ դարձվի, զենք կառնու ու բոլոր բանվորներու հետ միաբանած՝ պատերազմելու կպատրաստվի: Ամսույս յոթեն ետքը քաղքին դեմքը քանի գնաց փոխվեցավ, հանդարտ քաղաքացիք քաղաքը կթողուն, գեղերը կցրվին, ամենեկին ո'չ գործք, ո'չ վաճառականություն կտեսնվի: Քաղաքը, խանութ-

³⁰ Նույն տեղում:

ները բոլոր գոցված են, ու զինվորյալ մարդոցմե զատ մարդ չտեսնվիր, որոնք ըստ մեծի մասին ստորին կարգե են»³¹:

Ելաչիչը լսելով Լատուրի սպանության և Վիեննայում տեղի ունեցածի դեպքերի մասին, իր գործով շարժվում է դեպի Վիեննա, ահաբեկելով ժողովրդին: Այս օրերին տեղի ունեցած անցքերի մասին Մխիթարյանները գրում են. «Քանի մը օր առաջ տեսնելու բան էր համալսարանին բոլորտիքը, ան հրացաններու սվիններուն փայլիւր, սուրերուն շողալը, ու այլևայլ գուներով փետուրները գերմանացի (գալապրացի) գլխարկներուն վրա, ան մահը անարգելու խոսակցութիւնները, որոնք Վիեննայի համալսարանին քաջ աշկերտներուն մեջ կըլլաին»³²:

Ուսանողությանն ու ազգային պահապան գորքերին հավասարակշռութիւնից հանում է կայսրի՝ հոկտեմբերի 16-ի հրովարտակը, որով սահմանափակվում էր «անսանձ ու չարաչար գործածված տպագրութիւնը»: Կայսրը սպառնում էր նաև պատժել Լամբերգին ու Լատուրին սպանողներին և զենքով ճնշել ապստամբութիւնը: Չնայած այս սպառնալիքներին, ապստամբները բոլոր քաղաքացիներին զենքի են կոչում, կապեր հաստատում գավառների և հունգարացիների հետ, Մեսսենհաուզերի ու Բենի հրամանատարութեան ներքո սպասում վերջիններիս («անոնք անդիեն, մենք ասդիեն պիտ'որ զարնենք», ասում են նրանք):

«Իրավամբ կրնանք ըսել, որ աս պատերազմը, սահմանադրականներու ու արմատականներու (այսինքն կայսրութիւնը քակել ուզողներու) մեջ պատերազմ էր»,— գրում է թերթը³³: Մեկ այլ առիթով, «Եվրոպայի» խմբագրութիւնն ապստամբութեան պատճառ է համարում հունգարացիներին, որոնք լցվելով Վիեննա, «անանկ հրդեհի մը պատճառ եղան, որ բուն տանը մեջն է, ու գուցե ասկէ կախում ունի Ավստրիայի վիճակը»³⁴:

Այնուհետև՝ նկարագրվում է Վիեննայի համար մղվող ճակատամարտը. հոկտեմբերի 28-ին քաղաքը ռմբակոծվում է, ապստամբներն ամենուր թնդանոթներ են տեղադրում, նրանք

³¹ *Նույն տեղում, թիվ 42, էջ 175:*

³² *Նույն տեղում, թիվ 43, էջ 179:*

³³ *Նույն տեղում, թիվ 44, էջ 183:*

³⁴ *Նույն տեղում, թիվ 42, էջ 176:*

«Վինտիշկրեցն ու բոլոր կայսրական զորքը կարհամարհեին, «սև դեղին» կանչելով, որն որ աս օրերս արհամարհելու անուն մը եղած էր»: Այս օրերին բոլոր տղամարդիկ պարտադիր կերպով զենք էին առնում կայսրի դեմ («քանի մը պստիկ խմբով պատերազմող կանայք ալ պակաս չէին»), «ուսանողներն աս ժողոված զորքին զորապետներն էին»:

Հոկտեմբերի 29-ին ապստամբները բանակցում են Վինդիշգրեցի հետ և պատրաստվում անձնատուր լինել, երբ ստանում են հունգարացիների մոտենալու լուրը. «ասոր վրա ամեն բան կերպարանափոխ եղավ. զենքերնին թող տվողներն ալ վազեցին զենք առին»: Սակայն նրանք շուտով հուսախաբ են լինում, որովհետև Վինդիշգրեցը շտապել էր խորվաթներին ուղարկել Վիեննա աճապարող հունգարացիների դեմ: Հունգարացիները, որոնք երկու անգամ մարտի են բռնվում, «շատ թնդանոթ ունեին և աղեկ գործածեցին», բայց պարտվում են ու նահանջում մինչև հունգարական սահմանը: «Աս մաճառ բանակին գլուխը Գոշուքը կըկենար, որն որ պիտի գար ու Վիեննան պաշարմանն ազատեր, ինչպես որ անգամ մը Սոպիեսքի լեռ թագավորը Գարա Սուստաֆային զորքեն ազատած էր, բայց աս դյուցազնը կառքին անիվները կոտրելով՝ հազիվ կրցավ փախչիլ»: Ավստրիացիները շարունակում էին սպասել հունգարացիներին. «թեպետ թնդանոթներուն ծայնը հեռանալուն համար մաճառներուն հաղթվիլն ու վնդվիլը հայտնի էր և ս. Ստեփանոսին աշտարակեն ալ երևցավ,— գրում է թերթը,— բայց ժողովրդյան չիմացուցին: Ռազմիկներուն թեթևամտությունը զարմանալի բան մըն էր, հարյուր անգամ կբախվեին, հարյուր անգամ նորեն կհուսային, ու Մեսիայի սպասելու պես մաճառներուն կսպասեին: Ս. Ստեփանոսի զանգակատնեն միօրինակ արվեստական կրակներ ու ծուխ կարծակեին, որ մաճառները տեսնեն ու օգնության գան»³⁵:

Ռեկ հոկտեմբերի 31-ին քաղաքացիներն անձնատուր են լինում, «բանվորները, ուսանողները, ստորին աստիճանի զինավորյալ մարդիկ, ռաժկապետական ժողովակին անդամները չէ թե միայն հանձն չառին անձնատուր ըլլալ», այլ և մյուսներին ևս ստիպում էին դիմադրել: Նրանք հայտարարում են, թե պալատը

³⁵ *Նույն տեղում, թիվ 46, էջ 190:*

պետք է այրեն, պանթեոնն ավերեն և դրա դագաղներից բարիկաղներ շինեն, «ու մինչև վերջին ճիգը պիտ'որ պատերազմին, ու ավելի կուզեն քաղքին փլատակներուն տակը մեռնիլ, քան թե անձնատուր ըլլալ»³⁶:

Սակայն հոկտեմբերի 31-ին քաղաքը ռմբակոծվում է, գործը խուժում քաղաք և կառավարությունը հաշվեհարդար է տեսնում ապստամբների հետ: «Եվրոպայի» 46-րդ համարը, որը նկարագրում է հոկտեմբերի 28-ի և դրան հաջորդած օրերի իրադարձությունները, լույս է տեսնում վեց էջով: Այստեղ կան այնպիսի նկարագրություններ (փողոցային մարտերի զգայացումը տեսարանների, հրդեհի), որոնք մեծ արժեք են ստանում իբրև ականատեսի վկայություններ:

«Քաղքին բոլորտիքը 26 մեծ ու սաստիկ հրդեհները ահեղ տեսիլ մը կծևացնեին, որոնց բոցերը կարծես թե մինչև ամպ կհասնեին, և բոլոր երկինքն ու գետը կաս կարմիր ներկած էին: Մինչև հեռու տեղեր անանկ լույս մը տարածված էր, որ գիրք կկարդացվեր: Վիեննայի մեջ այսպիսի բան մը ստուգիվ դեռ տեսնված չէր»: Հոկտեմբերի 29-ին, «իրիկունը բոլոր կրակները մարած էին և թանձր մշուշ մ'իջնալով կարծես թե եղած սոսկալի դեպքերուն վրան ծածկույթ մը ձգել կուզեր»³⁷:

Այնուհետև՝ Մխիթարյաններն անհրաժեշտ են համարել մեկնաբանել նշանակալից այդ իրադարձությունները, իմաստավորել փաստերը: Հարկ է նշել, որ նրանք այդ կատարել են ամենայն զգուշությամբ, երբեք չմոռանալով իրենց դիրքը և տիրասիրության պարտքը: Մյուս կողմից, նրանց քաղաքական հայացքներուն որոշակիորեն ի հայտ է գալիս 1848 թ. մարքսիստական գաղափարախոսությանը հակադրվելու կիրքը և հենց այդ գաղափարախոսության որոշ հարցադրումներն օգտագործելու երևույթը: Այսպես, ըստ նրանց, անգործ, չունևոր և հարստանալ ցանկացող մարդիկ չարաշահելով տպագրության ազատությունը և ժողովների իրավունքը, միանում են տերության թշնամիներին, մշակում նոր սկզբունքներ և ժողովրդին գրգռում կայսրի դեմ: Սրանց գլխավորները *հունգարացիք, իտալացիք և հրեա լրագրողներն էին*, որոնք հասարակ

³⁶ Նույն տեղում, թիվ 45, էջ 186:

³⁷ Նույն տեղում, թիվ 46, էջ 190:

ժողովրդի հետ խոսում էին *ազատության, հայրենասիրության և ժողովրդի շահերի անունից*: Նրանց ազատության պահանջը, սակայն, ազատ լինելն է՝ «բնական ու քաղաքական օրենքներից»: Առավել հետաքրքրական է վերջին միտքը. «*իրենք կորսրնցնելու բան մը չունենալով, ամեն վնասակար գործքերու կհանդգնեին, վասնզի անոնցմով բան մը ձեռք ձգելու հույս ունեին* և ասով իրենց հայրենասիրությունն ու ժողովրդյան օգուտը սածը՝ անձնասիրությունն ու շահասիրությունն կըլլա: Վերջապես մեկ խոսքով աս արմատականներուն ու հասարակականներուն, որոնք անչափ ազատություն կխոստանան, վերջը՝ արծակապետությունն ու բռնավորությունն է»³⁸:

Ավստրիական շարժումներին հաջորդում է հունգարական հեղափոխության ճակատագրական դրվագների պատմությունը: Վիեննան մվաճելուց հետո կառավարությունն ամեն կողմից հարձակում է մախապատրաստում Յունգարիայի դեմ, «իճնու որ բովանդակ Ավստրիայի մեջ այսչափ խռովություններ հանելու գլխավոր պատճառ իրենք եղան»³⁹: Թերթը թվարկում է այն ուժերը, որոնք պատրաստվում են խուժել Յունգարիա: Կոշուտին ընդդիմանում են Տենեշվարը, Արադի բերդապահ զորքը, ոտքի են ելնում խորվաթները, սերբերը, սլովակներն ու վալախները: Ավստրիայից դուրս են գալիս Տալեն և Նյուժան գորավարները, սպարապետի տեղակալ Սիմոնիչը:

Յունգարական խորհրդարանը և պաշտպանության ժողովը «Մաճառիստանը զորաց դեմ պաշտպանելու» միջոցներ են մշակում: Որոշվում է բացարձակապես չենթարկվել հենց մոր նշանակված Վինդիշգրեց հրամանատարին, որին ենթարկվողին վճռվում է պատժել իբրև մատնիչի: Սկսվում են պատերազմական գործողությունները: Թերթը հաղորդում է, որ Կոշուտն ամրացնում է Գոմոռնը (Կոմարոմ), այնտեղ կենտրոնացնելով Վիզլբուրգի և Ռաապի հացահատիկը: Չնայած տարածվող մաղձահույզին (խուլերա), հունգարացիք պատրաստվում են պատերազմի. «Բեշթին չորս դին էրիկ մարդ, կնիկ մարդ ու տղաք գիշեր ցորեկ կգործեն ու հողակույտեր կշինեն. բայց չենք գիտեր, որ աս չնչին բաները զորքը քանի՜ օր կրման արգելել»⁴⁰:

³⁸ Նույն տեղում, թիվ 45, էջ 186:

³⁹ Նույն տեղում, թիվ 46, էջ 192:

⁴⁰ Նույն տեղում, թիվ 47, էջ 194:

Կոշուտի առաջնորդությամբ հունգարացիներն ամրացնում են Պրեսբուրգ (Պոժոն, Բրատիսլավա), Պեշտ, Բուդա, Կոմարոմ քաղաքները: Նրանք բոլորին պատերազմի են կոչում: Վինդիշգրեցն իր հերթին պաշարում է Զունգարիան, գրավում Էոդենբուրգը և Բանատը: Նա ձգտում է դեպի կայսրական բանակը հրապուրել Կոշուտի կողմն անցած Մոկա զորավարին՝ իր զորքերով («բայց Մոկա ոչ եկավ, ոչ ալ թուղթը իր բանակին մեջ հրատարակեց»):

Դեկտեմբերին, նոր կայսրի ընտրությունից հետո, հունգարական խորհրդարանը չի ընդունում նոր միապետին, որի այն հայտարարությունը, թե պետք է բոլոր ազգերը միավորի և կազմի մի մեծ տերություն, անուղղակի վտանգ էր ներկայացնում իրենց ինքնուրույն Սահմանադրության համար: Դեկտեմբերի 8-ին հունգարական խորհրդարանը հասարակապետություն է հռչակում: Ընտրվում են կառավարության անդամներ. «պատերազմի պաշտոնյան հայագգի Քիշ զորապետն է, իսկ Գոշուք՝ պաշտոնեից գահերեց, կամ թե ըսենք՝ հիմակուհիմա Մաճառիստանի թագավորի պես է. ինքը հրամաններ կհանե, ու մեկալ պաշտոնյաներն ալ անոր անվանը տակը իրենց անունն ալ կստորագրեն, ինչպես որ սահմանադրական տերություններուն մեջ սովորություն է»⁴¹:

Սինչդեռ հունգարացիները զբաղված էին իրենց հասարակապետության ստեղծման կազմակերպչական գործերով, դեկտեմբերին կայսրական զորքերն առաջ են շարժվում: Ելաչիչ, Վինդիշգրեց, Սիմոնիչ, Շլիք զորավարները դեկտեմբերին գրավում են Էոդենբուրգ, Վիզըլբուրգ, Պրեսբուրգ, Դիրնավ, Կաշշա և Էպերիեշ քաղաքները: Դեկտեմբերի 27-ին գրավվում է Ռասպ քաղաքը: Զունվարի 2-ին Բանչովայի մոտ պարտվում է Գիշ զորավարը: Զունգարացիները նվաճում են Գլավգենբուրգ քաղաքը: Զունվարի 4-ին պարտվում է Մեսարոշ զորավարը, ավստրիացիները հաղթում են նաև լեհական լեգեոնին և հափշտակում ոչ միայն նրանց և Մեսարոշի միջև եղած գրագրությունները, այլև տասը հազար ոսկի: Զունվարի 5-ին, առանց արյուն թափելու, Վինդիշգրեցը մուտք է գործում Պեշտ: «Աս մաճառներուն մայրաքաղաքին առնվելովը՝ աս դժբախտ պա-

⁴¹ Նույն տեղում, թիվ 51, էջ 210:

տերազմին ալ վախճան տրված կրնա համարվիլ», – գրում է թերթը: Սակայն այն, որ Վինդիշգրեցի տղան քաղաքի բանալիները հանդիսավորությամբ Օլմյուցում հանձնում է կայսրին, դեռևս պատերազմի վախճանը չէր, ինչպես ենթադրում էին Մխիթարյանները: Ի դեպ, նրանք արձանագրելով այս դեպքերը, ընդգծում են ոչ միայն կառավարական գորքերի, այլև հունգարացիների քաջությունը: «Աս հաղթությունները, որչափ որ մաճառներուն անվանը վրա ստվեր մը կծգեն նե, որովհետև ասոնք մինչև հիմա շատ քաջ պատերազմող ազգ կհամարվեն, այնչափ ալ կայսերական զորաց անունն ու քաջությունը կհռչակեն»⁴²:

Նրանք գրում են, թե Կոշուտը, որ իր պաշտոնակիցներով փոխադրվել էր Դեբրեցեն, շարունակում է մնալ այնտեղ և «իր հրային ատենաբանություններովը բոլոր ժողովուրդը կբորբոքե»: Նա Սուրբ Ստեփանոսի թագը դնում է եկեղեցում և ժողովրդին հորդորում՝ ըստ ավանդության օգնություն խնդրել նրանից («թեպետև ինքը բողոքական ըլլալուն՝ ասանկ բաներու չհավատար»):

Այսուհանդերձ, հունվարին հերքվում են այն լուրերը, ըստ որոնց հունգարացիները քաղաքներ էին ետ վերցրել: Առհասարակ, գրում են Մխիթարյանները, «մաճառներուն բանը ծախող կերթա»: Բեմ զորավարին չի հաջողվում ժողովրդին ոտքի հանել Արդեալում. Կոշուտն անցնում է Մեծ Վարադին: Վինդիշգրեցը ռազմական դրություն է հայտարարում Պեշտում և դաժան հաշվեհարդար տեսնում ժողովրդի հետ: Դեբրեցենում թանկություն է տիրում («պստիկ բնակարանի մը ամսվան վարձը 50-60 արծաթ ֆիորին է»): Փետրվարին անհաջողությունները շարունակվում են. գրավվում են Կեչկենետ, Արադ և Դոգա քաղաքները, էսսեկ բերդը: Փետրվարի 15-ին կայսրական զորքերը գրավում են Կռան քաղաքը: «Բայց զորքն իր գործողությունը առաջ տանելու համար քաղքեն հեռանալուն պես՝ տեղացիք գյուղացիներուն հետ միանալով, նորեն ոտք ելան, կայսերական դրոշմ վար առին ու կեցցե՜ր Գոշուք սկսան պոռալ: Ասոր համար նույն քաղքին վրա նորեն զորք խրկվեցավ»⁴³:

⁴² Նույն տեղում, 1849, թիվ 3, էջ 10:

⁴³ Նույն տեղում, թիվ 7, էջ 26:

Հունվարի 21-ի դեպքերն Արդեալում ավելի մանրամասն են հաղորդվում: Այստեղ Բուխները թեև հաղթում է Բեմին, բայց շրջապատվում է: Տեղի բնակիչ սեկւերներն անցնում են Բեմի կողմը և հզորացնում նրա բանակը: Բուխները փետրվարի 1-ին օգնություն է խնդրում ռուսներից, այնուհետև՝ Սալցբուրգ քաղաքի մոտ հրապուրում է Բեմին, շրջապատում և ջարդում նրա զորքը: Հափշտակվում են մեծ քանակով ռազմամթերքներ և Բեմի նամակները: «Կայսերական զորքը կատղած ըլլալով՝ ձեռքն անցածը գերի ընելու չէր նայեր, հապա անմիջապես կգարներ կսպաններ»,— գրում է «Եվրոպան»⁴⁴: Նշվում է նաև, որ «կայսերականք Կարպաթյան լեռներուն կամ Գաշավ ու էբերիեշ քաղաքներուն քովերը՝ Կեորկեյ մաճառ զորավարին ինը հազար կանոնավոր զորքեն քիչ մը նեղ մտած են»: Դրա հետևանքով ավստրիացիները նահանջում են, քաղաքներն ընկնում են հունգարացիների ձեռքը, բայց փետրվարի 21-ին ավստրիացիները կրկին վերագրավում են դրանք:

Փետրվարի 9-ին Արդեալում ամրացած կայսրական զորքին խաբելով, տեղաբնակ հունգարացիները ջարդում են նրանց: Կոմարոմը ևս անցնում է հունգարացիներին: Հետագա լուրերն ավետում են հունգարացիների հաջողությունները: «Արդեալի մեջ ապստամբ մաճառներուն կողմանե պատերազմող Պեմ զորապետը Սեքլեր ըսված ժողովրդյան օգնությամբ գրեթե բոլոր երկիրը նվաճեց»⁴⁵:

Կոմարոմի հունգարացի պաշտպանների մասին գրված է. «Բերդին միջիմները (տասը հազար հոգվո չափ) թեպետև գիշեր ցորեկ վրանին կրակ կտեղա և քաղաքը գրեթե բոլորովին կործանած և ամբնակ եղած է, դեռ անձնատուր ըլլալու նշան չեն ցուցններ»: Կոմարոմ և Պետերվարադ բերդերի մոտ ավստրիական երեք հազարանոց զորքը սպասելով նվազում է: Նրանց հաջողությանը խանգարում են և սերբերը, որոնք չեն կատարում տեղական կարգադրությունները: Հետաքրքրական է Հերմանշտադի գրավումը Բեմի կողմից, որը ռազմական արվեստի փայլուն դրսևորումներից էր: Պարտվելով Սեդյեշ քաղաքում, Բեմը հեռանում է, նրան հետապնդում է Բուխները: Բեմը

⁴⁴ Նույն տեղում, թիվ 9, էջ 34:

⁴⁵ Նույն տեղում, թիվ 11, էջ 42:

պաշարում է Յերմանշտադը. ռուս զորավար Սկարյադինը համոզված, թե Բուխները շուտով վրա կհասնի, ընդառաջ է գնում Բեմին և ջարդվում:

16-րդ համարը տազնապի ազդանշան է տալիս: Վինդիշ-գրեցի փոխարեն գերագույն հրամանատար է նշանակվում Վելդենը: «Վելդենեն զատ շատ երևելի զորապետներ՝ ինչպես Վոլկենուֆ, Պենետեք, Գաստիլիոնե, Ֆոկլ և այլն, Սաճառխտան խավրվեցան: Ամեն կողմանե ալ զորք կերթա»: Նշվում է տարբեր հրամանատարների ենթակայության ներքո եղած զորքերի քանակը (Շլիք՝ 4.000, Ելաչիչ՝ 20.000, տարբեր գնդեր՝ 12.000 և 10.000): «Սաճառներուն զորության համար կըսվի, թե 25-30.000 կրթյալ զորք, 80.000-ի չափ ալ հրոսակ ունին»⁴⁶:

Ռուսները թողնում են Արդեալը, Քրոմշտադը: Ավստրիացիք անցնում են Վալախիա: Յերմանշտադը, ինչպես գրում են տողատակում Մխիթարյանները, նրանց պատսպարանն էր, և քանի որ այն գրավել էին հունգարացիները, ավստրիացիներին այլևս «զորանալու հույս չմնաց, ասոր համար պարտավորեցան իրենք իրենց ետ քաշվիլ ու Վալաքիա մտնել»: Նրանց զորքերի թիվը հասնում էր 12.000-ի:

Մխիթարյանները չեն բավարարվում մեկ աղբյուրից ստացված տվյալներով և մշտապես ստուգում ու ճշգրտում են լուրերը: Այսպես, նշվում է. «Առտեալի մեջ եղած պատերազմներուն վրա ստույգ տեղեկություններ առինք: Բուխներ ավստրիացվոց զորապետին թե հաղթելն ու Մետիաշ առնելը և թե բոլորովին հաղթվիլը ու զորքին Վալաքիա փախչիլը ստույգ է: Յերմանշտադին քով ռուսներուն կորուստը 2.000 է եղեր, 1.000 մեռած, 1.000 մ'ալ վիրավոր ու գերի»⁴⁷: Ինչպես ապրիլի 17-ին գրում են Մխիթարյանները, ավստրիացիների ձեռքին մնացել է միմիայն Կարլսբուրգ բերդը:

Ապրիլին «Եվրոպան» իբրև կատարված իրողությունը ընթերցողներին հաղողում է հունգարական բանակի հաջողությունների լուրը և փորձում վերլուծել իրերի դրությունը: «Սաճառխտանի պատերազմին կերպարանքը,– գրում է թերթի տեսաբանը,– հիմակուհիմա բոլորովին փոխված է: Հառա-

⁴⁶ Նույն տեղում, թիվ 14, էջ 54:

⁴⁷ Նույն տեղում, թիվ 15, էջ 60:

ջագույն մաճառները գրեթե առանց կռվելու կայսեականաց առջևեն ետ կփախչեին, հիմա մեկեն ի մեկ իրենք սկսան կայսերական զորաց վրա հարծակիլ: Ի սկզբան իրենց զորքը առ առավելն 60-70 հազար կսեպվեր, ան ալ, ըստ մեծի մասին անկանոն, իսկ հիմա բազմաթիվ, կարգավորյալ ու ահեղ բանակ մը ունին: Չառաջագույն կայսերականը Մաճառիստանին գրեթե երեք քառորդը հաղթելով առին, հիմա ասոր հպկառակ, գրեթե երեք քառորդը մաճառներուն ձեռքն է, մանավանդ Ղանուբ գետին ձախ դին եղած երկրները»: Չաջողությունը վերլուծվում է խմբագրության կողմից. նախ՝ նշվում է, թե Վինդիչգրեցն անհրաժեշտ հմտություն ու քաջություն չուներ, ուստի ճիշտ չի գնահատել հունգարացիների ուժերը և մեղմ է վարվել նրանց հետ: Այնինչ հունգարացիները ժամանակ են շահում, ստվարացնում իրենց զորքը, ներգրավում քաջ լեհ զորավարների և 25-30 հազար լեհ զինվորների⁴⁸, որոնց ռազմական պատրաստություն են տալիս և հոգում բոլոր պատերազմական պիտույքները: Կայսրական բանակը ցրելով իր ուժերը, կիսում է զորությունը: Թեև կայսրական զորքն արժեքավոր իրերը Պեշտից հանելով ամրացել է Բուդայում, «մաճառները» շատ տեղեր կայսերական զորքին հաղթելով իրենց զանազան գումարտակներով գրեթե բոլոր միջին Չունգարիայի մեջ տարածվեցան բռնեցին»⁴⁹:

Ապրիլյան հաղթանակները հաջորդում են միմյանց: Արդեալն առնելուց հետո Բեն զորավարն անցնում է Բանատ և նվաճում Կարանշեբեշ և Լուգոշ քաղաքները: Ոգևորված ձեռք բերած հաջողություններով, հունգարացիներն ապրիլի 14-ին Ղեբրեցենում հրավիրում են երեսփոխանական ժողով, հռչակում երկրի անկախությունը և Կոշուտին նշանակում պետության նախագահ: Այս նշանակալից իրադարձությունը «Եվրոպան» հաղորդում է ըստ հունգարական կառավարության պաշտոնական «Բյուլետեն» ("Közlöny") լրագրում լույս տեսած հոդվածի: «1849-ին ապրիլի 14-ը Մաճառիստանի տարեգրու-

⁴⁸ Տողտակում հողվածագիրը նշում է «Պրես» լրագրի տեղեկությունները, ըստ որոնց հունգարացիների զորավարներից 12-ը լեհեր էին, երեքը՝ ֆրանսիացի, երեքը՝ անգլիացի, երկուսը՝ իտալացի, երկուսը՝ գերմանացի, մեկը՝ հայ և չորսը՝ հունգարացի:

⁴⁹ «Եվրոպա», 1849, թիվ 18, էջ 69:

թյանց մեջ մշտնջենավոր պիտ'որ մնա...»: Այս խոսքերով է սկսվում հաղորդումը: Այնուհետև՝ նկարագրվում է, թե ինչպիսի հանդիսավոր իրադրության պայմաններում են պատգամավորները հավաքվում բողոքականների եկեղեցում և պաշտպանության ժողովի նախագահը ժողովրդին հաղորդելով «մաճառի քաջ բանակին հաղթությամբ առաջ քալելը»՝ ասում է. «Ա՛լ ժամանակը եկած է, որ Մաճառիստան իր 3.000 տարվան շղթաները խզե, կոտրե ու եվրոպական տերությանց ընտանյացը մեջ ունեցած աթոռը ձեռք ձգե, ու ան ցեղը մեկդի վռնտե, որն որ իր մշտնջենավոր անհավատարմությամբը, նենգավորությամբն ու մատնությամբը աս մեծանձն ու միշտ հավատարիմ մնացած ազգին սերն ու վստահությունը ի մշտնջենավորս կորսնցուց»⁵⁰: Այնուհետև՝ խորհրդարանի նախագահ Կոշուտը հրապարակում է իր չորս առաջարկները, որոնք ընդունվում են միաձայն: «Եվրոպան» հրապարակում է դրանք. 1/ Յունգարիան հռչակել անկախ պետություն. 2/ մերժել Չաբսբուրգյան հարստության գերիշխանությունը երկրում. 3/ բարեկամական հարաբերություններ հաստատել հարևան երկրների հետ. 4/ մինչև ապագա կառավարական ձևի ընդունումը՝ պետության նախագահ ընտրել Կոշուտին:

Այդ օրերին «Եվրոպան» միաժամանակ հաղորդում է այն մասին, որ ռուսական ստվար բանակը պատրաստվում է մտնել Տրանսիլվանիա: Հրապարակվում է ռուսական զորաբանակի թվական կազմը, որը քսան հազարական խմբերով երեք կողմից շարժվում է դեպի Արդեալ. 25-30 հազարանոց մեկ այլ զորախումբ մտնում է Կրակով՝ նպատակ ունենալով մոտենալ Վեդեմի բանակին: Լրագիրն ընդգծում է իրավիճակի շիկացումը: Երկուստեք ռազմական պատրաստություններ են տեսնում («հիմա երկու կողմն ալ իրարու ամենևին զիջանիլ չուզենալով, զենքը պիտ'որ ըլլա, որ խնդիրը որոշե»): Մխիթարյաններն ավելի են սթափվում. նրանց խոսքին միանում է մի ինչ-որ տաք երանգ:

Սկսվում են մարտերը Պեշտի համար: Ապրիլի 24-ին թողնելով Պեշտը, կայսրական բանակն այրում է երկու քաղաքները միացնող երկու կամուրջները. հաջորդ օրը հունգարա-

⁵⁰ Նույն տեղում, թիվ 19, էջ 74:

ցիները մտնում են Պեշտ: «Ամեն կողմեն իրենց կողմնակիցները կեցցե՝ կպոռային, ու տներու վրա հունգարացվոց երեքգունյան դրոշը բացին: Կրսեն, որ իրենց ամենեն ավելի ցավ եղած է նավե կամուրջին այրիլը, որն որ աս երկու քաղաքներուն հին հիշատակարան մըն էր: Դարծյալ ռուսներուն իրենց երկիրը մտնելուն վրա շատ կատղած են: Մաճառները մոր աղած տեղերնեն մոր զորածոդով կընեն»⁵¹: Այնուհետև՝ թերթը խոսում է Բուդան գրավելու նախապատրաստական աշխատանքների մասին: Հունգարացիներն ունեն 250.000 մարդ, բայց նեղվում են ռազմամթերքի սակավությունից. «Իրենց բոլոր արվեստավորները գրեթե զենք շինելու զբաղել կուտան և հաղթելու անանկ հույս մը կը ցուցնեն, որ քիչ մը տարակուսողներն ալ մահվան կդատապարտվին»: Հունգարացիները բանակցում են Անգլիայի, Ֆրանսիայի կառավարությունների հետ, մարդիկ են ուղարկում Ֆրանկֆուրտ «որ նյութական կամ բարոյական օգնություն մը գտնեն», դիմում են և օսմանյան կառավարությանը, բայց «Եվրոպան» անհավանական է համարում, որ թուրքերն օգնեն հունգարացիներին:

Սկսվում են ահեղ մարտերը Բուդայի համար: Այն նվաճում են մայիսի 20-ի գիշերը, երրորդ գրոհից հետո: Բերդի մի դուռը բացում են իտալական Չեզգոբիերի գնդի զինվորները և կեցցե գոռալով միանում հունգարացիներին: Թեև «Ավգսբուրգի ընդհանուր լրագիրը» հաստատում է, թե Բուդայի բերդը գրավվել է իտալացիների մատնությամբ, խմբագրությունը վերանայում է այդ կարծիքը: «Աս ալ ստույգ է, — գրում է խմբագրությունը, — որ մաճառները մտքերնին հաստատում դրած էին, որ ամեն վնասով Պուտան առնեն: Ամոր համար թեպետև առաջին անգամ ըրած հարձակումներուն ատենը մեծ ջարդ կերած էին, և Բեշթին (իրենց մայրաքաղքին) շատ տեղերը բոցերու զոհ եղած ու կործանած էր, ի վերա այսր ամենայնի, ասոնք բանի տեղ չդնելով՝ մորեն հարձակեցան և վերջապես առին: Ուստի, հավանական էր, որ մատնություն չըլլալու ալ ըլլար, Պուտան թեպետ և կրնար ավելի երկայն դիմանալ, բայց իր 4.000 պահապանով չէր կրնար բոլորովին այնչափ անհամար թշնամվո մը դեմ դնել, մանավանդ որ՝ ինչպես մաճառներն ալ առաջագույն ըսած էին՝

⁵¹ Նույն տեղում:

Պուտայի բերդը շատ ամուր բան մը չէր»⁵²։ Ի դեպ, խմբագրությանը հետագայում Բուդայի գրավման մանրամասները ճշգրտում է փախչող զինվորներից ստացված լուրերով։

Հունիսի 5-ին «Եվրոպան» հրապարակում է Նիկոլայ I-ի հրովարտակը՝ Ավստրիա զորք ուղարկելու վերաբերյալ։ Մոլդավիայում և Վալախիայում «կարգ ու կանոն հաստատելուց հետո», ասված էր այդտեղ, զորք է ուղարկվում Ավստրիա, ուր վիճակը բարդացել էր իտալացիների դեմ մղվող կռիվների և հունգարացիների ապստամբության պատճառով։ «Հոն տեղաց ապստամբները, — գրում է Նիկոլայը, — մեր 1831-ին լեհ մատնիչներուն խմբերովը և ուրիշ զանազան ազգերուն աքսորվածներովը, փախստյալներովն ու հելուզակներովը զորանալով՝ վերջին աստիճանի վտանգավոր տարածություն մը ստացան»։ Անսալով Ավստրիական կայսրի օգնության կանչին, շարունակում է նա, «մեր այլևայլ բանակներուն հրամայեցինք, որ ճամբա ելլեն ու երթան՝ ապստամբությունը նվաճեն, խրոխտ չարագործները ջնջեն, որոնք նաև մեր երկրին խաղաղությունն ալ վտանգի մեջ ձգելու կհանդգնին»⁵³։

Պատերազմը թևակոխում է նոր փուլ։ Փոփոխակի հաջողությամբ կռվում են հունգարացիները և ռուսական զորաբանակներով համալրված Ավստրիական զորքերը։ Հունիսի վերջին կայսրական զորքերը սկսում են գրավել հունգարական քաղաքները։ Հունիսի 27-ին Կոշուտը մի կոչով բոլոր հունգարացիներին գեմքի է կոչում՝ «Հայրենիքը վտանգի մեջ է» նշանաբանով։ Խմբագրությունը հրապարակում է ամբողջ կոչը, նշելով, ի դեպ, որ դրա մեջ «մեծաբանությունն ու ստաբանությունը իրարու հետ կմրցեն»։ Այսպես, բարձր գնահատելով հունգարացիների խիզախությունը, Կոշուտը խրախուսում է նրանց և կռվի կոչում։ Ավստրիական կայսրը ձգտում է նվաճել մեր երկիրն ու բնաջնջել ազգը, ասում է նա, և նշում, որ իրենց խնդիրը հանգում է ազգերի ֆիզիկական բնաջնջումը կանխելուն։

«Մաճառներ, — ասված է կոչում, — կուզե՞ք ռուսաց սատակիչ ու սպառնիչ սրովը մեռնիլ. զձեզ չպաշտպանեք մե, գլուխնիդ

⁵² Նույն տեղում, թիվ 23, էջ 89։

⁵³ Նույն տեղում, էջ 91։

գալիքն աս է: Կուզե՞ք ծեր հարցը, կանանցն ու որդվոցը մարմինները գազագներեն կոխկոտված տեսնել, զծեզ չպաշտպանեք նե, գլուխնիդ գալիքն աս է»⁵⁴: Հանուն պաշտպանության Կոշուտը կարգադրում է ընդհանուր խաչակրաց արշավանք սկսել հայրենիք ներխուժած ռուսական զորքի և նրան հրավիրած ավատորհական կայսրի դեմ, արշավանքի սկիզբն ազդարարել եկեղեցիներում և հրապարակներում, կիրակի օրը հնչեցնել բոլոր զանգերը, ռուսների գալուստն ազդարարել դիտանոցներից, զինված ժողովրդին հավաքել և կենտրոնացնել մի տեղում, զինվել ինչով հնարավոր է (զենք, տապար, մանգաղ, քար...): Այնուհետև՝ հանձնարարվում է ողջ ուտելիքը և ամասունները կենտրոնացնել երկրի խորքերում և նահանջելու դեպքում այրել տները:

Հուլիսի մեկին Կոշուտն ամրանում է Սեզեդ բերդաքաղաքում: Մխիթարյաններն ուշադրություն են դարձնում այն երևույթի վրա, որ վեցին գալով Պեշտ, նա սպառնալից թղթեր է փակցնում պատերի վրա, որոնց մեջ ապավինում էր աստծուն⁵⁵: Այս օրերին Կոշուտը թեև պաշտոնից արձակում է Գյորգեյին և նրա փոխարեն նշանակում Դեմքինսկի և Մեսարոշ զորավարներին, Գյորգեյը, սակայն չի ենթարկվում այդ հրամանին ու պահպանում է իր պաշտոնը:

«Եվրոպան» շարունակում է հրապարակել պատերազմական լուրերը: Տազնապալից էր այն հայտարարությունը, թե իննը տեղից հունգարական տարածք են ներխուժել զանազան բանակներ՝ Հայնալի, Սասի, Պասկևիչի, Ելաչիչի, Նյուժանի և այլոց հրամանատարությամբ: Հուլիսի 11-ին Վուսին հազարապետն առանց կռվի մտնում է Բուդա: Մեկ օր անց Պասկևիչի առաջապահ զորքը գրավում է Պեշտը: Կոմարոմի մոտ արյու-

⁵⁴ Նույն տեղում, թիվ 29, էջ 115:

⁵⁵ «Եվրոպայի» խմբագրությունը հատուկ հոդված է նվիրում այն իրողությանը, որ հունգարացիները, եթե սկզբում իրենց պատերազմը քաղաքական էին կոչում, վերջում այն անվանում են կրոնական, որպեսզի բոլորքեն ժողովրդին: Ամբողջությամբ մեջ բերելով կրոնական պաշտոնյա Սիջայել Հորվադի կարգադրությունը, Մխիթարյանները գրում են. «Ստույգ է, որ ռուսաց գալը մաճառներուն վրա շատ մեծ ազդեցություն ըրավ, անոր համար հիմա այսպիսի արտաքո կարգի միջոցներու ձեռք կգարնեն և ռամիկ ժողովուրդը կրոնի պատրվակով անոնց դեմ մղեգնությամբ գրգռելու կաշխատին» (տե՛ս նույն տեղում, թիվ 24, էջ 100):

նալի մարտերից հետո, հունգարացիները ճեղքում են թշնամու բանակը և հեռանում: Հուլիսի 17-ին ռուսները հարձակվում են Վայցըն քաղաքի վրա: «Ներսը կեցող մաճառները երկայն ժամանակ առյուծաբար կռվեցան, բայց վերջապես ռուսները կրցան զանոնք քաղքեն դուրս հանել» և գրավել երկու դրոշակ, երկու թնդանոթ և 500 գերի: Հունգարացիներին ցույց տված օգնության համար ռուսներն ավերում են քաղաքը: Հանգամանորեն խոսվում է Գյորգեյի բանակի խիզախության և Պասկևիչի հետապնդումներից խուսափել կարողանալու մասին: Թեև հունգարացիները ջախջախում են Ելաչիչին և իննամսյա պաշարումից հետո գրավում Արադ բերդը, միևնույն է, նրանց վիճակը մնում էր ճգնաժամային: Երկրի երեք քառորդն անցել էր կայսրական բանակի ձեռքը, Հայնալդի հրամանատարությամբ գործում էր ութսուն հազարանոց զորք, Պասկևիչը Գյորգեյին հետապնդում էր հարյուր հազարանոց զորաբանակով, Գալիցիայից նա կանչել էր ևս հիսուն հազար պահեստային: «Թեպետ և հմուտներուն հաստատածին մայելով՝ մաճառները շուտ կամ ուշ պիտի խոնարհին,— նկատի ունենալով իրավիճակը գրում է թերթի տեսաբանը,— բայց իրենց զինվորական քաջությանը խոսք չկա: Իրենց նախահորը Արպադին ոգին վրանին կփայլի, ու Ատտիղային արյունը երակներուն մեջ կ'եռա: Մե'ղք որ իրենց դյուցազնական արյունը չէ թե արդար բանի մը համար, ապա Գոշուքի պես մարդու փառասիրությանն ու հաճույքին կթափեն»⁵⁶:

Մխիթարյանները նկարագրում են Պեշտի բնակիչների համար ստեղծված ծանր կացությունը: Գրավելով այդ քաղաքը, Հայնալդ խստորեն պատժում է բնակիչներին և նրանց տույժերի ենթարկում («որովհետև Բեշթի քաղաքացիներուն մեծ մասը բոլոր սրտիվ ապստամբներուն կողմն ըլլալով՝ անոնց զորք ու ստակ տված էին»): Մեծ տուգանք է դրվում և Պեշտի ու Բուդայի հրեաների վրա, որոնք նույնպես «ամեն եղանակավ, թե՛ ստրկով, թե՛ զգեստեղենով, և թե՛ լրտեսությամբ ապստամբներուն օգնություն ըրած էին, նաև զանազան կողմեր մաճառներու իբրև թնդանոթաձիգ կծառայեին»⁵⁷: Դուրս գալով Պեշտից, Հայնալդ

⁵⁶ Նույն տեղում, թիվ 31, էջ 129:

⁵⁷ Նույն տեղում:

սպառնում է քարուքանդ անել քաղաքը, եթե բնակիչները համարձակվեն կրկին ուտքի ելնել:

Կայսրական զորքերն արշավում են դեպի Սեզեդ: Հունգարացիները թողնելով այն, պատնեշներ են կառուցում Սեորեկի մոտ: Անկանոն զորքից բացի նրանք ունեին երեսուն հազար զինվոր և 40-50 թնդանոթ: Օգոստոսի 5-ին կայսրական բանակը հարձակվում է հունգարացիների վրա և գերեվարում երկու հազար մարդու: «Երկու կողմանե ալ մեռածներուն թիվը շատ մեծ եղած պիտի ըլլա, որովհետև դաշտը դիակներով ծածկված էր: Աս պատերազմով հունգարացվոց բանակը գրեթե բոլորովին ցրվեցաւ»: Կոմարոմի հունգարացիները ցրում են բերդը պաշարած ավստրիացիներին և առաջանում մինչև Ռաապ, սակայն, կայսրական բանակի առաջընթացն ակներև էր: Մոլդավիա մտած հունգարացիներին չի հաջողվում ուտքի հանել մոլդավացիներին ու վալախներին և հունգարական զորքը սկսում է ցրվել:

Օգոստոսի 10-ին Տեմեշվար բերդի մոտ տեղի է ունենում վճռական ճակատամարտերից մեկը. «Ավստրիացիք, գուցե նաև մաճառները, գրեթե առանց կերակուր ուտելու, վեց-յոթ ժամ սաստիկ տաժամամբ պատերազմեցան»: Կայսրական բազմամբոխ զորքերը վերացնում են բերդի պաշարումը: Հունգարացիք հեռանում են Լուգոշ, թողնելով վեց հազար գերի: Այնուհետև՝ միմյանց հետևից նվաճում են Մեծ Վարադինը, Ռաապը, Հերմանշտադը: «Ավստրիական թղթակից» լրագրից «Եվրոպան» հրապարակում է ռուսների ձեռքն ընկած Կոշուտի նամակը, որը հղված էր Բեմին և պարունակում էր խիստ կարևոր հրահանգներ՝ կապված վալախական լեգեոն կազմելու հարցի հետ⁵⁸:

«Եվրոպան» մանրամասնորեն պատմում է պատերազմի վերջին փուլում տեղի ունեցած իրադարձությունների, մասնավորապես Գյորգեյի ինքնիշխան գործողությունների և Բերետի ու Ռաապի մոտ, Դեբրեցենում, Սեորեկում, ինչպես նաև Տեմեշվարի մոտ հունգարացիների կրած պարտության մասին:

Օգոստոսի 11-ին Կոշուտը կառավարության ղեկը, քաղաքային և զինվորական վերին իշխանությունը հանձնում է

⁵⁸ Նույն տեղում, թիվ 34, էջ 142:

Արթուր Գյորգեյին և համապատասխան հայտարարությամբ դիմում իր ժողովրդին: Նման հայտարարությամբ հունգարացիներին է դիմում և Գյորգեյը⁵⁹: Այնուհետև՝ մի քանի օր անց, տեղի է ունենում աղետը. Գյորգեյն անձնատուր է լինում կառավարական զորքերին: Մխիթարյանները Գյորգեյի վարքագիծը լուսաբանում են ամբողջ խորությամբ. «Կեորկեյ խոստացավ ջանալու, որ մաճառները բոլոր ուրիշ զորքերն ու բերդերն ալ ավստրիացվոց հանձնեն, և Ռյուտիկերին աղաչեց, որ Բասգևիչ սպարապետին իրեն համար բարեխոսություն ըմե: Բասգևիչ զանիկա իր բանակը բերել տվավ, և ռուսաց կայսեր կգրե, որ Կեորկեյ ձեր մեծափառությանը հրամանին կսպասե, ու անոր հետ բոլոր Գունգարիան ձեր ոտուրներուն ինկած է: Ասոր վրա Արատ բերդն ալ նորեն ավստրիացվոց անձնատուր եղավ»⁶⁰:

Մխիթարյանները հաստատում են, որ Գյորգեյը «անձնատուր ըլլալ ուզողներու կողմն էր»: Այդ առթիվ նրանք վկայակոչում են նաև Պասկևիչին, որը գրել էր, թե Գյորգեյը շատ անգամ է ցանկացել անձնատուր լինել, բայց միշտ պայմաններ է առաջադրել: Վերջին անգամ նա անձնատուր է լինում առանց պայմանների և «միայն՝ ռուսաց և ավստրիացվոց գթությանն ապավինելով՝ ինքզինքն ու իր զորքը անոնց ձեռքը հանձնեց»⁶¹: Հետագայում, 1850 թ., Մխթարյանները Պեշտի մի լրագրից արտատպում են Գյորգեյի՝ 1849 թ. հունվարի 9-ի հայտարարությունը, որով նա մատնացույց անելով հունգարական կառավարության սխալները, Վերին Դանուբի գումարտակներին այլևայլ կարգադրություններ էր անում⁶²: Այդ հայտարարության մեջ նա նշում էր, որ ինքը հավատարիմ մնալով կայսրի Սահմանադրությանը տված երդմանը՝ գումարտակին պարտավորեցնում է կռվել բոլոր նրանց դեմ, ովքեր սահմանադրական միապետությունը խորտակելու և հասարակապետություն

⁵⁹ Այդ հայտարարությունների ամբողջական տեքստը տես՝ նույն տեղում, թիվ 35, էջ 145:

⁶⁰ Նույն տեղում, էջ 146:

⁶¹ Նույն տեղում:

⁶² Խոսքը վերաբերում է Պեշտը թշնամիներին հանձնելու օրը Գյորգեյի հրապարակած «Վերին Դանուբյան բանակի հայտարարությանը» («Վացովյան հայտարարություն»): Ի դեպ, Մխիթարյանները շփոթում են ամսաթիվը: Հայտարարությունը հրապարակվել է հունիսի 5-ին (տես՝ Ս. Ա. Авербых, նշվ. աշխ., էջ 242):

հաստատելու ցանկություն կդրսևորեին: «Աս հայտարարութենն հայտնի կերևա,— գրում է «Եվրոպան»⁶³ — որ Կեորկեյ բոլոր իր բանակովը միապետության կողմն էր, ու ասկից և ուրիշ քանի մը ասոր նման հայտարարություններն անտարակուսելի ճշմարտություն մըն է, որ ինք Տեպրեցեցնի մեջ որոշված Գոշության հասարակապետության դեմ էր»⁶⁴:

«Եվրոպան» նկարագրել է նաև հունգարական բանակների զինվորների ու հրամանատարների անձնատուր լինելու տխուր պատկերը, որն սկսվում է Գյորգեյից («նախ ինք իր զորապետներովը Ռյուտիկերին բանակն եկավ»): Գյորգեյի 25 հազարանոց զորքը զինաթափվում է: Նրանց զենքերը և 140 թնդանոթները տարվում են Մեծ Վարադին: Ըստ Հայնալ գորավարի գեկուցագրի, օգոստոսի 18-ին Լուգոշը գրավելուց հետո, ավստրացիք միլիոնների արժողությամբ զենք և ռազմամթերք են ձեռք բերում: Սեորեկի ճակատամարտից հետո գերեվարվում է 18 հազար մարդ: Բենի և Կիվոնի զորքը ևս անձնատուր է լինում (8 հազար մարդ՝ 74 թնդանոթով): Ռուսները ռազմագերիներին և գրաված ռազմամթերքը հանձնում են Հայնալ գորավարին: «Մաճառներուն ունեցած թնդանոթներուն շատությունը,— գրում է թերթը,— ռազմամթերին (վառողին, երկրթե և կապարյա գնտակին) առատությունը և ուրիշ անբավ պատրաստությունները ամենուն մեծ զարմանք կպատճառեն»⁶⁵: Առհասարակ, կայսրական զորքը հունգարացիներից բռնագրավում է 660.151 հրացան, 2.879 ատրճանակ, 216.000 սուր, 2.073 նիզակ և 500 թնդանոթ⁶⁶:

Տնեշվարի ճակատամարտից հետո կռիվները դադարում են: Օգոստոսի 19-ին անձնատուր է լինում Վիլմոշ Լազարը (Ղազարյան) 5.000 զորքով: Դեռևս դիմադրում են Կոմարոն և Պետերվարադ բերդերը, որոնց պաշտպաններին հղած նամակում Գյորգեյը պահանջում է անձնատուր լինել: Թուրքիա են անցնում Կոշուտը, Բենը, Դեմքինսկին, Պերչելը: Բռնվում և Վիտինի բերդն են տարվում Մեսարոշը և այլ գորավարներ:

⁶³ Մեզ համար դժվար է ճշգրտել Պեշտի լրագրին են պատկանում հիշյալ խոսքերը, թե՞ «Եվրոպայի» խմբագրությանը:

⁶⁴ «Եվրոպա», 1850, թիվ 17, էջ 65:

⁶⁵ Նույն տեղում, 1849, թիվ 36, էջ 149:

⁶⁶ Նույն տեղում, թիվ 44, էջ 181:

Ապստամբության մի շարք ղեկավարներ մահվան են դատապարտվում («Կեորկեյ զորապետին կյանքը շնորհվեցավ»): Սեպտեմբերի 6-ին հանձնվում է Պետերվարադ բերդը, իսկ 27-ին՝ Կոմարոմը: «Ասով բոլոր Մաճառիստանի պատերազմին տեսարանը գոցվեցավ», – ազդարարում է «Եվրոպան»: Հետաքրքրական է, որ դեռևս պատերազմական բուռն իրադարձությունների օրերին թերթը հենվելով այլ «ողջամիտ լրագիրների» վրա, այն կարծիքն էր հայտնում, որ չնայած «մաճառներուն ազգային քաջությանը» (որը դժվարացնում էր պատերազմը), հունգարացիների ապստամբությունը պետք է ունենար նախկին ապստամբությունների վախճանը: «Եվրոպան» տողատակի ծանոթագրությամբ ընթերցողներին հայտնում էր, որ «անցյալ դարերու մեջ մաճառները քանի մը անգամ ալ փորձեցին Ավստրիայեն բոլորովին ազատ ըլլալ, ... բայց ավստրիական զորութենեն նվաճեցան և առաջին վիճակնին դարձան»⁶⁷: Հոկտեմբերի 16-ին թերթը հրապարակում է հոկտեմբերի 6-ին Արադում մահապատժի ենթարկվածների անունները: Դրանք էին՝ Լ. Բատիանին, Դամյանիչը, Լայնիցզեն-Վեստերբուրգը, Ֆեդդերը, Վեչեին, Պյոլտենբերգը, Նադ Շանդորը, Աուլիխը, Տյորեքը, Լաները, Շվայտլը, Գնեզիչը, Դեժոյֆին, Լազարը և Գիշը:

Մխիթարյաններն առանձնահատուկ ջերմությամբ են ընդարձակ տեղեկություններ հաղորդում էռնեստոս Գիշի մասին, որը սերում էր հայազգի Ազոնց ազգատոհմից: Նա 49 տարեկան էր, ուներ գնդապետի աստիճան, Բանատում՝ երեք խոշոր կալվածք, որոնցից ստանում էր 200.000 ֆիորինի եկամուտ⁶⁸: Առատաձեռն էր, ուշադիր ամենքի և մանավանդ հայերի նկատմամբ: «Բոլորովին մաճառի հոգի ուներ և ասոր համար ալ անցած տարի մաճառներուն ոտն ելած ատենն անոնց կողմն անցավ, որոնցմե՝ իր ծառայությանցը համար՝ սպարապետի տեղակալ անվանվեցավ, որ պատիվը ամենեն մեծ զինվորական աստիճանն էր որոգն է. ու ետքեն բոլոր Մաճառիստանի հրամանատար դրվեցավ և մաճառներեն հաս-

⁶⁷ Նույն տեղում, թիվ 14, էջ 54:

⁶⁸ Պատերազմից հետո ավստրիական կառավարության հրամանով Գիշ զորավարի երեք կալվածքները բաժանվում են հունգարական հեղափոխության երեք դահիճների՝ Դայնավի, Վինդիշգրեցի և Ելաչիչի միջև:

տատված զինվորական կարգի պատվո նշանն ալ առավ: Պանադի կայսերական զորաց հրամանատարը անցած տարի հոկտեմբեր ամսոյն մեջ մասնավոր նամակով մը զանկա հորդորեց, որ դարձյալ գա ու կայսեր բանակը մտնի: Բայց ինք ավելի ընտրեց մաճառներուն կողմը մնալ, որոնք կայսերականաց ձեռքն ինկան նե, ինքն ալ անոնց մեծերուն հետ մեկտեղ դատաստանի կանչվելով՝ քրեական հանցանքի պարտավոր ցուցվեցավ: Սեպտեմբերի 21-ին զինքն իր զինվորական աստիճանն վար ու պատվո նշանները մեկդի առին, իր բոլոր շարժական ու անշարժ ինչքերը տերութեան գրավեցին, և հոկտեմբերի 6-ին Արատ բերդը հրացանով սպաննեցին»⁶⁹:

1850 թ. Մխիթարյանները «Լոյդ» լրագրից արտատպում են մի հոդված՝ նվիրված դարձյալ հայազգի Դիոնիսիոս Լուգաչին, որին չէր հաջողվել փախչել: Նա բանտարկվել էր, դատապարտվել մահվան, այնուհետև՝ դատավճիռը փոխարինվել էր 16 տարվա բանտարկության: Լուգաչը հոլանդարական բանակի թնդանոթածիզների հոգին էր, Յունգարիայի զենքի և վառոդի պահեստների ղեկավարը: 1848 թ. մարտին, երբ վճռվում է հոլանդարացի թնդանոթածիզների գունդ ստեղծել, նա «ամխոնջ աշխատությամբ» մարտկոցներ է պատրաստում և հանում պատերազմի դաշտ: Երբ կառավարությունը տեղափոխվում է Դեբրեցեն, նա հազիվ է հասցնում դուրս գալ Պեշտից: Այդ օրերին Տայսինի մոտերքը հարյուրավոր բեռնակառքերի մոտ երևում էր մի պաշտոնյա, Յունվետի համազգեստով, «որն որ թնդանոթները կառքե կառք կփոխադրեր, արյան քրտինքի մեջ մտած, բայց ուրախ, զվարթ ու առանց ամենևին լքանելու նշան մը տալու: Աս քաջ անձն էր ազգային պահապաններու խորհրդյան անդամ և թնդանոթածիզներու հազարապետ Դիոնիսիոս Լուգաչ»: Այնուհետև՝ նա դառնում է գնդապետ, Մեծ Վարադինի համար նախապատրաստում զենքերի կռումն ու առաքումը: «Մեծ Վարատինի պատերազմական կարողությանց համար դրված արվեստանոցին մեջ իրեն հրամանատարության տակ հարյուրավոր անխոնջ գործունյա ձեռքեր զիշեր ցորեկ կաշխատեին: Վառոդ, զենք ու ամեն տեսակ հրազենք, թնդանոթներ, ռաքեթներ, զարմանալի շուտությամբ կլմնային,

⁶⁹ Նույն տեղում, 1849, թիվ 42, էջ 173:

կգործվեին, կպատրաստվեին ու կխրկվեին: Մաճառի ողբերգության վերջին տեսարանը լմըննալեն ետքը՝ խիստ բախտը զինքն ալ բռնեց հափշտակեց: Մե՛ղք, մե՛ղք, որ ասանկ բարձր ու ամենաբարձր տաղանդ մը ընտանի պատերազմի բոցը ավելի բորբոքելու գործի մը եղեր է»⁷⁰:

Մխիթարյանները հիշատակում են նաև հայազգի գործիչ Իշտվան Կորովեյի (Կորովյան) անունը, որն անցել էր Թուրքիա: Վերջինս Կոշուտի կառավարության քարտուղարն էր, «ու երբ որ մաճառները Տեպրեցեցնի մեջ Ավստրիայի կայսրը Յունգարիայի թագավորութենէ վար առին, ինքն ալ ստորագրեց»:
«Եվրոպան» հիշատակում է և հայաբնակ քաղաքների՝ Կեռլայի և Պաշպալովի անունները: Սրանցից առաջինը թեև հեռու էր պատերազմական թատերաբեմից, բայց կառավարությունն, այդուհանդերձ, բնակիչներից գանձում է 400.000 ֆիորին: Պաշպալով քաղաքն ավերվում է, կողոպտվում, 40.000 ֆիորին տուգանք վճարում այն պատճառով, որ ողջունել էր հունգարացիների հաղթանակը և այդ առիթով քաղաքի վրա խոյացրել հունգարական ազգային դրոշը:

«Եվրոպան» շարունակաբար հրապարակում է ապստամբության մասնակից զինվորականների նկատմամբ կիրառվող հաշվեհարդարի լուրերը: 1851 թ., պաշտոնական հաղորդումներից, թերթը հրապարակում է մահապատժի ենթարկվածների թիվը, որը հասնում էր 4.834-ի⁷¹: Սպանությունները հուզում են ժողովրդին. «Աս սպաննվածներուն լուրը՝ որոնց մեջ նաև քանի մը քահանա ալ կա, շատ դառն ազդեցություն կընէ և բոլոր Մաճառիստան աս վրեժխնդրության օրերը սգո ու խորին տրտմության մը մեջ է»⁷²:

«Եվրոպայի» խմբագրությունն արձանագրում է, որ ավստրիական և անգլիական որոշ թերթեր «Մաճառիստանի գլխավորներուն սպաննըվելուն վրա շատ տհաճություն կը ցուցընեն»: Նրանք այն միտքն են հայտնում, որ քրեական հանցանքով դատապարտվածները պետք է դատվեին հրապարակավ և արդարանալու հնարավորություն ստանային:

⁷⁰ Նույն տեղում, 1850, թիվ 11, էջ 41:

⁷¹ Նույն տեղում, 1851, թիվ 9, էջ 33:

⁷² Նույն տեղում, 1849, թիվ 42, էջ 173:

1850 թ. կախվում է Վիեննայի «Սահմանադրություն» թերթի խմբագիր Լ. Յավերը. բազմաթիվ գործիչներ բանտարգելության են դատապարտվում. «Հոս տեղս կուզենք հիշատակել,— գրում է «Եվրոպան»,— որ Մաճառիստանի դատապարտությունները, որոնց ծայրը չեկավ, ամենուն անհաճո ու անպատեհ կերևան»⁷³: Մամավանդ Մեծ Վարադինի եպիսկոպոսի պատիժը (քսան տարվա բանտարկություն), թերթերի կողմից գնահատվում է իբրև «անիրավ» և «շատ անխնա», իսկ Յայնավի գործողությունները՝ չափազանց խիստ: Երբ հունգարացիներին զինվորագրելու՝ Յայնավի կարգադրությունը կայսրը բեկանում է, «Եվրոպան» գրում է. «ստուգիվ չի կրնար արդարանալ մեկ հրամանատար մը, որուն խստությունն անչափի հասած է, որ ասանկ մարդիկ զինվորության մեջ առեր խոթեր է. աս կերպով ո՞ր ազգ կամ ժողովուրդ կրնա կառավարության մը վրա վստահ ըլլալ: Բայց ուրախ ենք, որ հիմա այս անպատեհ կարգադրությունները վերցուեցան»⁷⁴: Հետագայում հաղորդվում է և ինքնագլուխ գործողությունների համար Յայնավին պաշտոնանկ անելու լուրը: Այս հետմախորքի վրա միանգամայն ուշագրավ է այն նյութերի հրապարակումը, որոնք կապված էին Լոնդոնում Յայնավի հետ տեղի ունեցած մի միջադեպի հետ: Մխիթարյանները հարկավ, կարող էին չտպալ գրել Յայնավի վարկաբեկմանը վերաբերող այդ փաստը, բայց նրանք Լոնդոնի թերթերից ամենայն մանրամասնությամբ արտատպում են մի եղելության պատմություն, որը «Թայմսը» համեմատում էր Լատուրի սպանության հետ:

1850 թ. սեպտեմբերին Յայնավն իր երկու ընկերների հետ Լոնդոնում շրջագայելու օրերին այցելում է գարեջրի գործարան. այստեղ աշխատակիցներից մեկը, երբ հյուրերի մատյանում կարդում է նրա ազգանունը, իսկույն այդ մասին հայտնում է բանվորներին: Այնուհետև՝ «գարիուրելի ու կատաղի աղաղակ մըն է, փրթավ և խումբ-խումբ գործավարներ ու ածուխ կրողներ՝ ավելի կոթերով գորապետին վրա վազեցին ու չորս կողմը պաշարեցին»: Հյուրերին չի հաջողվում խույս տալ: «Գործավարները սկսան ամեն տեսակ շարժական բաները անոր վրա նետել, խույրերնին երեսը զարնել, ու գլխեն մինչև ոտքը

⁷³ Նույն տեղում, 1850, թիվ 12, էջ 45:

ցեխով (չամուրով) լեցուցին, զգեստը վրայեն քաշեցին, պատռեցին, ուսմբ անոր երկայն ընչացքը (պըյսը) բռնեցին և ուզեցին կտրել ու ձեռքի ավելի կոթերովը սկսան զարնել: Նաև իր ընկերներն ալ նույն եղանակով չարչրկեցին, բայց ամոնք իրենք զիրենք աղեկ պաշտպանելով՝ կարող եղան զորապետին հետ շենքեն դուրս ելլել: Յոն ալ ժողված 500-են ավելի ցած ժողովուրդը նորեն սկսան ծեր զորապետին զարնել, ասդին անդին իրել, մինչև որ փախչելով, պանդոկ մը մտավ ու խցի մը մեջ պահվըտեցավ»⁷⁵:

«Պատմական ծանոթություններ պարունակելու համար» «Եվրոպան» միաժամանակ հրապարակել է նաև Նիկոլայ I-ի մի քանի հրովարտակները՝ ռուսական զորքի վերադարձի, Պասկևիչին արտակարգ լիազորություններ շնորհելու, Յայնավ զորավարին շքանշանով պարգևատրելու վերաբերյալ: Թերթն անդրադարձել է և Նիկոլայի այն գրություններին, որոնցով վերջինս թուրքական սուլթանից պահանջում էր իրեն հանձնել լեհ վտարանդիներին, «որոնք, — գրում է նա, — իմ կառավարությանս դեմ քրեական հանցանքով պարտավոր ըլլալեն ետքը՝ Յունգարիայի ավերիչ դեպքերում ալ այնչափ չարաչար գործակից եղան»⁷⁶: Յայտնի է, որ սուլթանը հրաժարվելով կատարել այդ պահանջը՝ խոստանում է վտարանդիներին ուղարկել իր տերության ներքին գավառները: Յետագա տարիներին (1850-1853 թթ.) մի շարք հաղողումներ են հրապարակվել՝ նվիրված Սուրբ Ստեփանոսի թագի նկարագրությանը, դրա անհետացման և որոնումների հարցին⁷⁷: 1853 թ. (թիվ 38-39) հաղորդում է հրապարակվում այն մասին, որ հազարապետ Տիտոս Գարկերը հայտնաբերել է այդ գանձը՝ Կոշուտի նախագծով պատրաստված թաքստոցից:

1853 թ. անգլիական թերթերից արտատպվում են Մաձծի-նիի և Կոշուտի կոչերը՝ ուղղված իտալացիներին և հունգարացիներին. «Եվրոպան» Կոշուտի կոչի մասին գրում է. «Բովանդակ մաճառ ազգը և Իտալիա գտնվող մաճառ զորքերը կը գրգռեն,

⁷⁴ Նույն տեղում, թիվ 13, էջ 49:

⁷⁵ Նույն տեղում, թիվ 38, էջ 150:

⁷⁶ Նույն տեղում, 1849, թիվ 45, էջ 191:

⁷⁷ Սյո հարցին առանձին հոդված է նվիրել և «Բազմավեպը» (տե՛ս «Մաճառաց թագը» // «Բազմավեպ», 1850, թիվ 3, էջ 41-42):

որ միաբան զենք առնեն և իտալական ազգին հետ միանալով՝ հասարակաց թշնամին (Ավստրիացին) վռնտեն և ազատություն ու անկախությունը ձեռք ձգեն»⁷⁸։ Պատերազմի ավարտի օրերին «Եվրոպայում» «Ազգային լրագրից» ամբողջապես արտատպվել է Օրշովայում օգոստոսի 15-ին Կոշուտի արտասանած հրաժարական ճառը⁷⁹։

Հայրենիքին ուղղված Կոշուտի հրաժեշտի այս սրտառու խոսքի տպագրությունից հետո, Մխիթարյանները շարունակում են հետևել նրա անցած ուղուն և հայ ընթերցողներին ծանոթացնում մեծ հեղափոխականի վտարանդիության առաջին տարիների պատմությանը։ Թերթը հանգամանորեն նկարագրում է Կոշուտի տեղափոխությունը թուրքական նավից՝ հատկապես նրա համար ուղարկված ամերիկյան «Միսիսիպի» նավը։ Նավապետը ողջունում է Կոշուտին և նրան հանձնում իր կառավարության կողմից ուղարկված գումարը։ Կոշուտը, որ ձեռքին բռնել էր հունգարական ազգային դրոշը, հանդես է գալիս պատասխան ճառով։ Ծանապարհին նավը կանգ է առնում Պիեմոնտի Լա Սպեցիա նավահանգստում, «ուր որ ժողովրդյան մեկ մասը հունգարական ապստամբության դյուցազին մեծ սեր ցուցուց»⁸⁰։ Թեև Կոշուտին չի թույլատրվում գնալ Փարիզ և այնտեղից տեղափոխվել Անգլիա, բայց և այնպես նա կանգ է առնում Մարսելում ու շնորհավորանքներ ընդունում տեղի ռամկավարներից։ Նրա մարտական ճառը նվիրված էր Հունգարիայի ապագային։ Լրագիրը հաղորդում է ևս մի նրբերանգ. ծովով լողալով, գիշերը նրա նավին է մոտենում մի բանվոր. երբ Կոշուտը, ազդված այդ ուշադրությունից, նրան հանդիմանում է նման խիզախ քայլի դիմելու համար, բանվորն ասում է, թե նավ չի գտել, ուստի որոշել է լողալով հասնել նպատակին։ Ինչպես շեշտում է բանվորը, «ուզողին՝ դժվարություն չկա»։ «Աս խոսքս վրաս այնչափ ազդեցություն ըրավ, որ, կըսե Գոշութ, ասկե ետև ինձի նշանաբան պիտ'որ ընեն»⁸¹։ Նավն ուղղություն է վերցնում դեպի Անգլիա։ Լոնդոնում Կոշուտին ընդունում են մեծ ցույցերով։ Թեև կառավարությունը գործն այնպես է ներկա-

⁷⁸ «Եվրոպա», 1853, թիվ 8, էջ 31։

⁷⁹ Նույն տեղում, 1849, թիվ 48, էջ 201։

⁸⁰ Նույն տեղում, 1851, թիվ 41, էջ 161։

⁸¹ Նույն տեղում, էջ 162։

յացնում, որ իբր իր պաշտոնյաները չեն մասնակցել ցույցերին, «ի վերա այսր ամենայնի շատ երևելի մարդիկ անոնց թե՛ մասնակից և թե՛ գործադիր կըլլան»,— գրում է «Եվրոպան»: Հոկտեմբերի 30-ին Լոնդոնի քաղաքային պաշտոնյաները «նույն ապստամբաց առաջնորդին շնորհավորության և բարեմաղթության թուղթ մը տվին և աս առթով եղած ցույցը հաղթանակի հանդիսի մը նմանեցավ: Գոշուքին անցած փողոցներուն մեջ շատ տներ մաճառի դրոշ բացած էին, և ժողոված բազմության մեջն շատերն իրենց խույրին վրա նույն ազգային նշանը դրած էին: Ամեն կողմանե կեցցե՛ի և բարեմաղթության ծայներ կհնչեին»⁸²:

Այս նկարագրություններն արտատպելով հավանաբար «Թայմսից», խմբագրությունն այնուհետև գրում է, թե անգլիական թերթը դատապարտում է իր հայրենակիցների նման վարքագիծը, և որ խիստ հետաքրքրական է, դատապարտության այդ տողերը չի արտատպում:

Հետագայում ամերիկյան թերթերից արտատպվում են Կոշուտի ընդունելության հետ կապված լուրերը. նավահանգստում «Բերդը տերության կողմանե պաշտոնական եղանակով 31 թնդանոթ նետելով (Միաբանության ամեն մեկ տերության համար մեյ մեկ հատ), զանիկա բարևեց: Թնդանոթներուն կրակը ամերիկացվոց ծառայության մեջ եղող մաճառ թնդանոթածիզ մը տվավ»: 1852 թ. սկզբներին նախագահը Կոշուտին հրավիրում է Վաշինգտոն, որտեղ խորհրդարանը փառավոր ընդունելություն է կազմակերպում նրա համար⁸³:

«Նյու Յորք Հերալդից» «Եվրոպան» արտատպում է քննադատական մի հոդված, որտեղ խոսվում էր այն մասին, թե Կոշուտի ճառերը ոչ մի գործնական նշանակություն չեն ունեցել և թե նրան չի հաջողվել ձեռք բերել ակնկալված գումարը: Առհասարակ նա չի հասկացել, որ ԱՄՆ-ի անգլիացիները «գործնական և ոչ երազատես հասարակապետականք են, և իրենց

⁸² Նույն տեղում, թիվ 46, էջ 182:

⁸³ Հետագայում ավստրիական դեսպանը բողոք է հայտնում Ամերիկայի Միացյալ Նահանգների պետական քարտուղար Դանիել Ուեպսդերի բաժնակազմադրի առիթով. «Մաճառիստանի անկախության, Մաճառիստանի ինքնագլխության, Մաճառիստանի Սահմանադրության՝ իբրև Եվրոպայի ազգաց մեջ ինքնագլուխ ազգ մը» (տես նույն տեղում, 1851, թիվ 7, էջ 26):

անծնական շահն ավելի աղեկ կճանչնան, քան թե ինք և բոլոր եվրոպացի հասարակապետականները մեկտեղ առյալ»⁸⁴։ Թերթի տեսաբանը մեծ կարծիք ունենալով իր հեռատեսության մասին, Կոշուտին խորհուրդ է տալիս թողնել հեղափոխական ցնորքները և հունգարացիների հետ գաղթել ԱՄՆ։

Հունգարական հեղափոխությունը պարտված էր, բայց երկրի անկախության գաղափարը շարունակում էր ապրել. հեղափոխության առաջնորդը չէր մտածում ապահով մի անկյուն գտնել ԱՄՆ-ի հեռավոր խորքերում։ Եվրոպայի կենտրոնում՝ Անգլիայում նա շարունակում էր ուժեր համախմբել հետագա վճռական գործողությունների համար։

«Եվրոպան» խոսելով Կոշուտի մասին, տարբեր առիթներով հայտնել է բազմաթիվ իրարամերձ կարծիքներ, որոնցից հիշարժան է մեկը։ Մխիթարյանները մի առիթով տողատակում ընթերցողներին ծանոթացնում են նրա կենսագրության հետ. «Աս մարդը Հունգարիայի խռովության գլուխ, մանավանդ թե բոլոր Ավստրիայի շփոթությանց գլխավոր պատճառ ըլլալուն՝ հարկ սեպեցիմք, որ ինչպիսի մարդ ըլլալը համառոտիվ մը ընթերցողներուն իմացնենք»։ Այնուհետև՝ կենսագրության մեջ խոսվում է նրա վաղ տարիների լրագրային, քաղաքական գործունեության, ձերբակալության, գաղափարական որոնումների մասին։ Նշվում են Ավստրիայից ազատագրվելու և հասարակապետություն ստեղծելու ուղղությամբ նրա գործադրած ջանքերը։ «Աս մարդս միայն անխոհեմ ու կատաղի հայրենասեր մըն է, — ավարտում է խոսքը հողվածագիրը, — ոչ գթություն, ոչ նկատում, ոչ ալ մեծ քաղաքագիտություն մ'ունի, հանած 200.000.000 թղթ ստակը վերջինին վկա է»⁸⁵։

Մխիթարյանների սկզբնաղբյուրները գերազանցապես ժամանակի պաշտոնական թերթերն էին, որոնք, հարկ է ենթադրել, Կոշուտի գործողություններին բռնության տարրեր են վերագրել։ Սակայն «Եվրոպայի» հայտնած կարծիքները որքան էլ հակասական են, դրանց մեջ կա մի մեծ ճշմարտություն, որը ցայտուն կերպով դրսևորվել է պարբերականի էջերում։ Այն է՝ Կոշուտը հիրավի ղեկավարում էր ոչ միայն հունգարական

⁸⁴ Նույն տեղում, 1852, թիվ 32, էջ 126։

⁸⁵ Նույն տեղում, 1848, թիվ 47, էջ 194։

հեղափոխական շարժումը, այլև գլխավորում առհասարակ ավստրիական բռնապետության դեմ ծավալված ողջ ընդդիմադիր պայքարը:

Մխիթարյանները 1848-1849 թթ. հունգարական հեղափոխության հիմնական դրվագները լուսաբանելուց հետո փորձել են ամփոփել տեղի ունեցած իրադարձությունները, գնահատել թե՛ մեկ, թե՛ մյուս ճամբարի հնարավորություններն ու արժանիքները: Նրանց խիստ հետաքրքրական այս մոտեցումը, սակայն, մեզ հանգեցնում է այն համոզման, որ հավատարիմ իրենց անկողմնակալությանը՝ Մխիթարյանները չեն փորձում համոզես գալ այս կամ այն կողմի պաշտպանի դերում և ջանում են գտնել հակամարտ բանակների հաղթությունների և պարտությունների շարժառիթները: Պատերազմի ավարտից հետո նրանք գրում են. «Ասոր մեջ մաճառները՝ որ ի սկզբանե ի վեր քաջ պատերազմող ազգ սեպված են, դարձյալ իրենց զինվորական հոգին ցուցրցին՝ մեկ-երկու անգամ հաղթվել են ետքը չվհատելով, ու իրենցմե մվազ և կամ նաև իրենց հավասար թվով զորքեն դժվարավ և քիչ անգամ հաղթվելով, բայց գլխավորաբար զանազան տեղեր ալ՝ թեպետ միշտ շատ զորքով քիչ զորքի դեմ հաղթելով, ինչպես՝ անգամ մը Ելաչիչին, երկու անգամ ռուսաց՝ Վայցընի քով ու Դերմանշտադի մեջ, նույնպես Պուտայի ու Արատի բերդերն առնելով, Ռաապի նորեն տիրելով և այլն»⁸⁶: Այդ գործողությունները, սակայն, գնահատվում են իբրև «զատ զատ դեպքեր», որոնք մեծ օգուտ չեն բերում, այնինչ կայսրական բանակը, ըստ Մխիթարյանների, շահում է ընդհանուր գործողությունները: Սրանց հաջողությունը պայմանավորված է իբր այն գիտակցությամբ, որ իրենց գործն արդար էր, ուստի և քայլ առ քայլ առաջանալով, հասնում են հաղթանակի: Մենք ասացինք արդեն, որ Մխիթարյանների շաբաթաթերթի արժեքը ոչ թե այս գնահատականներում է, այլ պատմությանը նրանց հավատարմության մեջ: Մի սկզբունք, որ բազմիցս հրապարակել են Մխիթարյան-լրագրողները. «Մենք աս ամեն բաները, երկու կողման ալ հաղթություններն ու պարտությունները սկզբեն մինչև հիմա հավատարմությամբ պատմեցինք, գիտնալով, որ պատմագիր մը բավական քննություն ընելեն

⁸⁶ Նույն տեղում, 1849, քիվ 35, էջ 146:

ետքը, իրական դեպքերը եղածին պես պիտի պատմեն, թեպետ իր կարծյացն ու բաղձանացը հակառակ ըլլան»⁸⁷ :

Հունգարական հեղափոխության հետ կապված իրադարձությունների մանրագնին և ճշմարտացի լուսաբանության համար «Եվրոպայի» խմբագրությունն ամենից առաջ պարտական էր ժամանակի հեղափոխական շարժումների հետևանքով ստեղծված իրավիճակին, տվյալ պարագայում՝ գրաքննության վերացմանն Ավստրիայում: Այն, որ նրանք մեծապես օգտվել են դրանից, ի հայտ է գալիս Մխիթարյանների հետևյալ հայտարարությունից. ոմանք սխալվում են, գրելով, թե խմբագրությունն ավստրիական կառավարությունից վախենալով՝ իբր չի հրապարակել «եղած հեղափոխություններուն, պատերազմներուն, կայսերական զորաց հաղթելուն և ուրիշ ասոց մման դեպքերուն ստույգ լուրը: ... Ասանկ բաներ զրուցողները կերևա, որ չեն գիտեր, թե հիմակուան տպագրության ատենը Վիեննայի մեջ ի՞նչ տեսակ ազատ լրագիրներ կտպվին ու հրապարակավ արծակ-համարծակ կկարդացվին և թե ինչպե՛ս տերության ծախող ու հաջող լուրերը, բայց մանավանդ ծախողները, կարելի եղածին չափ՝ շուտով ու ամեն մանր պարագաներովը քաղքիս մեջ կտարածվին»⁸⁸ :

Գրատպության ազատությունն էլ Մխիթարյաններին հնարավորություն է ընձեռել ամբողջ խորությամբ արտացոլելու եվրոպական հեղափոխական իրադարձությունները և մասնավորապես հունգարական հեղափոխությունը:

⁸⁷ *Նույն տեղում:*

⁸⁸ *Նույն տեղում, թիվ 24, էջ 93-94:*

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՀՈՒՆԳԱՐԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԱՐՉԱԳԱՆՔՆԵՐԸ XIX ԴԱՐԻ 50-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՅ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՄՈՒԼՈՒՄ

«Արշալույս Արարատյան»

Հունգարական հեղափոխության օրերին հրատարակվող պարբերականների թվում էր Ջնյուռնիայում լույս ընծայվող «Արշալույս Արարատյան» շաբաթաթերթը, որը խմբագրում էր չափավոր հայացքների տեր հրապարակախոս Ղուկաս Պալտազարյանը: Նրա թերթն ավելի, քան ժամանակի որևէ այլ հայկական լրագիր, չեզոք դիրք ուներ քաղաքական հարցերում: Պալտազարյանը բավարարվում էր ժամանակի արտասահմանյան թերթերից և Մխիթարյանների «Եվրոպայից» կատարած արտատպություններով: Չնայած դրան, նա իր հոդվածներից մեկում հակադրվելով «Եվրոպայի» ուղղությանը՝ այն համարում է «սաստիկ պահպանողական», իսկ իր թերթը՝ «առաջադիմական և քիչ մըն ալ ազատախոս»: «Եվրոպան» կրոնավորական սքեմ կիսգնի, — շարունակում է Պալտազարյանը, — իսկ «Արշալույսը» աշխարհական է, ուստի բնականապես մեծ կամ պստիկ տարբերություն մը պետք է ըլլալ այս երկու լրագրաց մեջ»⁸⁹:

«Արշալույս Արարատյանի» նյութերի ուսումնասիրությունը, սակայն, ցույց է տալիս, որ աշխարհիկ այդ թերթը որևէ առավելություն չուներ «Եվրոպայի» նկատմամբ, որովհետև «ազատախոս» «Արշալույսի» խմբագրությունը ժամանակի թերթերի խմբագրականների ներքո խնամքով թաքցնում էր իր սեփական մտքերն ու դատողությունները:

Սկսած 1848 թ. մարտից, Պալտազարյանը տեղեկություններ է հաղորդում Վիեննայի ապստամբության և դրան հաջոր-

⁸⁹ «Արշալույս Արարատյան», 1850, թիվ 369:

դած հունգարական ազատագրական շարժումների մասին: Հունգարական պատվիրակության այցը Վիեննա, նրանց սպառնալից կոչերը և վիեննացիների համերաշխության ցույցերը՝ թերթի կարծիքով հանդարտության և խաղաղության նշաններ չէին:

Հոկտեմբերին Պեշտից ստացված լուրերը գնահատվում են իբրև «խիստ ցավալի»: Թերթը գրում է. «Անիշխանությունը և անկարգությունը բոլորովին կտիրեն այս ազգին մեջ, որ մեծ ատելություն կցուցընեն ավստրիական իշխանությանը վրա»⁹⁰: Սրան հաջորդում են Լամբերգի և Լատուրի սպանության, հոկտեմբերի մարտերի նկարագրությունները:

Դեկտեմբերին, երբ Ելաչիչը, Ավերսբերգը և Վինդիշգրեցը 100.000 զորքով հարձակվում են Հունգարիայի վրա, խմբագրությունը փորձում է կռահել վախճանը. «Թեպետև մեծամեծ զինվորական պատրաստություններ 'ի գործ կդրվին Հունգարիայի մեջ՝ առաջնորդությամբ Գոսուտ զորապետին, 'ի վերա այսր ամենայնի ընդհանրապես չկարծվիր, թե երկար ժամանակ կարող ըլլան դեմ դնելու Ավստրիո կայսերական զորացը»⁹¹:

Թե՛ Ավստրիայում, թե՛ Հունգարիայում պատրաստվում են պատերազմի: Կոշուտի և Վինդիշգրեցի բանակցությունները որևէ արդյունքի չեն հանգեցնում, ուստի, ինչպես գրում է թերթը, հաշտության հույսը վերանում է: «Կհաստատեն թե հունգարացիք ևս իրենց կողմանե ահագին պատրաստություններ կընեն, և կերևի, թե իրենց հայրենիքը պաշտպանելու համար վերջին ճգամբ պիտի պատերազմին կայսերական զորացը հետ»⁹²:

Հոդվածագիրն այն կարծիքն է հայտնում, որ հուզումները երկրում կչափավորվեն այն դեպքում միայն, եթե նոր խորհրդարանը կարողանա կենսագործել սահմանադրական ազատությունները և պահպանի ազդությունների իրավունքները: Այնինչ, բազմազգ Ավստրիայի ժողովուրդը հիշելով մետերնիխյան կառավարության խստությունները, վստահություն չունի տերության խոստումների հանդեպ: Մեկ այլ համարում թերթն

⁹⁰ *Նույն տեղում, 1848, թիվ 322:*

⁹¹ *Նույն տեղում, թիվ 325:*

⁹² *Նույն տեղում, թիվ 327:*

անդրադառնալով «Լոյդի» այն հայտարարությանը, թե իտալացիներին պատժելու և հնազանդեցնելու համար պետք է աղքատացնել երկիրը, «Արշալույսն» ավստրիական նախարարությունների քաղաքականությունը համարում է ոչ այնքան մարդասիրական և սահմանադրական:

Այսպես 1849 թ. հունվարից, թերթի խմբագրությունը պարբերաբար տպագրում է պատերազմական գործողությունների հետ կապված տեղեկություններ: Ավստրիացիները գրավում են հունգարական քաղաքները, իսկ հունգարական հրամանատարությունը կենտրոնանում է Կոմարոմ քաղաքում: Այնտեղ «գումարված է, կըսեն, հունգարացվոց բոլոր զորքը, և վերջին ճգամբ պիտի պատերազմին թշնամվույն հետ: Բայց, ինչպես որ առաջմանե ևս ըսինք, անհնար կերևի, որ մաճառները կարող ըլլան հաղթելու կայսերական բազմաթիվ զորացը»⁹³:

Գուշակությունը կատարվում է կարճ ժամանակի համար. կառավարական զորքը գրավում է Բուդան և Պեշտը: 24 հոգի մահվան են դատապարտվում, բազմաթիվ մարդիկ ձերբակալվում են: Լրագիրը հունգարացիների պարտությունը բացատրում է ներքին երկպառակություններով և նրանով, որ ազնվականների մի մասը դեմ էր ազգի անկախության գաղափարին: Պատերազմը շարունակվում էր ու թեև խմբագրությունը ենթադրում էր, որ այն շուտով կավարտվի, «Ավստրիացի լրագիրն» այդուհանդերձ գրում էր. «*Հունգարիայի հաշտությունը դյուրին բան մը չէ, ինչպես որ ոմանք կկարծեն*»⁹⁴ (ընդգծումը խմբագրությանն է – Մ.Մ.):

Չնայած կառավարական զորքերի հաջողությանը, հունգարացիք կենտրոնանալով մեկ վայրում, հայտարարում են, թե կարող են տարիներ շարունակ դիմադրել հակառակորդին: Վիեննի շրջոցը ձգտում է մոտենալ Ղեբրեցեմին, «ուրտեղ կգտնվի մաճառներուն ազգային խորհրդարանը և Գոսուտ հռչակավոր զորապետը»⁹⁵:

Ապրիլին խմբագրությունը բողոքում է ստացվող լուրերի հակասականությունից («ստուգիվ չգիտցվիր, թե հաղթությունը ո՞ր կողմն է»): Փոքր անց, երբ հունգարացիների առաջխա-

⁹³ *Լույն տեղում, 1849, թիվ 328:*

⁹⁴ *Լույն տեղում, թիվ 330:*

⁹⁵ *Լույն տեղում, թիվ 332:*

դացունմն արդեն հայտնի էր ողջ աշխարհին, թերթը «Հունգարիա» բաժնում արձանագրում է. «Այս երկրին գործքերը խիստ վտանգավոր կերևին Ավստրիո տերությանը համար, քանզի մաճառները օրըստօրե կգորանան և կհառաջանան: Կերևի թե շատ կռիվներու մեջ ավստրիական զորքը միշտ հաղթվեր են մաճառներեն, որոց զորքը առ այժմ 200 հազար հոգիի կհասնի կըսեն, և ասոնցմե 30 հազարը ծիավոր-կանոնավոր զորք են: Հունգարացվոց հռչակավոր Պեն զորապետը բոլոր Դրանսիկվանիոայի կտիրե, և այս երկրին երիտասարդաց մեծ մասը զինվոր գրել կուտա»⁹⁶:

Սի քանի օր անց հաղորդվում է հունգարացիների կողմից Կոմարոմ բերդի և Ռաապի գրավման մասին: Պալտագարյանն արտատպում է Մխիթարյանների այն հոդվածը, որտեղ նրանք վերլուծում էին հունգարացիների հաջողության պատճառները: Սակայն միաժամանակ նշվում է և Պասկևիչի 106 հազարանոց բանակի առաջխաղացման մասին. «Ավստրիո կառավարությունը տեսնելով, որ յուր մասնավոր ուժով պիտի չկրնա դեմ դնել հունգարացվոց հարձակմանը, որոնք կսպառնան Վիեննա մտնելու, փութացավ ռուսաց վեհափառ կայսրեն օգնություն խնդրել, որ հոժարամտությամբ հաճեցավ հիշյալ կառավարության խնդիրը ընդունելու»⁹⁷:

Ինչպես և «Եվրոպան», «Արշալույսի» խմբագրությունը հունգարական բանակի հրամանատարության ազգային կազմի վերաբերյալ թվական տվյալներ է մեջբերում «Պրես» թերթից: Մայիսի 27-ի համարում ևս հաղորդվում է, որ «ծախորդությունը կշարունակվի կայսերական զորաց համար, որոնք գրեթե ամեն տեղ հաղթվեցան: Պուտա քաղաքը ևս մաճառաց ձեռքը անցավ»:

Հունիսին իրադարձությունների ընթացքը փոխվում է և թերթը հաղորդում է Պերչելի պարտության մասին: Հունիսի 22-ի համարում «Արշալույսի» խմբագրությունն ազդարարում է պատերազմի մոտալուտ ավարտը: Բուդան և Պեշտը գրավված են. Ռազմական նախարար Մեսարոշը Գյորգեյի պաշտոնում նշանակում է Դեմբինսկիին. «Բեշթի օրագիրները դառնապես

⁹⁶ Նույն տեղում, թիվ 336:

⁹⁷ Նույն տեղում, թիվ 337:

կմեղադրեն Կեօրկեին անհոգությունը»։ Սակայն թերթը դեռևս հնարավորություն ուներ ջատագովելու Բեմի ռազմական տաղանդը, նրա հաղթանակը ռուսական զորքի դեմ **Տրանսիլվանիայում** և Մոլդավիայում, Դեմբինսկիի հաջողությունները Կոմարոմում։ Ըստ Բելգրադի թղթակցի նյութերի՝ թերթը գրում է, որ նա «իր հանդգնությամբը ու Պեմին բանեցուցած զինվորական կրթության արվեստին համեմատ» միջոցներ է գործադրում։

Օգոստոսի 19-ին "Journal de Constantinople" լրագրից հաղորդվող տեղեկությունները տիպի մանրամասներ են պարունակում հուգարական բանակի ծախորդությունների մասին։ Ուշագրավ է, որ «Արշալույսը» հունգարական բանակի հաղթանակների մասին հաղորդում է նույնպիսի անհույզ տրամադրությամբ, որպիսի անտարբերությամբ՝ նրանց պարտության մասին։ Թվում է, թե նրան միայն մեկ խնդիր էր մտահոգում՝ աշխարհի խաղաղությունը, և որքան արագ այն վրա հասներ, այնքան ավելի լավ ամենքի համար։ Ահա Կոստանդնուպոլսից ստացված մի հաղորդում, որը տպագրվել է օգոստոսի 27-ին. «Քաղաքականությունը հանդարտության մեջ է. Եվրոպայի հանգստությունը գրեթե վերահաստատվեցավ, նմանապես հունգարացվոց գործն ալ վերջացավ, վասնզի երկու վեհափառ կայսերաց զորքերը քաջությամբ պատերազմելով ապստամբներուն հետ, բոլորովին հաղթեցին անոնց ու պարտավորեցին անձնատուր ըլլալու, ուստի մայրաքաղքիս քաղաքական լուրերու վրա հետաքրքիր ըլլող ժողովուրդն ալ հանդարտեցավ, շոգենավերուն ու սուրհանդակներուն գալուն ալ չսպասեր»⁹⁸։

Դարձյալ իբրև «Ներքին լուրերի» բաժնի հեղթական նյութ՝ հաղորդվում է հունգարական հեղափոխականների անցումը Վիտին։ «Եվրոպայից» արտատպված այդ լուրը հայտնում է և Գյորգեյի Պասկեիչին անձնատուր լինելու մասին։ Սրան հաջորդում են հեղափոխության ձերբակալված պարագլուխների նկատմամբ կիրառվող դաժանությունների և շատ ուրիշներին հետապնդելուն վերաբերող լուրերը, որոնք քաղված էին «Բորթաֆոլիո Մաթեզե» լրագրից։ Հոկտեմբերի 6-ին ի կատար ածված մահապատիժների մասին առնչվող տեղեկությունները

⁹⁸ *Նույն տեղում, թիվ 345:*

թերթն արտատպում է «Օսերվաթորե Թրիեստինոյի»՝ հոկտեմբերի 8-ի համարի նյութերից: Ավստրիայից ստացված թերթերից քաղվում են մահվան դատավճիռների վերաբերյալ այլևայլ հաղորդումներ: Խոսվում է Վիեննայում սկսված խուճապի, (վախենում են, որ կարող է կրկնվել հոկտեմբերի 7-ը), Պրեսբուրգի բնակիչների հուզումների և ոստիկանության ձեռնարկած միջոցառումների, Պրագայի ժողովրդի գրգռվածության մասին: «Իսկ Բեշտի մեջ այս սպանման լուրը (խոսքը Բատիանիի մահապատժի մասին է՝ Մ. Մ.), կայծակի մը՝ ազդեցությունը պատճառեց: Բնակիչները գեղերը քաշվեցան, որպեսզի այսօրինակ սոսկալի սպանմանց ներկա չգտնվին: Բազմաթիվ պահապան զորք թնդանոթներով կպտտեին բոլոր քաղաքը՝ վառած պատրույզը ձեռքերնին. և մինչև հարկ եղավ հրացանի սլաքի հարվածով վռնտել կնիկները, որ փողոցներում մեջ հուսահատությամբ կողբային»⁹⁹:

Վիեննայից նոյեմբերի 6-ին ուղարկված նյութերի հետքերով, «Արշալույսը» ներկայացնում է ավստրիական կառավարության դաժանությունների առաջ բերած ռեակցիան: «Լրագիրները առհասարակ մեծապես կմեղադրեն Ավստրիո կառավարության վրեժխնդիր և անագորոյն ոգին, որում զոհ եղան Յունգարիայի ազնվականները և երևելի անձինքը, և այս պատճառով սոսկումը և տրտմությունը կտիրեն հիշյալ խղճալի երկրին մեջ, ուրտեղ մահվան դատապարտությունները և գլխատումները կշարունակվին, յարքունիս գրավելով սպանելոց մեծամեծ ստացվածքը»¹⁰⁰:

Կատարվող եղեռնագործությունների առիթով «Մորնինգ Փոսթը» բացատրություն է պահանջում ավստրիական պատգամավորների խորհրդարանից, գտնելով, որ նման քաղաքականության իրականացմամբ խորհրդարանը կայսրի համար դառնում է ավելի մեծ թշնամի, քան այն հունգարական հեղափոխականները, որոնց պատժում են: Վերջապես լսվում է և «Արշալույսի» ծայրը. «Յուրաքանչյուր պատվավոր սիրտ կսոսկա տեսնելով, որ օրինականության խորհրդականները և

⁹⁹ Նույն տեղում, թիվ 349:

¹⁰⁰ Նույն տեղում, թիվ 350:

երեսփոխանները թույլ կուտան, որ 'ի գործ դրվին ապստամբության և անկարգության ամենեն անարժան չափազանցությունները»¹⁰¹ :

Ժամանակի թերթերից քաղված նյութերով «Արշալույսն» անդրադառնում է կայսրական բանակի զորավարների պարզևատրության, ռուսական զորաբանակի վերադարձի, Պասկևիչին շնորհված արտոնությունների հետ կապված հարցերին, ամբողջությամբ արտատպում է Նիկոլայ I-ի հայտարարությունը, որն օգոստոսի 29-ին հրապարակվել էր Վարշավայում և որտեղ ասված էր, թե ռուսական զորքը «յուր սրբազան կոչումը հավատարիմ կերպիվ» կատարելուց հետո, վերստին մտնում է Ռուսաստանի սահմանները: Հետաքրքրական է, որ «Արշալույս Արարատյանի» խմբագրությունը խոսելով այն մասին, որ ավստրիական կայսրը պարգևներ է ուղարկում ռուս զորապետներին, նրանց թվում հիշատակում է նաև «վսեմափայլ Բեիբուլյան հայկազուն իշխանին», այնինչ հարկ չի համարում գեթ մեկ անգամ հիշատակելու զորավար Գիշի անունը:

Առավել մանրամասն թերթը խոսում է Բարձր Դռան հետ ռուսական և ավստրիական կառավարությունների ունեցած բանակցությունների մասին՝ քաղաքական փախստականներին իրենց հանձնելու վերաբերյալ: Նշվում է, թե այդ պահանջը հուլիսին է Կոստանդնուպոլսի քաղաքական գործիչներին: Այս միջադեպը հարթելու նպատակով Բարձր Դռան արտաքո կարգի գործակալ Ֆուադ փաշան մեկնում է Պետերբուրգ և կարողանում խաղաղությամբ լուծել այդ ծանրակշիռ հարցը: Այս առիթով եվրոպական թերթերից մեջ է բերվում գեներալ Բենի մամակն ուղղված սուլթանին, որով շնորհակալություն էր հայտնվում լեհ ապստամբների նկատմամբ նրա ցուցաբերած մարդասիրության համար: Խոսվում է բանակցությունների արդյունքների, ռուսահպատակ վտարանդիներին օսմանյան երկրից վտարելու, իսկ մահմեդականություն ընդունածներին Հալեպ փոխադրելու որոշման մասին:

1850 թ. մայիսի 14-ին Պեշտ մայրաքաղաքն իր վերջին հրաժեշտն է տալիս Կոշուտի զավակներին, որոնք մեկնում էին հւյրենիքից: Թերթն այս հաղորդումն արտատպում է «Օսեր-

¹⁰¹ Նույն տեղում:

վաթուրե Թրեխստին» պարբերականից: 1850 թ. հաղորդվում է և Հայնազին պաշտոնանկ անելու լուրը: Լրագիրը հավանաբար միանգամայն համամիտ էր իր հաղորդած տեղեկությանը վերաբերող մեկնաբանության հետ. «Կհաստատեն, թե այս անակնկալ դեպքին պատճառը հիշյալ գորապետին չափեն ավելի խստությունն է և բացարձակ իշխանությունը՝ որ կբանեցներ Հունգարիայի մեջ: Կայսրը՝ փոխանակ անոր 'ի գործ դրած խստությանը, մարդասիրաբար ազատություն շնորհեց 109 անձանց, որոնք Հունգարիայի ապստամբությանը մասնակից ըլլալնուն համար՝ 1 տարին մինչև 15 տարի բերդարգելության և ոմանք ևս մահվան դատապարտված էին»¹⁰²:

«Արշալույս Արարատյանի» հրապարակած նամակը Կոստանդնուպոլսից թեև անկողմնակալ մի հայտարարություն էր պարունակում այն մասին, թե քաղաքական լուրերով հետաքրքրվող ժողովուրդն այլևս չի սպասում շոգենավերին և սուրհանդակներին՝ խոստովանություն է այն հետաքրքրության մասին, որը ցուցաբերվում էր Կոստանդնուպոլսում բնակվողների կողմից հունգարական հեղափոխության նկատմամբ:

«Հայաստան»

1846-1852 թթ. հրատարակվող Կոստանդնուպոլսի պատրիարքարանի օրգան «Հայաստան» շաբաթաթերթը ևս արտաքին լուրերի բաժնում մեծապես լուսաբանում էր հեղափոխական շարժումների ընթացքն Ավստրիայում: Հունգարիային վերաբերող հիշատակության հանդիպում ենք մարտի 27-ին (թիվ 39), որտեղ մասնավորապես ասվում էր. «Մաճառխստանու մեջ ալ հասարակությունը ոտք ելավ և անկարգություններ ալ եղան: Մաճառները կուզեն, որ իրենց երկիրը և ազգը կատարելապես Ավստրիայեն բաժնուի, ինքնիշխան ըլլա: Իրեն հատուկ օրենքներով կառավարվի, զատ նախարարներ և զատ կառավարության ատյան ունենա. կայսեր հարկատու ըլլա և կայսրը մեծ ճանչնա»¹⁰³:

Այլևայլ լուրերի հետ մեկտեղ, «Հայաստանը» հաղորդում է հունգարական պատվիրակության այցելության մասին Վիեն-

¹⁰² Լույն տեղում, 1850, թիվ 368:

¹⁰³ «Հայաստան», 1848, թիվ 39 (144):

նա, ընդգծում նրա խոսքի վճռական շեշտը. «Թե որ գալու չի հաճիք նե,— դիմում եմ նրանք կայսրին,— բանը շատ գեշ կըլլա և Մաճառիստան ձեռքներուդ ելլելու անգամ վտանգ կրնա պատահիլ, ըսին»¹⁰⁴: Հայտնի է, որ նրանց պահանջը մերժվում է և պատգամավորները վերադառնում են խիստ վշտացած: Այնուհետև՝ խոսվում է խորվաթների հետ հունգարացիների բախումների մասին: Հաղորդվում են Լամբերգի սպանության մանրամասները՝ առանց որևէ մեկնաբանության: Ի տարբերություն «Եվրոպայի», այստեղ մեջբերվում է Լամբերգին ճանաչած ուսանողի բացականչությունը. «Ահա՛ կայսեր կողմեն եկող մատնիչը, սպաննելու է...»:

Կոշուտի կողմնակիցները, «Հայաստանի» բնութագրությամբ, դիտվում են իբրև «հանցավոր կողմնակցության» ներկայացուցիչներ, որոնց «բռնավորությունը» կառավարությունը ստիպված է լինում ճնշել զենքի ուժով: Այնուհետև՝ թերթը ժամանակ առ ժամանակ հաղորդում է կառավարական զորքերի առաջխաղացման և հունգարական քաղաքների գրավման հետ կապված լուրերը: Սակայն, այդուհանդերձ, «Հայաստանը» արժանի գնահատական է տալիս և հունգարական զորաբանակի գործողություններին: Այսպես, թերթը Բենին համարում է ժամանակի քաջ զորավարներից մեկը, որի հաջողությունները ներկայացնում է անկողմնակալորեն: Նախ՝ հաղորդվում է այն լուրը, թե Տրանսիլվանիայում սեկլերները չեն հնազանդվում հունգարացիների դեմ ուռքի ելած կուսակալին. «60 հազար ձեքլեր,— ասվում է թերթում,— երդում ըրին Մաճառիստանի անկախությանը համար մեռնելու»:

1849 թ. հունվարից թերթի խմբագրությունից հեռանում է խմբագիրը՝ հետադիմական Չամուռճյանը և խմբագրության աշխատանքների ղեկավարումը ստանձնում է հրապարակախոս Սկրտիչ Աղաթոնը: Նրա լուսավորական հայացքներն իրենց կնիքն են թողնում լրագրի ուղղության վրա: 1849 թ. ընթացքում, երբ «Հայաստանն» արդեն խմբագրում էր Աղաթոնը, առանձնահատուկ ցայտունությամբ են ընդգծվում հունգարական իրադարձությունները, որոնց կենտրոնում խիզախ հրամանատարներ Բենը, Դենքինսկին և Կոշուտն էին:

¹⁰⁴ Նույն տեղում, թիվ 15 (120):

Բենը գրավում է էրդելի գավառը, Կրոնշտադ և Յերմանշտադ քաղաքները. «Այս քաջագործություններեն կերևա, որ յուր հրամանատարության ներքեղ գտնված զորքը կտրիճ և խիստ կրթյալ եղած պիտի ըլլա, որոնց համար կըսվի, 45 հազարեն ավելի են: Նաև այս ալ կգրեն Դրանսիվանիայի բնակիչները, որ Պեն զորապետին իրենց երկիրը մոտեցած ժամանակը ասդին անդին ցրվեր էին, հիմա ամենն ալ իրենց տեղը դարձեր են. ըսել է, որ անոնք ալ այս զորապետին սեր մը կցուցունեն»¹⁰⁵:

Հաջորդ համարներում ևս խմբագրությունն անդրադառնում է Տրանսիլվանիայի իրադարձություններին. «Յերմանշտադի բոլորտիքը, — ասված է փետրվարի 26-ի համարում, — մաճառներուն դեն պատերազմող կայսերական զորքը թշնամիներուն չարաչար հաղթվելով մեծ կոտորած եղեր է մեջերին: Մաճառներուն Պեն զորապետը, որուն համար կըսեն, թե շատ մեկ կտրիճ մարդ մըն է, Յերմանշտադի մոտերը որչափ պատերազմի հարմար դիրքեր կան նե՝ բոլորին ալ տիրապետելով, նորեն նեմցեներուն հետ զարնվելու կպատրաստվի»¹⁰⁶: Այստեղ հրամանատար Բուխներն անհոգության պատճառով «անհնարին ջարդ» է ճաշակել: Առհասարակ, կրկին անդրադառնալով վերջին լուրերին, խմբագրությունն այն կարծիքին է, որ «ասանկ երևելի հաղթություններ ալ շատ անգամ մաճառները կընեն նեմցեներուն դեն»: Թերթը խոսում է Բենի ստացած օգնական ուժերի մասին, որից հետո նրա զորքերի քանակը հասնում է 18.000-ի: «Հայաստանը» շարունակում է նկարագրել Բենի հաղթարշավը Տրանսիլվանիայում. ավստրիացիք անհաջողության են մատնվում, հունգարացիներն ավելի բարենպաստ վիճակում են «այս մոտերս» և աստիճանաբար ավելացնում են իրենց ուժերը: Կոմարոմն անցել է հունգարացիներին, ազդարարում է թերթը: Բենն այնպես է ամրապնդել դիրքերը Տրանսիլվանիայում, որ ավստրիացիներին անհնար է օգնական զորք ուղարկել. «մանավանդ որ Քարբաթ լեռներուն բոլոր կիրճերը, նեղ ճամբաները զորքով լեցուցեր են: Մաճառները Ավստրիայի բանակը քշեցին Պանաթ, մեկ մասն ալ, որ Դրանսիլվանիայի վրա կաշխատեին, սաստկությամբ հալած-

¹⁰⁵ *Նույն տեղում, 1849, թիվ 32 (137):*

¹⁰⁶ *Նույն տեղում, թիվ 35 (140):*

վելով՝ ստիպվեցավ Սուլտավիայի ու Վալաքիայի քառանթի-
նաները պատսպարվիլ, ըսել է, որ բանակին այս մասը գլխովին
ցրվեցան: Նույնպես ռուսի զորքն ալ, որ առջի բերանը քիչ էին,
անոնք ալ լավ ջարդ մը ուտելով, ետ քաշվեցան. հիմա ասոնց
օգնության կուգա, որ կորսնցուցած տեղերնին երթան մորեն
ծեռք ձգեն»¹⁰⁷: Բանատում սերբերը սիրով են ընդունում հուն-
գարացիներին. «Կեցցե Յունգարիան, մեր պաշտպանը», կաղա-
ղակեն»:

Մայիսի 7-ին թերթը հաղորդում է, որ հունգարացիներին
ծնկի բերելու համար, ավստրիական կառավարությունն օգնա-
կան զորք է խնդրել ռուսական կայսրից: Յաջորդ համարներում
արդեն հաղորդումներ են տպագրվում ռուսական զորքի առաջ-
խաղացման մասին դեպի Ավստրիա: Խոսվում է կայսրի քաղա-
քականության մասին. նա հրամանատարությունը վերցնում է
իր ձեռքը, քանի որ «իրարու հետևե մաճառներեն քանի մը
սոսկալի ջարդ ուտելով՝ քաջություննին կորսնցուցեր են, ինչ-
պես որ սովորաբար կպատահի հաղթվող զորաց»։ Կայսրը փոր-
ձում է սիրաշահել հունգարացիներին, որպեսզի նրանք զենքերը
վայր դնեն, բայց վերջիններս իրենց գրաված երկրներում մոր
զորաժողով են անում. Դեբրեցենի ազգային ժողովը վճռում է
զորակոչել 200.000 զինվոր: «Մաճառներուն մեծը ու պստիկը
սիրով զորք գրվելեն ետև, թե՛ զենքերնուն, թե՛ ձիերնուն ծախքն
ալ իրենք կընեն:

Մաճառները 35 գումարտակ ընտիր հեծելազոր ունին, 60
գումարտակ հետևակազոր, 15 գումարտակ թնդանոթածիզ,
վերջապես թե հին և թե մոր ժողոված զորքերնուն ընդամենը
400.000-ի կհասնի կըսեն:

Պեմ զորապետը թեմեշվար է հիմա. շատ մեծ փառավոր
ընդունելություն մը ըրին իրեն տեղվույն բնակիչները և հոն
գաղղիներեն լեզվով ատենաբանություն մը ընելով, բոլորին սերը
կրկին վաստկեր և ուխտեր են, որ մեռած տեղը իրենք ալ մեռնին:

Պ. Քասսոնդ՝ (Կոշուտ— Մ. Մ.), որ հիմա Մաճառխտանի
թագավորող նախագահն է, նույնպես գաղղիներեն լեզվով Պեմին
խոսքերուն վայելուչ պատասխաններ տալեն ետև, Յունգա-
րիայի թագեն ադամանդ մը պատվո նշան տվավ իրեն, որուն

¹⁰⁷ Նույն տեղում, թիվ 43 (148):

ոսկե շրջանակին աջ կողմը յուր անունը գրված էր, և ծախս կողմն ալ թրանսիլվանիայի փառավոր հաղթությունը»¹⁰⁸ :

Ի դեպ, «Եվրոպա» շաբաթաթերթը նույնպես ժամանակին անդրադարձել է հունգարական թագի վրայից հանված ադամանդներով՝ հունգարական բանակի զորավարներին պարգևատրելու իրողությանը. պատերազմից հետո, երբ որոնվում էին Սուրբ Ստեփանոսի թագը և այլ պարնագաները, պատմում էին որ, Կոշուտը թագի վրայից մի քանի գոհարներ հանելով, Բենի, Գյորգեյի, Մեսարոշի և այլ զորավարների անուններն է փորագրել տվել, ասելով, թե «հայրենյաց ճշմարիտ պսակն ու մարգարիտները ասոնք են»¹⁰⁹ :

Մայիսի 21-ին հատուկ սուրհանդակ է գալիս Կոստանդնուպոլիս, որից տեղեկանում են, որ հունգարացիները Տենեշ-վարը գրավելուց հետո հարձակվել են Բուդայի վրա: Առաջին երեք գրոհներն անհաջող են անցում, որովհետև, ինչպես գրում է թերթը, «քաղքին բերդեն անձրևի պես ռումբ և գնդակ կտեղացունեն եղեր կայսերական զորքը: Բայց չորրորդ անգամին մաճառները անանկ կատաղությամբ հարձակվեր են քաղքին վրա, որ դուռները և պարիսպին մեկ կողմը ապակիի պես խորտակելով, ներս նետվեր են և թշնամիներուն վրա իյնալով, գրեթե ամենը սուրե անցուցեր են, որ ամբողջ 4.000 զորք են եղեր»¹¹⁰ :

«Հայաստանը» մայիս-հունիս ամիսներին շարունակում է հաղորդել տեղի ունեցող իրադարձությունների մասին և շատ հետաքրքրական է, որ խմբագրությունը չի հավատում հունգարացիների անհաջողությանը վերաբերող լուրերին: Այսպես, համադրելով Վիեննայից և Բելգրադից ստացված տեղեկությունները, որոնցից առաջինն առնչվում էր ավստրիացիների հաջողությանը, իսկ երկրորդը՝ հունգարացիների, խմբագրությունը գրում է. «Ես առավել Պելդրատեն եկած լուրերուն կհավատամ, որովհետև թե որ մինչև հիմա Վիեննայեն եկած հաղթության լուրերուն հավատայինք նե, շատոնց մաճառները պիտի հաղթեին, մանավանդ որ ամեն կողմեն Ավստրիայի և ռուսի ահեղ զորությունը զանոնք շրջապատեր է: Այսուամենայնիվ

¹⁰⁸ Նույն տեղում, թիվ 46 (151):

¹⁰⁹ Տես «Եվրոպա», 1849, թիվ 46, էջ 193:

¹¹⁰ «Հայաստան», 1849, թիվ 47 (152):

չենք կրնար հանդգնիլ ըսելու, որ մաճառները բնավ չի պիտի հաղթվին»¹¹¹: Սակայն երբ նույն Բելգրադից եկած լուրերն այնուամենայնիվ հուլիսի սկզբներին տեղեկացնում են, որ հունգարացիները թողել են Ռաապը, դատարկել էբերինը և քաշվել Պեշտ, խմբագրությունը հակված է հավատ ընծայելու այն լուրերին, որոնք ենթադրում են, թե նրանք Ռաապը թողել են տակտիկական նկատառումներով¹¹²: Չէ՞ որ այդ օրերին նրանց էր հասել և Բենի կողմից Արադի գրավման լուրը: Նույն օրերին թերթը հրապարակում է Պետերվարադ քաղաքի գրավմանն ու Ելաչիչի գնդերի պարտությանն առնչվող լուրերը: Հիշվում է, որ Կոշուտի երկու հազար ընտիր հեծյալներն օգնության են հասնում և հունգարացիք «կրկնապատիկ» անգամ ամրապնդելով քաղաքը, արշավում են դեպի Կարլովիչ:

«Հայաստանը» հենվելով Կոստանդնուպոլսի լրագրերի օտարերկրյա թղթակիցների հաղորդումների վրա, հայտնում է հուլիսի 23-24-ին Սոլդապիայում Բենի տարած մեծ հաղթանակների մասին¹¹³: Հուլիսի 16-ին թերթը Վիեննայի լրագրերի նյութերի հիման վրա խոսում է հունիսի 22-ից հուլիսի 2-ը տեղի ունեցած արյունալի մարտերի մասին: Թեև այդ լուրերը շեփոքում էին ավստրիացիների հաղթանակները, խմբագրությունը դարձյալ վերապահումներ է անում. «բայց ուրիշ շատ օրագիրներ և մասնավոր նամակներ ալ ասոր հակառակը կպատմեն», ուստի և վճռում է սպասել առավել հավաստի լուրերի: Հուլիսի 2-ին Կոմարոնի պատերազմի մասին ստացված լուրերը հաղորդում էին Գյորգեյի հաղթանակի և Բենի հաջողությունների մասին Տրանսիլվանիայում:

Հուլիսի 26-ին Խալասից գրված մի նամակում կրկին փառաբանվում է Բենի պատերազմական տաղանդը. Տրանսիլվանիայում նա փախուստի է մատնում Լյուտերին. «Պեմն ալ հաղթական ուրախութենեն գինովցածի պես անոր ետևեն, անանկ որ Պեմ, երբ որ Սոլտապիայի սահմանագլուխը եկավ, միայն 2.000 ռուս անոր առջևը կրցան ելլել, բայց ինչ կրնա ընել այն կայծակին, զանոնք ալ շրջեց գետինը, 12.000 զորքով

¹¹¹ Նույն տեղում, թիվ 52 (157):

¹¹² Նույն տեղում, թիվ 2 (159):

¹¹³ Նույն տեղում:

Պաքոսի նեղուցեն անցավ ու այն կողմերը պետք եղած տեղերը պահապան գունդեր դրավ, մնացածովը վերջապես Մուլտավիայի ռուսի բանակը տակնուվրա ընելեն և գունդ մը զորք ամբողջ սուրե անցունելեն ետև, անհուն պաշար ու շատ ալ ստակ ձեռք ձգեց ու իսկույն դեպի յուր բանակը ծամբա հանեց»¹¹⁴ :

Բելգրադից ստացված նամակի նյութերով թերթը հաղորդում է մեկ այլ ճակատամարտի մասին. հուլիսի 11-ին Կոմարոմի մոտ բախվում են Դայնավի և Դեմբինսկու զորքերը. «Երկու կողմերն ալ մեծ կտրիճությամբ պատերազմեցան, անանկ որ ամեն բան աչքերնին առեր էին, ուստի պատերազմական դաշտը դիերով ծածկվեցավ»: ճակատամարտից հետո Դեմբինսկին զորքը հետ է քաշում, բայց Կոմարոմում պահում է երեսուն հազար զինվոր: Տեսնելով փախչող հունգարացիներին, կայսրական զորքերը սկսում են նրանց հալածել և թիկունքում են թողնում Կոմարոմը: «Խել մը տեղ առաջ երթալեն ետև, մաճառները բարեկարգություննին չի կորսունցուցած, հանկարծ ետ դարձան ու կայսերականաց վրա հարծակեցան. Քոմոռնի միջի մաճառ զորքն ալ առջևնին կտրելով, կայսերականը մնացին երկու թուրին մեջտեղը և շատ մեծ վնաս կրելեն ետև, փախչողը ազատեցավ, փախչիլ չի կրցողը սպաննվեցավ կամ գերի ինկավ»¹¹⁵ :

Այն բանից հետո, երբ հունգարացիները թողնում են Պեշտը, թերթը հարգամքով է արտահայտվում նրանց ռազմական նախագծերի հաջողության մասին: Քանի որ խմբագրությունն այլ լրագրերից քաղված նյութերը վերցնում էր չակերտների մեջ, իսկ ներքոհիշյալ եզրակացությունն առանց չակերտների է, կարելի է ենթադրել, որ այս հենց իր խմբագրության խոսքն է: «Մաճառներուն գործը հիրավի հաջող կերթա այս օրերս, բայց թե որ Ավստրիան ու ռուսը, այս երկու ամենահզոր տերությունները, տեսնելով որ միայն իրենց պատերազմելովը թշնամիին չի պիտի կրնան նվաճել, Բրուսիան ալ իրենց օգնության կանչեն և այն ալ երթալու մեկ արգելք մը չունենան, ան ատենը մաճառներուն վիճակը շատ ողբալի կըլլա: Ասոնք ալ ուրիշ կողմե օգնություն գտնան նե՝ այն չենք գիտեր: Այս

¹¹⁴ Նույն տեղում, թիվ 5 (162):

¹¹⁵ Նույն տեղում:

իրենց անդարձանելի վտանգը նախատեսելով, մաճառները քիչ մը պակաս հանդգնին նե, գեշ չեն ըներ, և աշխարհքիս ընդհանուր խաղաղությունն ալ գոնե քիչ մը ժամանակի համար պատճառ կըլլան»¹¹⁶: Այսպես, որքան մոտենում է հանգուցալուծումը և ակներև է դառնում դրա բնույթը, «Հայաստանի» խմբագրությունը փորձում է ինչ-որ միջին ճանապարհ տեսնել: Պատմելով օգոստոսի իրադարձությունների մասին, երբ Գյորգեյը և Բեմը մարտի են ելնում՝ առաջինը Պասկևիչի դեմ, իսկ երկրորդը՝ Հայնալի, թերթը կրկին ջատագովում է Բեմին: Այն ժամանակ, երբ Գյորգեյն անձնատուր է լինում Պասկևիչին, Բեմը, թեև կոտրված թևով, շարունակում է խիզախորեն մարտնչել Հայնալի դեմ և վեցօրյա արյունալի մարտերից հետո, ուժասպառ, տասներկու հազարանոց զորքով վերադառնում է Տրանսիլվանիա¹¹⁷: Այս դրամատիկ օրերին «Հայաստան» իր խոսքն է ասել նաև Կոշուտի մասին. նա գրում է. «Այս վեց օրվանս մեջ Քոշուտ կռիվին մեջ շատ քաջություն, զինվորական հմտություն և խստություն ցուցուց: Կըսվի, թե 14 զնդապետ հրացանի բռներ է Դժվարին մեջ, որոց մեկն է եղեր Հեռքալովիչ բարձր Օրսովայի հրամանատարը: Դժվարի պատերազմին վերջը Քոշուտ, Մեծարոս, Բերժել և 35 պաշտոնատար Տեմպեսքիին գունդեն Վիտին գացել են, ուրտեղ է եղեր Տեմպեսքին հինգ օրեն 'ի վեր: ... Հոս թեպետ վարանման մեջ եմք մեր դրացիներուն գլխեն անցած դեպքերուն վրա, այլ կատարյալ հանդարտություն ունիմք»¹¹⁸:

Գյորգեյի հանձնվելու առիթով լրագիրն արտատպում է Վիեննայի «Պռեսլո» օրագրի խմբագրական հոդվածը, որը բավականին անկողմնակալորեն էր ներկայացնում հունգարական հրամանատարական կազմի և պետության ղեկավարների միջև առկա տարածայնությունները: «Քոշուտ և Պեմ, ասոնք ամենևին ականջ չի կախեցին Ավստրիայի համոզական խոսքերուն. ուստի Մաճառիստանի բանակին մեջ բավական ժամանակե 'ի վեր երկպառակություն մտած էր: Մեկ կողմը կուզեր, որ խաղաղություն խոսի ավստրիացվոց հետ, այս Կեռուկեյի կողմն էր. և մեկ կողմն ալ ընդհակառակն՝ պատերազմը

¹¹⁶ *Նույն տեղում:*

¹¹⁷ *Նույն տեղում, թիվ 9 (166):*

¹¹⁸ *Նույն տեղում:*

մինչև վերջին ժամը շարունակել կուզեր, և ասոր օրինակ կբերեին Սպանիան, այս ալ Քոշուքի կողմն է. ասոր համար Քոշուք Սպանիայի 1808-ի, 1814-ի պատերազմին վրայով եղած գրքերը հունգարիացի և գերմանացի լեզվի թարգմանել և հրատարակել տվալ:

Երբ որ Կեօռկեյ Քոմոռնի մոտ էր՝ իր անձնատուր ըլլալուն ճարը կմտածեր. բայց բարեպատեհ ժամանակ մը չէր կրնա գտնալ, որովհետև Քոշուք անոր վրա բնավ վստահություն չունենալուն համար շատ զգուշություն կըներ: Խիստ հավանական է, որ Բասքեիչին Ավստրիայի հետ ըրած խոսակցություններուն ամենն ալ Կեօռկեյի ձեռքը և մեջնորդությամբը եղած ըլլա: Եվ գաղտնի շնորհքներ խոստացալ մաճառներուն, և ասոնք ալ պարտավորեցան հնազանդելու և զոջալու. բայց ասանկ մեկ գաղտնի դաշնավորություն մը միշտ ամոթալի է: Քոշուք տեսալ, որ այս տարածայնություններուն ներքևն քաղաքական պատերազմ պիտի ծագի, պատվովը հրաժարեցալ և յուր պաշտոնը Կեօռկեյին հանձնեց և Պեմը ու յուր կողմնակիցները հետը առնելով, Տաճկաստան քաշվեցալ»¹¹⁹:

Օգոստոսի վերջն է: Պատերազմն ավարտվում է: Գնահատականի ոչ մի խոսք՝ ավստրիական զորքի հաղթանակի վերաբերյալ: Ընդհակառակը, այդ թեման խմբագրությունը փակում է բաց դռների ալեգորիայով: Ամեն ինչ դեռ ավարտված չէր. «Մաճառխտանի անտառներուն և լեռներուն մեջ անթիվ բազմությամբ մաճառներ քաշվելով, շատ կնեղեն Ավստրիայի ու ռուսի զորքը, որոնց մեկ մասին հրամանատարն է Պիսթոնց լեհ զորապետը և մեկ մասին ալ Նաբոլի անուն մաճառ զորապետը:

Պեմ զորապետին հրամանատարության ներքևը երեք անվանի զորապետներ կան, որոնք են Վեթքեյ, Քմեթի և Քմեռիթ»¹²⁰:

«Հայաստանն» անկեղծ կարեկցանքով է արտահայտվում հունգարական շարժման մասին, վարանման մեջ է՝ իրենց «դրացիներուն գլխեն անցած դեպքերի վրա» և, սակայն, «հանդարտություն ունի», այսինքն հավատում է նրանց գործի

¹¹⁹ Նույն տեղում, թիվ 12 (169):

¹²⁰ Նույն տեղում, թիվ 9 (166):

արդարացիությանը: Խմբագիրների հայացքների չափավորությունը, ի պաշտոնե քաղաքական շարժումների նկատմամբ ունենալիք չեզոքության պարտավորությունը և գրաքննական հսկողությունը, հավանաբար նրանց զրկում էին առավել արմատական խորհրդածությունների հնարավորությունից: Խմբագրությունը, սակայն, անում էր հնարավորը՝ այդ խիստ կարևոր իրադարձությունները լայնորեն լուսաբանելու համար և հաղորդած լուրերի հավաստիությունը երաշխավորում էր հրապարակով:

«Ազգասեր Արարատյան»

1845-1848 թթ. Յնդկաստանի Կալկաթա քաղաքում հրատարակվում էր հայ նշանավոր լուսավորիչ, բազմաժանր գրող և հրապարակախոս Մեսրոպ Թադիադյանի «Ազգասեր», այնուհետև՝ «Ազգասեր Արարատյան» (1848-1852) կիսամսյա հանդեսը: Թադիադյանի պարբերաթերթի համար արտասահմանյան լուրերի սկզբնաղբյուրներ էին ծառայում Մխիթարյանների «Եվրոպա» շաբաթաթերթը, Լոնդոնից ստացված պարբերականները, հնդկական «Ֆերենդ ավ Ինդիա» լրագիրը և այլն:

Զնայած հեռավորությանը Եվրոպայից, Թադիադյանը ստացած լուրերը հաղորդում էր ցուցաբերելով քննադատական մոտեցում և, ինչպես վայել է ճշմարիտ լրագրողին՝ փորձում էր դրանք իմաստավորել ու նոր միայն հրապարակել համապատասխան, թեպետ հակիրճ, մեկնաբանություններով:

1848 թ. ապրիլի 7-ին Լոնդոնից եկած թղթաբեր նավը Բոմբեյի վրայով հասնում է Կալկաթա՝ «լի զանազան, զարմանազան լուրերով»: Այդ լուրերը Յնդկաստանի ժողովրդին ավետում էին 1848 թ. հեղափոխությունների մասին Ֆրանսիայում, Իտալիայում, Ավստրիայում: Հունգարական իրադարձությունները թերթում լուսաբանվում են 1849 թ.: Դրանք փոքրիկ հաղորդումներ են՝ Տրանսիլվանիան ռուսների կողմից գրավելու, ռուսական զորքերն Ավստրիա մտցնելու մասին:

Պատերազմական օրերին թերթի ամենահիշարժան ելույթը՝ 1849 թ. օգոստոսի 25-ի եվրոպական լուրերի բաժնում զետեղած խորհրդածությունն է: Այստեղ խոսվում է հունգա-

րացիների հաղթանակի և նրանց հետագա ճակատագրի մասին: Սակայն հետևենք Թաղիադյանի մտքերին, որոնք համգում են քաղաքական խիստ ուշագրավ եզրակացությունների: «Հունգարացիք քաջությամբ գդիմի հարյալ միաբանյալ զորացն Աստրիացվոց և ռուսաց՝ ի բազում ճակատս հաղթեցին նոցա: Արևելյան մասն զորաց ռուսաց դեռ ի Կրոնստատ կա և հյուսիսայինն դեռ ոչ էանց ընդ կիրճս Կարպաթյան լեռին: Աննշան տեղիք ինչ անկան ընդ իշխանությամբն Աստրիոյ. բայց եթե և բոլոր Հունգարիա ևս ծնրիցե զինուց երկուց միաբանյալ կայսերությանցն՝ ոչ ինչ առավելու նոցա, քան թե Քեռոնց գերդաստանին զխռովյալ տագերակին ոք վերստին ի տուն անդր թիթալել: - Բայց եթե հաղթեցե՞ն Սաճառն, Լեհք ամենայն յոտն յա՞ռնեն, չաչանք և չերքեզք զեն առնուն, և պարտավորեն զՆիկողայոս Ա. յուրում տան զհոգ կանուլ հավետ, քան յարարս դրացվոյն միջամուխ լինել»¹²¹:

Իրականացնում է Թաղիադյանի ենթադրության միայն առաջին մասը: Հունգարական «հարսին» հարկադրում են վերստին խոնարհվել նախկին տիրոջ առջև և հոկտեմբերի 30-ին թերթը գումում է Հունգարիայի պարտությունը. «Սաճառիս տան անկա՛վ: Գեորգի 50.000-ավ անձնատուր եղև լուսափայլին Պեսկովչայ՝ զորավարին ռուսաց»¹²²:

Հետագա օրերին Թաղիադյանին մեծապես զբաղեցնում է ցարական կառավարության պահանջը՝ լեհ և հունգարացի փախստականներին իրեն հանձնելու վերաբերյալ: Նա թերթում անդրադառնում է Անգլիայի և Ֆրանսիայի հետ՝ թուրքական կառավարության բանակցություններին, որովհետև Ռուսաստանն անգիջում էր («ցարն հրամայե զայն՝ քան թե հայցիցե՛»):

Հունգարացիների պայքարը ներքին կռիվ էր տերության և նրան հպատակ ժողովրդի միջև և չէր սպառնում աշխարհի խաղաղությանը, խորհում էր Թաղիադյանը, ուստի նրա համոզմամբ, ցարը չպետք է միջամտի նրանց գործերին: Բայց զարմանալի կերպով, այն բանից հետո, գրում է նա, երբ հունգարական հրամանատարներն անձնատուր եղան Ավստրիային («որոց զորք նկուն եղյալ, հույս և ակնկալությունք մուրյալք և

¹²¹ «Ազգասեր Արարատյան», 1849, թիվ 31, էջ 248:

¹²² Նույն տեղում, թիվ 35, էջ 280:

երկիր կոխան եղյալ»), իսկ հեղափոխության ղեկավարներն անցան Թուրքիա, ռուսական դեսպանը Թուրքիայից պահանջում է իրենց հանձնել վտարանդիներին: Այդ անարդար պահանջ է, որը նշանակում է մահվան դատապարտել հունգարացի և լեհ գործիչներին: Թաղիադյանն անվարանորեն դատապարտում է ցարական կառավարության ուժային քաղաքականությունը. «Ցարն չունի ամենևին իրավունս միջամուխ լինելու յիր այս, եթե մագիար իշխանք ապստամբք իցեն, յուրյանց իսկ ինքնակալեն ապստամբեցան: Եվ թեպետ զորք Ռուսաստանի մարտեան ընդ նոսա, սակայն իբր օգնականք Ավստրիա՝ և ո՛չ իբրև բուն թշնամիք մաճառաց: Ուստի և առիթ առնել զնոսա թշնամության ընդ դաշնակից և մտերիմ տերությանն Օսմանստանի՝ ուժոյ՝ քան ուշո երևի նշան»¹²³: Ահա թե ինչու նա խրախուսում է Ֆրանսիայի և Անգլիայի դիրքն այս հարցում. «դեսպանք Անգղիո և Գաղղիո վայելուչս արարին ազգացն՝ զորս և երևեցուցանեն՝ թիկն տալով կայսեր օսմանցվոց յարհամարիություն պահանջից ցարին՝ որ զխորշ որոներ զերկրին՝ ի վաղուց հետե»¹²⁴:

Շարունակելով այս հեռակա բանավեճը, հաջորդ համարում Թաղիադյանը զետեղում է մի առակ, որը, հավանաբար նրա հանձնարարությամբ եզրվադոսի հայտնի առակի հենքի վրա կազմել էր Թաղիադյանի Սուրբ Սանդուխտյան դպրոցի աշակերտ Կարապետ Շիրխորը: Առակն այլաբանորեն ներկայացնում էր այն հետապնդումները, որոնց Թուրքիայում ենթարկվում էին հունգարացի գործիչները: Ամբողջությամբ մեջբերում ենք հետաքրքրական այդ ստեղծագործությունը. «Ռուսաց գայլն և թուրքաց գառնն եկին ըմպել ՚ի միևնույն աղբերեն Զոնգարացվոց: «Հա՛, աղաղակեաց գայլն, պղտորե՞ս դու զջուրս, և խառնե՞ս զիմ ըմպելիս: Ո՛չ բնավ երբեք՝ հեզությամբ պատասխանեաց գառնն. քանզի ստորև կամ ընթացից գետոյս, քան զքեզ, և եթե կամիցիմ ես՝ ո՛չ կարեմ առնել գայլ: Այո՛, այո՛, պատասխանեաց գայլն. «Դու չեի՞ր, որ բոլոր հերու զիս թշնամանեիր»: Տե՛ր, հերու ես ծնեալ իսկ ո՛չ էի, կրկնյաց գառնն մեղմությամբ: «Ուրեմն հայր քո էր նա, կամ եղբայր. և քեզ պարտ

¹²³ Նույն տեղում, թիվ 37, էջ 295:

¹²⁴ Նույն տեղում:

է վճարել զվասն մեղացն»: Զայս ասացեալ, 'ի վերա հարձակեցալ գառին, և պատառեր զնա իսկ՝ եթե հովիվ՝ անգղիացին և շուն նորա՝ գաղղիացին, չհասանդին, 'ի ճիշդ ժամուն, արգելեուլ զապիրատն յարյունահեղ դիտմանն»¹²⁵:

1850 թ. ևս Թաղիադյանը հետևում է բանակցությունների ընթացքին և, ի վերջո, բավարարված գործի ընթացքով, հայտնում ընթերցողներին, թե «դադարեցալ խնդիրն Ռուսաստանի 'ի Սեծ Դրանեն զիրօք փախստեիցն հունգարացվոց, որք չպիտին հալածել անտի»¹²⁶:

Հենց այս օրերին էլ Թաղիադյանը գոհունակություն է հայտնում ավստրիական կառավարության կողմից Կոշուտի, ըստ նրա իսկ արտահայտության՝ «երևելի զորավարին հունգարացվոց», կնոջը և զավակներին ազատ արձակելու առթիվ: «Այս դույզն մարդասիրություն, — գրում է նա, — առավել ազդե խաղաղության ապստամբիցն, քան զմիավորյալ զորությունս կայսերությանց աշխարհի»¹²⁷:

Թաղիադյանին շատ էր մտահոգում աշխարհի խաղաղության հարցը: Եթե երկրի ներքին գործերի առիթով ծագած շարժումները նա ընդունում էր, ապա՝ ինչպես տեսանք, անհանդուրժելի էր համարում մի պետության ագրեսիան մյուսի նկատմամբ: Ահա թե ինչու, 1850 թ. հաղորդելով այն լուրը, թե Ռուսաստանը պատրաստվում է պատերազմի՝ այս անգամ Անգլիայի դեմ, Թաղիադյանն իմաստունի ծանրախոհությամբ, և ոչ առանց երգիծական երանգի, դատապարտում է ցարիզմի քաղաքականությունը: «Մի՞ գուցե բազմամարդությունն հավելալ 'ի Մոսկովս և ցարն տեղի չունի վասն նոցա: Հերոս կռիվ, տարիս՝ կռիվ. մի՞շտ կռիվ: — Եվ այն ևս ծրի:

Եթե երկնչի 'ի պարապ պահելո զգորս յուր, աշխատեցուցե զնոսա, 'ի կյանս, քան թե 'ի մահ: Կենագործ նորոգության պետս ունի աշխարհն գրեթե համենայն ուրեք»¹²⁸:

«Աշխարհի կենագործ նորոգութեան» ծրագիրն էլ ինքնին բնութագրում է հայ մեծ լուսավորչի հրապարակախոսական գործունեության ուղղությունը:

¹²⁵ Նույն տեղում, թիվ 38, էջ 304:

¹²⁶ Նույն տեղում, 1850, թիվ 43, էջ 344:

¹²⁷ Նույն տեղում:

¹²⁸ Նույն տեղում, թիվ 53, էջ 423-424:

Հայ մեծ մանկավարժ և գրող Գաբրիել Պատկանյանի խմբագրությամբ 1850-1851 թթ. Թիֆլիսում հրատարակվող «Արարատ» շաբաթաթերթում 1851 թ. տպագրվում է մի գրույց («Տաճկական առած»), որը կրում էր «Ապաբախտության ժամանակի լրումն» խորագիրը: Սա խորհրդանշական մի պատմություն է այն մասին, որ երբ մարդն ընկնում է ծախորդության մեջ, չպետք է վհատվի, քանզի համաձայն չգրված մի օրենքի, ծախորդությունները չեն ավարտվում, մինչև չհասնեն իրենց գագաթնակետին:

Ջրույցի հերոսը Հունգարիայի թագաժառանգն է, որն օսմանցիների դեմ մղված մարտերում գերեվարվում է և վաճառվում իբրև հասարակ ստրուկ: Ձեռքից-ձեռք անցնելով, նա ընկնում է Եպարքոսի մոտ, որը կռահելով իրեն ծառայող ստրուկի ազնվագարն ծագումը, ճշգրտում է նրա ինքնությունը և մեծամեծ նվերներով ուղարկում հայրենիք:

Տարիներ անց Եպարքոսն ընկնում է սուլթանի աչքից, զրկվում պաշտոնից ու արքայական շնորհներից և ծայրահեղ հուսահատության գիրկը նետված՝ մեկնում Հունգարիա, ուր թագավորական գահին բազմած էր նրա հովանավորյալը: Տեղեկանալով պատահածին, հունգարական թագավորն ընդունում է Եպարքոսին, սակայն, հապաղում նրան օգնության ձեռք մեկնելու: Թագավորի հանձնարարությամբ Եպարքոսը զբաղվում է շարքային հովվի աշխատանքով. նրա վիճակը փոփոխություն է կրում միայն մի քանի տարի անց: Սուլթանին հղված հանձնարարական նամակով, շքեղ նվերներով և հատուկ շքախմբով թագավորն իր հյուրին հայրենիք է ճանապարհում: Վերջինիս զարմացական հարցին ի պատասխան՝ թագավորն ասում է, որ չէր կարող ավելի վաղ նրա նկատմամբ բարյացական լինել, քանզի տեսնում էր, որ նրա ծախորդությունները դեռևս ավարտին չեն հասել: Այժմ միայն, երբ համոզվել է, որ հասել է հաջողության շրջադարձի պահը, կատարում է երախտագիտական իր պարտքը¹²⁹:

Հունգարական հեղափոխությունը պարտություն էր կրել:

¹²⁹ «Արարատ», 1851, թիվ 28, էջ 444-446:

Թերթերը գրում էին երկրի կյանքի համեմատական կարգավորման, մասնակիցներին շնորհված ներումների, Կոշուտի արտասահմանյան դեգերումների մասին: Ի՞նչ նպատակ էր հետապնդում Պատկանյանն այս առածի տպագրությամբ: Ամեն բանից առաջ, մենք հիմնավոր վկայություն ունենք այն մասին, որ այս տարիներին նա հետևողականորեն կարդում էր «Եվրոպա» շաբաթաթերթը և հետևաբար կանոնավոր տեղեկություններ ուներ հունգարական հեղափոխության հետ կապված անցուդարձի մասին: Սակայն, 1850 թ., երբ նա սկսում է հրատարակել «Արարատը», գրաքննական նկատառումներով, Յունգարիայի մասին բարյացական տողեր հրապարակել չէր կարող: Ուստի, մնում էր սպասել պատեհ առիթի, որն ընձեռվում է, երբ Պատկանյանի ձեռքն է ընկնում վերոհիշյալ առածը: Իբրև սովորական մի գրույց, նա համձնարարում է ոմն Յ. Ա. Մամիկոնյանցի գրի առնել այն և այնուհետև՝ տպագրում իր թերթում: Սակայն Պատկանյանը մատնում է իր նկատառումները, սկզբից ևեթ շեշտելով, որ խոսքը վերաբերում է իր ժամանակի Յունգարիային: Ահա գրույցի մուտքի խոսքը. «Մաճառի (Վենգրիայի, Ունգարիայի) թագավորի որդին գերի ընկավ օսմանցվոց ձեռքը»: Ընդգծելով Յունգարիայի անունը, ինչպես այն հնչում էր բոլոր լեզուներով, Պատկանյանն ընթերցողների ուշադրությունը հրավիրում էր Յունգարիա հասկացողության վրա, որը 1851 թ. անվերապահորեն պետք է ընկալվեր 1848-1849 թթ. հեղափոխական իրադարձությունների հետ շաղկապված: Այնուհետև՝ Պատկանյանը պատմում է առածը, որի այլաբանությունն ընթերցողները պետք է հասկանային այսպես. հունգարացիների ծախորդությունները շարունակվում են և դեռևս չեն հասել իրենց գագաթնակետին: Նրանք պետք է համբերեն, որովհետև բախտի շրջադարձն անկասելի է:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ՀԱՅ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՄԻՏՔԸ ԵՎ ՀՈՒՆԳԱՐԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

XIX դ. երկրորդ կեսի հայ հասարակական մտքի ձևավորման գործում, ի թիվս քաղաքական այլ գործոնների, որոշակի դեր է կատարել նաև 1848-1849 թթ. հունգարական հեղափոխությունը: Թեև կապը հիշարժան այդ իրադարձության հետ միշտ չէ, որ արտահայտվել է հստակորեն կամ վկայակոչվել հայ գործիչների հրապարակախոսական ելույթներում ու գեղարվեստական գործերում, բայց այդ հեղափոխության հիշատակը պահպանվել է հայ կյանքի մտավոր հորիզոնում և երևան եկել մասնավորապես քաղաքական կյանքի շիկացման պահերին: Նման փուլերից էր 60-ական թվականների ժամանակաշրջանը, որն օրինաչափորեն ներդաշնակում էր Ռուսաստանում ստեղծված հեղափոխական իրադրությանը:

Դրանք Դրիմի պատերազմին հաջորդած տարիներն էին, երբ Նիկոլայ I-ի մահից հետո երկիրը թևակոխել էր տնտեսական վերափոխումների նոր փուլ: Ռուսաստանի կազմում ընդգրկված Արևելյան Հայաստանն ապրում էր տնտեսական և մշակութային կյանքի բուռն առաջընթաց: Քաղաքացիական իրավունք է ձեռք բերում և զարգացման նոր փուլ մուտք գործում գրական աշխարհաբարը, սկզբնավորվում է և առաջընթաց ապրում աշխարհիկ գրականությունը, բարգավաճում են հայկական դպրոցներն ու թատրոնը: 1858 թ. Մոսկվայում և Թիֆլիսում սկսում են հրատարակվել երեք պարբերականներ՝ «Շռաքաղը», «Մեղու Հայաստանին» և ժամանակի դեմոկրատական-լուսավորական առաջնակարգ ամսագիրը՝ «Հյուսիսափայլը»:

XIX դ. 60-ական թվականներին, ինչպես նաև հետագա տասնամյակներում, հայ հրապարակախոսները քննարկելով արևելահայ և արևմտահայ հատվածների հայության ապագա զարգացման հեռանկարների հարցը, ուշադրություն են

դարձնում համանման վիճակում գտնված եվրոպական փոքր ժողովուրդների հատած ճանապարհին, զուգահեռներ որոնում նրանց կողմից հաղթահարվող և իրենց առջև ծառացած խնդիրների միջև:

Այս առումով, տարբեր տասնամյակներում հայ գործիչների համար առավել հետաքրքրություն են ներկայացրել Իտալիան, Լեհաստանը և Յունգարիան: Ճիշտ է, որոշ փուլերում, մասնավորապես ռուս-թուրքական պատերազմի շրջանում, հայ հրապարակախոսներն անդրադարձել են նաև Յունաստանի և Բուլղարիայի պատմության դրվագներին, նրանց ազատագրման հետ կապված պատմական հանգամանքներին, սակայն, XIX դ. վերջին քառորդում հայ հասարակական միտքը կողք-կողքի է ընթացել Իտալիայի և Յունգարիայի պատմության հետ: Հայ մտավորականները և գրողները համոզվելով, որ դիվանագիտական ճանապարհով Արևմտյան Հայաստանի ազատագրման ծրագիրն անիրականալի երազ է միայն, ջանացել են իրենց ժողովրդին, ըստ էության, ծանոթացնել Իտալիայի ազատագրման փորձին, Յունգարիայի օրինակով մատնանշել հետևողական պայքարի գործոնի նշանակությունը՝ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարում:

XIX դ. երկրորդ կեսի հայ հասարակական մտքի վրա անցնջելի հետք է դրոշմել 60-ական թվականների մեծ հրապարակախոս, քաղաքական գործիչ և գրող Միքայել Նալբանդյանը: 1858-1860 թթ. «Հյուսիսսփայլում» տպագրած հոդվածներում և գեղարվեստական գործերում նա քննարկում էր հայ ժողովրդի սոցիալական, քաղաքական և բարոյական զարգացման հեռանկարների հետ կապված հարցերը: Այդ տարիները համընկնում են Նալբանդյանի գաղափարական էվոլյուցիայի վերջին փուլին, երբ լուսավորական-դեմոկրատական նրա աշխարհայացքը որոշակի շրջադարձ է կատարում դեպի հեղափոխական դեմոկրատիզմը: Սակայն, Նալբանդյանին մեծապես զբաղեցնում էր նաև թուրքական բռնապետության լծի ներքո հեծող արևմտահայության ազատագրության հարցը, որը նա քննարկում էր արդեն եվրոպական երկրներում նախապատրաստվող ազգային-ազատագրական շարժումների լայն հետմախորքի վրա:

Նալբանդյանն անդամագրված էր Կոստանդնուպոլսի

«Բարեգործական ընկերությանը», որի հենքի վրա ստեղծված գաղտնի կազմակերպությունը պետք է կապվեր «Եվրոպայում և Ռուսաստանում արծարծվող ազգային-ազատագրական ու գյուղացիական շարժումների և դրանց ղեկավարների հետ»¹³⁰։ Ակադեմիկոս Աշոտ Դովհաննիսյանը նշում է, որ Նալբանդյանի արևմտահայ բարեկամներին «զբաղեցնում էին Ռուսաստանի, Ֆրանսիայի, Անգլիայի, Իտալիայի, Թուրքիայի, Լեհաստանի հետ կապված քաղաքական հարցեր։ Նրանք կապված էին կամ աշխատում էին կապվել իտալական, լեհական և ռուսական շարժման ղեկավարների հետ»¹³¹։ Նրանց «զբաղեցնում էին քաղաքական, ռազմական, կազմակերպական ծանրակշիռ գործեր, մասնավորապես, գործնական ու ամնիջական խնդիրներ, որոնք կապ ունեին «Լոնդոնի պրոպագանդիստների» ռեյուցիոն հեռանկարների հետ»¹³²։

Արտասահմանյան ուղևորությունների ընթացքում Նալբանդյանը հանդիպում էր ունեցել Սաժժինիի և այլ գործիչների հետ, իր թղթապանակներում պահում էր նրա և Գարիբալդիի լուսանկարները։ Ձերբակալության պահին նրա մոտ հայտնաբերվել էր նաև Բակունինի կոչը ("Русским, польским и всем славянским друзьям"), որտեղ խոսվում էր ազգային-ազատագրական շարժումների կազմակերպման և դրանց հեռանկարների մասին։ «Իտալիայի ազատագրումը, — նշված էր այդ կոչում, — մահացու հարված է հասցնում հաբսբուրգյան մոնարխիային, որ կործանվելու է իտալացիների, հույների, ռումինների, հունգարացիների և բոլոր սլավոնների հավաքական ջանքերով, որի հետևանքով խորտակվելու է նաև Թուրքիան։ Այս երկու պետությունների փլատակների վրա պիտի վերակենդանանա իտալացիների, հույների, ռումինների, հունգարացիների և բոլոր սլավոնների ազատությունը»¹³³։

¹³⁰ Աշ. Դովհաննիսյան, Նալբանդյանը և նրա ժամանակը, գիրք 1, Երևան, 1955, էջ 534։

¹³¹ Նույն տեղում, էջ 504։ Այն, որ «Բարեգործական ընկերության» ծրագրերում առաջնահերթ նշանակություն ունեին ազգային-ազատագրական շարժումների ծավալման հարցերը Թուրքիայում, հաստատվում է 1862 թ. Ձեյթունի նշանավոր ապստամբության հետ ընկերության անդամների ունեցած գործունե կապերի փաստով։

¹³² Նույն տեղում։

¹³³ Մեջբերումն ըստ՝ Աշ. Դովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 436-437։

Սեկ այլ հողվածում սլավոններին միավորվելու կոչ անելով, Բակունինը նրանց խորհուրդ է տալիս դաշնակցել նաև հայերի հետ, որոնք ևս արդեն ուղքի են ելնում իրենց անկախության համար: Աշ. Յովհաննիսյանը կուռ փաստերով հաստատում է, որ «Նալբանդյանն աշխատում էր կապել թուրքահայ իր բարեկամներին ոչ թե պաշտոնական եվրոպայի, այլ համանվրոպական ռևոլյուցիոն աշխատանք կազմակերպող Լոնդոնի այն կենտրոնի հետ, որի մեջ «Լոնդոնի պրոպագանդիստներից» գատ, մտնում էին Գարիբալդին, Մաձձինին և Ուրիշները»¹³⁴:

Վկայակոչելով Նիկոլայ I-ի այն խոսքերը, թե ինքը չի կարող հանդուրժել, որ «Թուրքիան բաժանվի մանր հանրապետությունների, որոնք փախուստի շատ հարմար վայր կդառնային Կոշուտների, Մաձձինիների և եվրոպական այլ ռևոլյուցիոներների համար», Աշ. Յովհաննիսյանը գրում է. «Հայաստանի ազատագրման գաղափարը Նալբանդյանն ընձեռում էր հենց՝ հարելով նույն այս «Կոշուտներին և Մաձձինիներին» և գործակցելով նրանց ռուս բարեկամներին»¹³⁵:

Հիրավի, Նալբանդյանը բազմիցս արտահայտել է իր վերաբերմունքն ավստրիական բռնապետության լծի ներքո հեծող ժողովուրդների նկատմամբ: «Նկատողություն» գրախոսության մեջ անդրադառնալով կաթոլիկ եկեղեցու ազդեցությանը Մխիթարյանների գործունեության վրա, Նալբանդյանը ցանկություն է հայտնում կրկնակի լծից ազատագրված տեսնել իտալական ժողովուրդին (այդ թվում և Մխիթարյաններին): «Ե՞րբ արդյոք պետք է չքանա Վենետիկից Ավստրիայի անարգ դրոշը, — գրում է նա, — Ե՞րբ արդյոք վերակենցաղյալ Իտալիայի եռագունյան դրոշակը պիտի տնկվի Ս. Ղազարու վանքին դեմ հանդիման, որ ստրկության վերա հիմնած, ստրկության ձեռով և ստրկության մեջ հարատևող հավիտենական քաղաքը, Ս. Հրեշտակի բերդից հրատարակե խղճի ազատությունը»¹³⁶:

«Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» աշխատության մեջ, որը Նալբանդյանը գրել է արտասահմանում և

¹³⁴ Նույն տեղում, էջ 505:

¹³⁵ Նույն տեղում, էջ 533-534:

¹³⁶ Միքայել Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու վեց հատորով, հ. 4, Երևան, 1983, էջ 384:

1862 թ. տպագրել Փարիզում, մեծ հեղափոխական-դեմոկրատը հայ ժողովրդի ազատագրության հարցը որոշակիորեն կապում է Ռուսաստանի և Եվրոպայի ճնշված ժողովուրդների ազատագրման հետ: Սակայն Նալբանդյանն առհասարակ խոսելով ազգության մասին, հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարը դիտում է իբրև տնտեսական և քաղաքական ազատության համար մղվելիք պայքարի անբաժանելի մասը: Այսպես, հայտնելով այն միտքը, թե «ճնշված մարդերի համար ազգությունն է նոցա միակ դրոշը, որ կարող է բացվիլ բռնակալության ընդդեմ», նա միաժամանակ այդ պայքարի առանձնահատուկ հատկանիշն էր համարում հողի և ազատության ձեռք բերումը, այլապես «ազգությունը ազատություն չէ ժողովրդին. նա փոխում է միայն նորա լուծը»¹³⁷:

Խորապես առելով՝ անկախ այն բանից, թե որ երկրում տիրող բռնապետությունը, Նալբանդյանը մարդկային բռնակալության հետ անհամատեղելի է համարում ժողովուրդների ստրկացումը: Վերոհիշյալ աշխատության մեջ նա ամենաանողոք քննադատության է ենթարկում ժամանակի բռնապետական տերություններին (Անգլիա, Ավստրիա, Պրուսիա, Ռուսաստան, Թուրքիա), որոնք ստրկացնելով փոքր ժողովուրդներին, իրենց գիշատչական քաղաքականությունը ճգնում էին ներկայացնել իբրև այդ ժողովուրդներին քաղաքակրթելու «մարդասիրական» ջանքեր: Հղենք Ավստրիային մվիրված հատվածը.

«- Ավստրիան, յուր 8 միլիոն ձկնարյուն ավստրիացիներով բռնացել է Լոմբարդիո վերա և չէ կամենում Վենետիկը ձեռքից թողնուլ:

«- Քաղաքակրթություն է տարածում:

- Մորթել է Հունգարիան, խեղդել է Գալիցիան, Դալմատիան, Բոհեմիան և այլ գավառներ ու ազգեր:

«- Քաղաքակրթություն է տարածում»:

Սակայն դրանք, ըստ Նալբանդյանի, բռնի ուսուցիչներ են, որ քաղաքակրթություն են տարածում, առանց հարցնելու աշակերտների կամքը, թե ցանկանո՞ւմ են արդյոք նրանք ուսանել: Իրականում՝ «բանտերը են նոցա դպրոցները, պոլիցականք և ժանդարմը՝ դաստիարակները, շղթան՝ հրահանգիչ գիրքը, աքսորը՝ բարոյականությունը վերին աստիճանի կազդու-

¹³⁷ Նույն տեղում, էջ 89, 91:

րելու մարգարան, կախաղանը և գլխապարտության խայտառակ սյունը՝ «*Դուռն ճշմարիտ, որ տանի ի կեանս յաւիտեանական»...*

Կեցցե՛ կատուն, որ յուր փորի համար մուկ է բռնում»¹³⁸ :

Կանգ առնելով ինքնին զավեշտական՝ Մետեռնիխի այն արտահայտության վրա, թե «Իտալիան լոկ աշխարհագրական անուն է», Նալբանդյանն այդ առիթով խորհրդածում է.

«Իսկ Ավստրիան, այդ պոլիտիկական ուրվականը, դյուցաբանական առասպել է, ասում ենք մենք. ազգավ սիրամարզի փետուրներով զարդարված: Այն հողերի վերա, ուր սեղանապիղծ ձեռքով տնկված է ավստրիական անպարծանք դրոշը, 1857, հոկտեմբ. 1-ի տեղեկությանց նայելով, բնակվում է 35,019,056 հոգի ժողովուրդ: Սոցանից (գիրքով հանդերձ) ավստրիացի է միմիայն 7,889,925 հոգին, մնացածը օտար ազգեր, որ գոն. սկլավոն՝ 14,927,925 հոգի, ռումեն՝ 5,632,089 հոգի, մաճառ՝ 4,947,134 հոգի, հայ՝ 13,250 հոգի, իսկ մնացորդը այլ և այլք:

Ասել է թե մոտավորապես 8 միլիոն հոգին բռնացել է 27 միլիոն օտար ժողովրդի վերա և ապրում է ծծելով նոցա արյունը, նոցա կենսական ուժը և զորությունը: Ակամա կիիշես հռչակավոր Ֆոհթի խոսքերը՝ *L'Autriche c'est la damnation éternelle!*

Հերիք չէ այսքանը, դեռևս «Իտալիան լոկ աշխարհագրական անուն է»: Հրամներես, իտալական ժողովուրդը, Վենետիկը, մինչև անգամ և Հռոմը, այն ստրկության հավիտենական օրորոցը ճիշտ քեզ պես են մտածում... Խոսք չկա: Սուրբ Մածոթինիի և սուրբ Գառիբալդիի բարեխոսությունը անպակաս լինին Հաբսբուրգյան տոունի գլխից...»¹³⁹ :

¹³⁸ Նույն տեղում, էջ 87, 88:

¹³⁹ Նույն տեղում, էջ 83-84: Ուշագրավ փաստ է, որ Նալբանդյանն իր վերաբերմունքն է արտահայտել նաև հունգարական ապստամբությունը Նիկոլայ I-ի կողմից ճնշելու կապակցությամբ: Դեռևս 1855 թ. գրած «Հոգևորք» բանաստեղծության մեջ Նիկոլայի անփառունակ այդ քայլը նա ծաղրում է հետևյալ խոսքերով.

«Եթե տեսա ես Ռուսիո մի դաշնակից՝

Նեղության մեջ ալեկոծյալ մի չար բաղդով,

Արծվենշան դրոշակս ես բաց արի

Ու փորձանքից ազատեցի նորան շուտով»: // Նույն տեղում, հ. 1, Երևան,

1979, էջ 50:

Վկայակոչելով եվրոպական ժողովուրդների ապստամբական շարժումները, Նալբանդյանը 1861 թ. Փարիզում տպագրված «Երկու տող» պամֆլետում կշտամբում էր հայերին՝ ճգնաժամային այդ օրերին մանրիկ ծխական հաշիվներով և հոգևորականների դավերով զբաղվելու համար: Հայացք նետելով իր ազգի ամայի և անուկ կյանքի վրա, նա ցավով էր տեսնում, որ օտարի լծի ներքո հայերը հասել են «մի ծայրացյալ թշվառության», ենթարկվելով նաև սեփական հոգևորականների հարստահարությանը: Դիմելով հրապարակախոսական մի հետաքրքիր միջոցի՝ հակադրությունների մեթոդին, Նալբանդյանը դրվատում է այն «պայծառ ճակատները», որոնց վրա հրաբուրբոջ տառերով արդեն գրվում է արյունով սրբված ազատությունը, մինչդեռ ... հայերն իրենց բարոյական մահվան մեջ ճակատները չեն կարողանում հանել սև վերարկուների տակից:

Նա կրկին կյանքի է կոչում եվրոպական ժողովուրդների ոչ հեռավոր անցյալի պատմության հերոսական դրվագները, որոնք թեև, ինչպես նա նշում է, «պատահեցան անբախտության, բայց այդ չեղավ նոցա համար հավիտենական մեռելություն»:
Ավելին, թեև նրանցից շատերը «աքսորվեցան, կախվեցան, գլխատվեցան և այրվեցան, բայց նոցա հոգին կենդանի մնաց, յուրյանց ամայացած հայրենիքի փլատակների մեջ: Հայրենիքի օդը, սարերը և անտառները, խոր գիշերի լռության մեջ, դարերով շշմեցնին այդ նահատակների վերջին րոպեում արած բողոքների արծազանքը»: Սակայն Հայաստանի ամբողջ տարածքում, Արարատից մինչև Տավրոս, հնչում է միայն «հեկեկանքը և հռնդյունքը Հայաստանի որբ գավակների, հարստահարողների և եկեղեցականների գավազանի տակից»¹⁴⁰:

Անկասկած, 1848-1863 թթ. հունգարական, իտալական և լեհական հեղափոխական շարժումները նկատի ունենալով է նա գրում. «Ուրիշ ազգերի նահատակների ուրվականը հալածեցին հարստահարողների կյանքը, մինչև մի ժամանակ, իսկ երբ մինչև բերանը լցված էր փորձության բաժակը, այնուհետև նոցա սգազգեստ ժառանգների վերարկուների տակից դուրս շողացին պողովատիկները»¹⁴¹:

¹⁴⁰ Նույն տեղում, հ. 4, էջ 25, 26:

¹⁴¹ Նույն տեղում, էջ 26:

Մեր կարծիքով, Նալբանդյանն արդեն՝ ավստրիացիների կողմից բազմիցս սիրաշահված ռուսգարացիներին էր ակնարկում, երբ գրում էր. «Նոքա չկաշառվեցան օտարներից... Նոքա չնենգեցին յուրյանց ազգին, նոքա չվաճառեցին յուրյանց գրիչը... Նոքա արհամարհեցին օտարի տված պատիվը և աշխատեցան դժպիհի պատվանշանների տեղ կրել յուրյանց ազգության անունը, այլև վերքերի սպիք, որոնց արժանացել էին մարտիրոսաբար, ազգի ազատության անունով»¹⁴²:

Այստեղ հրապարակախոսը բարձրացնում է այն հիմնահարցը, որի մտահոգությամբ գրիչը վերցրել էր ձեռքը. «Ինչ մնաց մեզ մեր անցած օրերից, ի՞նչ վիճակի մեջ ենք ներկայումս, ի՞նչ ճանապարհ է մեր գնացածը և ո՛ւր է դուրս ելքը»: Այո, ո՞ւր է ելքը: Ելքը մա մատնանշում է այլաբանությամբ. «Տարիները վազում են փայլակի շուտությամբ, օրերը թռչում են, որպես մի վայրկայն: Վախենում ենք և իրավունք ունինք վախենալու, թե մի՞ գուցե, մինչև հայը կշտանա յուր մահանման քնից, լուսինը անդնդասույզ գնա հորիզոնից ներքև»¹⁴³:

Այս պամֆլետում է, որ Նալբանդյանը հրապարակում է հայ ժողովրդին արտաքին և ներքին բռնակալներից պաշտպանելու իր հռչակավոր հավատամքը. այստեղ մա հայտարարում է, որ պայքարի ասպարեզ է իջնում պաշտպանելու «հասարակ ժողովրդի իրավունքը», այն «հարստահարված, ողորմելի, աղքատ և քաղցած» հայի իրավունքը, որը ճնշված է ոչ միայն «օտարներից և բարբարոսներից», այլև իր հարուստներից և հոգևորականներից: Համրահայտ ճշմարտություն է, անշուշտ, որ ազգային-ազատագրական և սոցիալ-քաղաքական իր ծրագրերի իրականացման համար Նալբանդյանը դիմել է մաև եվրոպական ժողովուրդների պայքարի փորձին և արևմտահայերի ազատագրումը պայմանավորել եվրոպական երկրների հետագա հեղափոխական բռնկումներով: Սակայն, խոսելով նրա այդ ծրագրերի մասին, մեր նալբանդյանագետներն ի դեմս հայ մեծ հեղափոխականի հավատամքի, տեսել են միայն սոցիալական հեղափոխությանն անձնագոհաբար զինվորագրված մարտիկին, իրենց ուշադրության ոլորտից դուրս թողնելով եվրոպական հեղափոխություններից կրած նրա

¹⁴² Նույն տեղում:

¹⁴³ Նույն տեղում, էջ 25-26:

ուղղակի ազդեցության հանգամանքը, որն արտացոլվել է նրա հավատամքում:

Հետևենք Նալբանդյանի խոսքին. «Պաշտպանել այն հայի առաքուր կոխված իրավունքը է մեր կյանքի բուն խորհուրդը և նպատակը¹⁴⁴: Եվ այս նպատակին հասանելու համար չէ պիտո ընկրկինք ոչ բանտի և ոչ աքսորի առաջև, ոչ միայն բանիվ և գրչով, այլև զենքով և արյունով, եթե մի օր արժանի լինինք զենք առնուլ մեր ձեռքը և մինչև այժմ քարոզած ազատությունը նվիրել և սրբել մեր արյունով:

Ահավասիկ մեր դավանությունը, որի մեջ տեսանում ենք ազգի փրկությունը»¹⁴⁵:

Պարզ է, իհարկե, որ Նալբանդյանի հեղափոխական-դեմոկրատական աշխարհայացքը հասունանալով ռուսական հեղափոխական շարժումների և հեղափոխական գաղափարախոսության բովում, առնականացել է նաև եվրոպական առանձին ժողովուրդների հեղափոխական պայքարի փորձով: Այս հանգամանքն առ այսօր հստակությամբ չի վերլուծվել:

Զինված ապստամբության ճանապարհով հայ ժողովրդի ազատագրման մասին Նալբանդյանը հրապարակախոսական հոդվածներից բացի արտահայտվել է նաև իր բանաստեղծություններում և նամակներում: Դեռևս 1859 թ. եվրոպական իր շրջագայության ընթացքում, նա գրում է «Իտալացի աղջկա երգը» բանաստեղծությունը, որն իտալական ժողովրդի ազատագրական պայքարի մի հիացական ներբող է: Թեև հայրենասիրական այս բանաստեղծության հերոսն իտալացի ժողովուրդն է, բայց իտալական ազատագրական շարժումների հենքը հնարավոր է դարձրել հայ մամուլի էջերում բարձրաբարբառ ազդարարելու:

*«Մեր հայրենիք շղթաներով
Այսքան տարի կապկապած,
Յուր քաջ որդոց սուրբ արյունով
Պիտի լինի ազատված»:*

¹⁴⁴ Ինչպես տեսանք, Նալբանդյանը հայերի իրավունքը ոտնակոխ արված էր համարում նախ «օտարներից և բարբարոսներից» և ապա միայն ներքին շահագործողներից և բռնակալներից («ներքին թուրքերից», ինչպես անվանում է նրանց Նալբանդյանի մեծ ժամանակակից Դոբրոյուբովը):

¹⁴⁵ Նույն տեղում, էջ 18-19:

Իտալացիներն իրենց ազգային դրոշը պարզած նետվում են մարտի դաշտ՝ կործանելու ավստրիական շղթաները: Իտալիայի ազատագրումը ձեռք է բերվում նրա որդիների արյամբ և բանաստեղծը երագում է այն պահը, երբ իտալացիների ազատասիրական խանդավառության կեսը կամ զեթ կեսի կեսն ի հայտ գար հայերի մոտ: Նա կշտամբում է հայերին և միաժամանակ քաջալերում նրանց.

*«Ամենայն տեղ մահը մի է,
Մարդ մի անգամ պիտ մեռնե.
Բայց երանի՜, որ յուր ազգի
Ազատության կը զոհվի»¹⁴⁶:*

Ոգևորված եվրոպական ժողովուրդների ազատագրական պայքարի փորձով՝ Նալբանդյանը հայրենասիրական և քաղաքացիական սխրագործության այս հանճարեղ բանաձևն ավանդել է հետագա դարերին, ապագա սերունդներին:

1861 թ. հունվարին, Յնդկաստան մեկնելու ճանապարհին, Նալբանդյանը Մեսիմայի նավահանգստում տեսնում է Գարիբալդիի բանակի երիտասարդ կամավորների մի մեծ խմբի. «Այդ վառվռում երիտասարդների դեմքի վերա գծագրված էր ուրախություն և խղճի հանգստություն,— գրում է նա,— մոցա ճակատը փայլում էր արժանավոր պարծանքով»: Այնուհետև՝ Նեապոլում նա տեսնում է, թե ինչպես՝ նախկինում Բուրբոնների փառքը մարմնավորող արծանները՝ «ջարդուփշուր խորտակված թավալվում են փոշու մեջ»: Հռոմի համար ևս, կանխագուշակում է Նալբանդյանը, շուտով կինչի «ճակատագրական գանգակը»¹⁴⁷:

Խոսելով մամուլի ազատության մասին Նեապոլիտանիայում, Նալբանդյանն իր բարեկամ, արևմտահայ դեմոկրատ գործիչ Հ. Սվաճյանին գրած նամակում հայտնում է. «Աղեքսանդր Տյունա (հայրը) գտանվում է այստեղ և հրատարակում է մի օրագիր «Ամկախություն» անունով: Այդ օրագիրը սորանից երեք օր առաջ ասում էր, թե շուտով պիտի ազատվին և՛ Հռոմը, և՛ Լոմբարդիան և՛ Հունգարիան և՛ Լեհաստանը»:

¹⁴⁶ Նույն տեղում, հ. 1, էջ 107-108:

¹⁴⁷ Նույն տեղում, հ. 5, երևան, 1984, էջ 112, 115:

Նալբանդյանը տեսնելով Իտալիայի ազատագրումը, հիշում է իր ազգի տկարությունը և «այրվում է հոգին»: Սվաճյանին հղած այս մամակում մա պարզաբանում է ազգային-ազատագրական պայքարի իր ծրագրի էությունը, այն է՝ հետևել լեհերի, հունգարացիների, իտալացիների օրինակին: «Եվրոպայի դեպքերը ի՞նչ վերաբերություն ունին մեզ, կասեն ինձ մի տեսակ դժոխադեմ մարդիկ, և իրավունք ունին, որովհետև ինքյանք օր ու գիշեր պարապած են յուրյանց թշվառ արեղաների գործերով, կրոնական վեճերով և միություն խափանելով:

Այո՛. վերաբերություն չունին, կրկնում են ես, ինչու որ դուք արժանի չեք վերաբերություն ունենալու եվրոպական ազգերի հետ, անցանել այն փրկության կամուրջը, որից անցանում են ուրիշ ազգեր»: Այնուհետև արդեն խոսում է բանաստեղծը. «Էտնան և Վեզուվին ծխվում են. Արարատի հին վուլկանի մեջ մի՞թե կրակ կմնա իսպառ...մահաբեր մտածություն»¹⁴⁸:

Անցնում է մեկ տարի: Իտալիայում բոցկլտում է ազգային ազատագրական պայքարի բոցը: Ռուսաստանում հզորանում են հեղափոխական շարժումները: Նալբանդյանն անցնում է Յնդկաստան, այնուհետև՝ ուշ աշնանը վերադառնում Կոստանդնուպոլիս, կանգ առնում այստեղ և զբաղվում արևմտահայության հարցերով: Լոնդոնում մա բազմիցս տեսնվում է Գերցենի և Օգարյովի հետ: Այդ օրերին Մոսկվայում շարունակում էր հրատարակվել «Յուսիսսափայլ» ամսագիրը, որտեղ 1861 թ. (թիվ 11) հրատարակվում է «Իտալացի աղջկա երգը» բանաստեղծությունը: Յնդինակի բացակայության այդ օրերին ո՞ւմ մախաճեռնությամբ էր տպագրվում բանաստեղծությունը: Յավանաբար այդ հարցով զբաղվում էր Նալբանդյանի զինակից, ժամանակի հայ լուսավորական շարժման մասնակից Սովսես Բուդաղյանը: Նա մոտ էր կանգնած «Յուսիսսափայլին», և ինչպես ենթադրում է Աշ. Յովհաննիսյանը, հենց Նալբանդյանի խորհրդով էր դիմել ցարական կառավարությանը՝ 1860 թվականից իր խմբագրությամբ մի թերթ հրատարակելու դիմումով: Այն իրողությունը, որ Ներքին գործերի մախարարությունը՝ «առանձին պատճառներե հորդորված լինելով» 1860 թ. փետրվարին մերժում է Բուդաղյանի հայցը, վկայում է մրա

¹⁴⁸ Նույն տեղում, էջ 116:

հայացքների արձատական ուղղվածության մասին: Այդ բանի լավագույն վկայությունն է և այն, որ հայ իրականության մեջ Բուդադյանն առաջինն է թարգմանել Շանդոր Պետեֆիի բանաստեղծությունները: Եվ որ արդեն չափազանց խորհրդանշական է, «Յուսիսափայլի» մինևույն 11-րդ համարում, Նալբանդյանի բանաստեղծության հետ կողք-կողքի Բուդադյանը զետեղում է Պետեֆիի «Երգ մի գորականի» և «Դեպի գարունը» բանաստեղծությունները: Հարկավ, Պետեֆիի ազատասիրական «Երգ մի գորականի» ստեղծագործության և հունգարական հեղափոխության նահատակների հիշատակը սրբացնող «Դեպի գարունը» բանաստեղծության թարգմանությունը 60-ական թվականների հայ դեմոկրատ գործիչների պատասխանն էր երկրում լայնորեն ծավալվող հեղափոխական իրադրության պահանջներին:

Գիշտ է, Բուդադյանն իր թարգմանության մեջ չի նշել Պետեֆիի անունը և միայն վերնագրից հետո ավելացրել է «Հունգարացվոց բանաստեղծությունից առած» արտահայտությունը, բայց ամեն դեպքում, «Յուսիսափայլի» 1861 թ. 11-րդ համարը հայ իրականության մեջ լայն ճանապարհ է հարթել Պետեֆիի պոեզիայի հաղթարշավի համար¹⁴⁹:

1862 թվականն իր հետ բերում է ռեակցիայի շունչը: Ինքնակալությունը հետապնդում է առաջադիմական կազմակերպությունները, մամուլը և գրականությունը: Հեղափոխական խմբակները ցաքուցրիվ են լինում, բազմաթիվ գործիչներ, որոնց թվում և Նալբանդյանը, 1862 թ. ամռանը ծերբակալվում են և աքսորվում: Փակվում են ռուսական հեղափոխական-դեմոկրատական օրգանները: 1864 թ. դադարում է հրատարակվել և «Յուսիսափայլը»: Սակայն 60-ական թվականների առաջադիմական միտքը, Նալբանդյանի գրական-հրապարակախոսական ժառանգությունը շարունակում են իրենց ճանապարհը նաև հետագա տասնամյակներում:

¹⁴⁹ Գրեթե մի ամբողջ հարյուրամյակ այդ բանաստեղծությունները վերագրվել են Բուդադյանին, բանասերներին ենթադրել տալով, թե բանաստեղծը հունգարական բանաստեղծության վերաբերյալ իր ժանրությունը տվել էր գրաքննիչների ուշադրությունը շեղելու համար: Սիայն 1954 թ. Ս. Սարինյանը ճշգրտեց բանաստեղծությունների հեղինակի ինքնության հարցը (տես Ս. Սարինյան, Սի փաստի ճշտում // «Գրական թերթ», 1954, թիվ 14):

Նալբանդյանի ձերբակալությունից անցել էր ընդհամենը երկու ամիս, երբ Թիֆլիսում հրատարակվող «Մեղու Հայաստանի» շաբաթաթերթում հրատարակվում է Նալբանդյանի ժամանակակիցներից մեկի՝ իրավաբանական գիտությունների թեկնածու, հայ լուսավորական շարժման ակտիվ մասնակից Միքայել Միանսարյանի հոդվածը¹⁵⁰, որը թարգմանված էր "Kavkaz" լրագրից և նվիրված էր հայ հին մատենագրության հարցերին:

Միանսարյանը միաժամանակ առաջ էր քաշում ազգային երգերի տպագրության անհրաժեշտությունը, հայ խմբագիրներին կոչում իրենց թերթերում զետեղել անցյալի հայ մամուլի էջերում արդեն հրապարակված բանաստեղծությունները, գրի առնել և տպագրել ժողովրդի մեջ տարածում գտած բանավոր երգերը: Նա նպատակահարմար էր գտնում հատվածաբար արտատպել նաև Ռափայել Պատկանյանի «Ազգային երգարանի» բանաստեղծությունները:

Այդ հոդվածում թվարկված՝ արտատպության արժանի երգերի թվում՝ «Արաքսի արտասուքը», «Իտալացի աղջկա երգը» բանաստեղծություններից անմիջապես հետո, Միանսարյանը հիշում է «Երգ մի գորականի» բանաստեղծությունը, առանց հեղինակի հիշատակության և դարձյալ՝ «Հունգարացվոց բանաստեղծությունից առած» ծանոթագրությամբ: Այնուհետև՝ «Մեղու Հայաստանիի» խմբագիրը թերթի (թիվ 37-38) լայնածավալ էջերը տրամադրում է Միանսարյանին, որը հրապարակում է իր հավաքած բազմաթիվ երգերը: Դրանց կցված առաջաբանում, ի դեպ, գրված էր. «Դժվար չէ հասկանալ, թե ինչ մեծ ու խորհրդավոր ներգործություն ունին ազգային լեզվով ասած երգերը *հայրենի լեզուն սովորելու և տարածելու համար ազգի միջումը և ազգայնության և հայրենասիրական ոգին արթնացնելու և զարգացնելու*»: Ուշագրավ երևույթ է և այն, որ այս առաջաբանից հետո տպագրված բանաստեղծու-

¹⁵⁰ Մ. Միանսարյան, Սատենագրություն հայոց // «Մեղու Հայաստանի», 1862, թիվ 37-38:

թյունների շարքում առաջինը գետեղված էր Պետեֆիի «Երգ մի զորականի» երգը:

Այսպես, 60-ական թվականների հայ ազգային կյանքի զարթոնքին օժանդակելու, «ազգայնության և հայրենասիրական ոգին արթնացնելու և զարգացնելու» գործին կոչված հայ երգերին էր միափյունվում հունգարական երգը և այն էլ՝ առաջին շարքում: Նրան հաջորդում էին «Տեր, կեցո դու զհայս», «Իտալացի աղջկա երգը», «Արաքսի արտասուքը», «Ազատություն» և այլ բանաստեղծություններ:

Մի քանի տարի անց Միանսարյանը տպագրում է «Քնար հայկական» (Ս. Պետերբուրգ, 1868) մեծարժեք երգարանը, որն ազգային երգերի միջոցով կոչված էր օգնելու մայրենի լեզվի զարգացմանը: Միևնույն հետևողականությամբ, ինչպես և «Մեղու Հայաստանի» թերթում, Միանսարյանն իր գրքի 4-րդ գլխում, որը նվիրված էր «Ազգային (հայրենյաց), ազգասիրական և զինվորական երգերին», կրկին առաջինը գետեղում է «Երգ մի զորականի» բանաստեղծությունը:

60-ական թվականների վերջերին արևելահայ հրապարակախոսական միտքը վայրէջք է ապրում: 1866 թ. Սարատովի աքսորավայրում վախճանվում է Նալբանդյանը: Դադարում են լույս ընծայվել հայ գրական հանդեսները: Չափավոր ծրագրով և թոշնած գրական էջերով շարունակվում էր հրատարակվել «Մեղու Հայաստանի» թերթը: 1864 թ., Մոսկվայի համալսարանի շրջանավարտ Խորեն Ստեփաննի ջանքերով, սկսվում է հրատարակվել մի նոր հանդես՝ «Հայկական աշխարհը», որի լուսավորական-մանկավարժական համեստ ծրագիրը շատ բան չէր խոստանում հայ ընթերցողին: Սակայն, չնայած դրան, Ստեփաննեն ամսագրում տպագրում է մի շարք թարգմանական գործեր, որոնք աչքի էին զարնում իրենց ազատասիրական միտվածությամբ (Թոմաս Մուրի «Պատանի երգիչ», Լոնգֆելլոյի «Գերու երագ», սերբերեն լեզվից «Մայր» բանաստեղծությունները): Թեև 1866 թ. Հունգարիայում տիրում էր քաղաքական ինչ-որ հավասարակշռություն, բայց Ստեփաննեն նպատակահարմար է գտնում 1867 թ. տպագրել Լեոպարդիի հռչակավոր «Հունգարական երգը», որը, անկախ ստեղծված իրադրության հանգամանքից, հունգարացիներին հավատով էր տոգորում

գալիք իսկական ազատության նկատմամբ¹⁵¹։ XIX դ. 30-ական թվականներին գրված այդ բանաստեղծությունը հայ ընթերցողին կարող էր հույս ու կորով ներարկել նրա բարոյական վերածնության համար մղվող պայքարում։ Լեռպարդիի երգը հայրենիքին հավատարիմ լինելու և այն պաշտպանելու ազնիվ մի կոչ է։ Թեև Հունգարիան շատ ծանր օրեր է տեսել, ասված է այդ երգում, բայց ազգը մնացել է աներեր. նա հառաչում է, սակայն, կենդանի է և անկարելի է, որ նրա տառապանքն անպատասխան մնա.

*«Կարելի չէ! կարելի չէ!... ազգակիցներ!
Մի ուրիշ ժամ կգա, այո,
Կգան օրեր, որոնց մեզմից յուրաքանչյուր
Սպասում է մեծ, սուրբ հավատով»։*

XIX դ. 70-ական թվականներին հայ մտավոր կյանքում սկսված վերելքի նոր շրջանը, որը դարձյալ ներդաշնակում էր ռուս իրականության մեջ ծավալվող հեղափոխական վերընթաց շարժման երկրորդ փուլի ոգուն, հանգեցնում է հայ պաբերական մամուլի և գրականության ծաղկմանը։ 1872 թ. հայ նշանավոր հրապարակախոս Գր. Արծրունին սկսում է հրատարակել եվրոպական բնույթի առաջին լավագույն լրագիրը՝ «Մշակը»։ 1876 թ. հիմնադրվում է «Փորձ» գրական հանդեսը՝ «Հյուսիսափայլից» հետո ժամանակի աչքի զարնող հայ գրական օրգանը։ 1882 թ. «Փորձի» հրատարակության դադարումից հետո, դրա խմբագիր Աբգար Հովհաննիսյանը հիմնադրում է մի նոր պարբերաբեր՝ «Արծագանքը» (1882-1898)։ Եթե «Մշակն» իբրև լրագիր հնարավորություն չունեի ազատորեն ծավալվել գրական հարցերի ոլորտներում, ապա վերջին այս երկու օրգանները դառնում են այն հիմնական գրական կենտրոնները, որոնց շուրջը համախմբվում է ժամանակի գրական գործիչների ընտրանին։

Կովկասում ստեղծված հենց այս գրական օջախն էլ 80-90-ական թվականներին դառնում է Պետեֆիի պոեզիայի և 1848-1849 թթ. հունգարական հեղափոխության քարոզիչը հայ

¹⁵¹ [Տե՛ս Մ. Դ. Մխիթարյան, *Խորեն Ստեփանեի «Հայկական աշխարհ» ամսագիրը, Երևան, 2002, էջ 97-98։*]

իրականության մեջ: Պետեֆիի պոեզիայի մասսայականացման պատիվը պատկանում է բանաստեղծ և թարգմանիչ Գևորգ Բարխուդարյանին: Նրա թարգմանությամբ «Փորձում» տպագրվել են Պետեֆիի հինգ բանաստեղծությունները («Երկու ճանապարհորդ», «Իմ խնդրած մահը», «Հայրենիքի մասին», «Երեք սրտի պատմություն», «Շղթա»): «Արձագանքում» ևս հրատարակվել են նրա հինգ բանաստեղծությունները («Իմ կինը և իմ սուրը», «Որդուն ծնունդին», «Երկաթուղի», «Իմ սիրտը», «Երջանիկ մարդ»): «Արձագանքում» տպագրվելու նպատակով գրաքննությանը ներկայացված «Սեր և ազատություն» բանաստեղծությունը միտումնավորության պատճառաբանությամբ մերժվել է 1882 թ.¹⁵²:

Սոսկվայի համալսարանի շրջանավարտ Բարխուդարյանի ծանոթությունը Պետեֆիի պոեզիայի հետ, հավանաբար կայացել է «Հյուսիսափայլի» խմբագրատանը, որտեղ նա հաճախ էր լինում: Իր առաջին բանաստեղծությունները և թարգմանությունները նա տպագրել է «Հյուսիսափայլում», այնուհետև՝ աշխատանքի անցնելով Թիֆլիսում, միաժամանակ նվիրվել է գրական-թարգմանչական աշխատանքներին:

Բարխուդարյանը Պետեֆիից թարգմանել է քսան բանաստեղծություն, որոնցից տասնինը ղեկավարված են 1897 թ. տպագրված նրա բանաստեղծությունների ժողովածուի մեջ¹⁵³: Այն, որ Բարխուդարյանը հայ ժողովրդի համար ստեղծված աղետալի ժամանակներում իր ընթերցողներին էր մատուցում պայքարի և ազատության կոչող հունգարիացի մեծ բանաստեղծի երգերը, նրա մեծագույն վաստակն է: Բայց նրա պոեզիան ունի և առանձնահատուկ մի երանգ, որն առ այսօր վրիպել է մեր գրականագետների ուշադրությունից: Խոսքը վերաբերում է նրա իսկ բանաստեղծությունների պետեֆիական շարքին, որն անվերապահորեն կրում է Պետեֆիի պոեզիայի ազդեցությունը: Հայերն ունեին ազգային-ազատագրական պայքարի իրենց երգիչը, որը Ռ. Պատկանյանն էր: Կես դար շարունակ, սկսած 50-ական

¹⁵² Տե՛ս Մ. Գ. Մխիթարյան, XIX դարի երկրորդ կեսի արևելահայ պարբերական մամուլի պատմությունից («Փորձ», «Արձագանք»), Երևան, 1976, էջ 215-216, 332:

¹⁵³ Տե՛ս Գևորգ Բարխուդարյանի բանաստեղծությունները, Թիֆլիս, 1897:

թվականներից, նա իր հայրենակիցներին ազատագրական պայքարի էր կոչում ընդդեմ թուրքական բռնապետության:

Բարխուդարյանը կրելով հանդերձ Պատկանյանի ազդեցությունը, որն ի հայտ է գալիս մասնավորապես նրա այլաբանական երգերում («Ձմեռ», «Փոթորիկ», «Յույս», «Արծազանք»), առավելապես կապված է Պետեֆիի պոեզիայի հետ, կրում է նրա հստակ հարցադրումների ազդեցությունը, շնչում նրա ջինջ հայրենասիրությամբ, օգտագործում նրա խոսքի երանգները: Անգամ հայրենիքին դիմելու Պետեֆիի մտերմիկ իմտոնացիան արտացոլվել է Բարխուդարյան-բանաստեղծի երգերում: Այս իմաստով, ուշադրություն են գրավում Բարխուդարյանի «Հայ գինվոր», «Տաճկահայաստան և հայք», «Հայաստան» խորագիրը կրող բանաստեղծությունները, որոնցից առաջինը հիշեցնում է Պետեֆիի «Հրաժեշտը», իսկ մյուսները՝ հունգարացի բանաստեղծի լավագույն երգերը («Հայրենիքի մասին», «Հունգարացի եմ ես», «Հայրենասիրական երգ», «Կյանք կամ մահ» և այլն)¹⁵⁴:

Պետեֆիական խանդավառմանը Բարխուդարյանը դիմում է հայրենիքին, հիշում նրա գեղեցկությունը, երբեմնի փառքն ու մեծությունը, դրան հակադրելով ներկայի անազատ վիճակը: «Տաճկահայաստան և հայք» բանաստեղծության մեջ նա կշտամբում է հայրենակիցներին, որոնք համակերպվում էին իրենց վիճակի հետ.

*«Իմ հայ եղբայրը ստորուկ է և գերի,
Նա չէ վայելում բարիքն իր երկրի,
Նա խեղճ է, տգետ, մերկ է ու քաղցած,
Տանը և դուրսը անխնա հալածված:*

*Հայ մարդ, մինչև ե՛րբ դու պիտի այդպես
Կյանք վարես անբան անասունի պես,
Մինչև ե՛րբ արդյոք պիտի ծանրանա
Օտարի լուծը պարանոցիդ վրա:
Գլխիդ զարկում եմ - դու ծայն չես հանում,
Տունդ քանդում եմ - դու չես բողոքում,*

¹⁵⁴ Բարխուդարյանի «Զորեղ ծար» բանաստեղծությունն անկասկած գրված է Պետեֆիի «Գինի խմենք» երգի ազդեցության ներքո:

*Ամեն բան, ինչ որ սուրբ է քեզ համար,
խլում, պղծում են - դու հեզ ես, խոնարհ:*

.....
*Բայց ո՞վ կազատե քեզ ստրկությունից,
Օտա՛րը: Ջուր է հույսդ օտարից:
Թե փափագում ես դու ազատության,
Պետք է ինքդ փշրես քո շղթան»:*

90-ական թվականների կեսերին գրված «Հայաստանին» բանաստեղծության ոգին ավելի լավատեսական է: Հավանաբար 1890-ական թթ. կեսերին Արևմտյան Հայաստանի համար նախատեսվող «մայիսյան բարենորոգումների» օրերին է գրվել այդ բանաստեղծությունը, որտեղ խոսվում է այն մասին, թե ազատության արեգակը պետք է շուտով լույս տա հայերին: Պատմական իրերի ընթացքը, սակայն, ապացուցեց, որ բանաստեղծի լավատեսությունը հիմնադուրկ է: Արևմտահայությունը դրան հաջորդած տարիներին անցնում է զանգվածային կոտորածների, 1909 թ. Ադանայի ջարդերի բովից, որը բանաստեղծին անդառնալիորեն հանգեցնում է ազգային ազատագրական պայքարի գաղափարին: 1908 թ. «Լումայի» 2-րդ գրքում նա տպագրում է Պետեֆիի «Փառավոր մահ» բանաստեղծության թարգմանությունը՝ դրան կցելով կենսագրական տեղեկություններ հունգարացի բանաստեղծի մասին¹⁵⁵: Հայտնի է, որ այդ բանաստեղծության մեջ Պետեֆին մարգարեացել է: Խոսելով հանուն ստրուկ ժողովուրդների ազատության բռնության դեմ կռվելու իր հաստատակամության մասին, նա ցանկություն է հայտնել զոհվելու դեպքում թաղվել եղբայրական գերեզմանում, այն հերոսների հետ մեկտեղ, որոնք կզոհվեն «սրբազան ազատության համար»:

¹⁵⁵ «Ալեքսանդր Պետեֆի, հունգարացոց ամենամեծ քնարերգու բանաստեղծը ծնվել է 1823 թ. հունվարի 1-ին: Իբրև ջերմ և ոգևորված հայրենասեր, նա, իհարկե, չէր կարող անտարբեր վկա լինել և չմասնակցել հունգարացոց 1849 թ. մեծ ապստամբությանը Ավստրիայի դեմ, և մտավ ազգային զորքի մեջ, քաջությամբ կռվելով յուր հայրենիքի թշնամիների դեմ: Բայց նույն թվականի հուլիսի 31-ին, մի արյունահեղ ծակատամարտից հետո, 25 տարեկան ծաղկափթիթ հասակում, հանկարծ անհայտացավ նա - ոչ սպանվածների մեջ գտնվեցավ, ոչ էլ գերի ընկածների մեջ»: // «Լումա», 1908, 2-րդ գիրք, էջ 9:

«Լուսնայի» խմբագիր Աղանյանը, որը տարիներ շարունակ Բարխուդարյանի հետ աշխատակցել է «Արծազանքին», նպատակահարմար է գտնում XX դ. ընթերցողներին ևս խրախուսել հունգարացի հայրենասերների օրինակով: Կոչումով լինելով շատ ավելի թարգմանիչ, քան բանաստեղծ, Բարխուդարյանն ընտիր թարգմանությամբ հայ ընթերցողներին է ներկայացրել Պետեֆիի բանաստեղծությունները, որոնցից մի քանիսը հնչում են գրեթե բնագրի հարազատությամբ: Այսպես, 1877 – 1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի օրերին թարգմանելով «Հայրենիքի մասին» բանաստեղծությունը, Բարխուդարյանն, ասեք, հայերի հետ խոսում էր նրանց վշտերի մասին, խոսում այն պատկերներով, որոնք մի զարմանալի զուգադիպությամբ տարիներ անց պետք է նշմարվեին Վ. Տերյանի «Երկիր Նաիրի» երգերի շարքում.

*«... Այո, երբեմն մեծ էր Մաճառը,
Մեծ էր հաղթությամբ, մեծ էր և հզոր.
Նորա մեծության փայլուն աստղերը
Բոլոր աշխարհում հանգել են այսօր:*

*Վաղուց աչքերս չէին արտասվել,
Բայց այժմ նոքա ահա՝ թրջվեցան,
Արդյոք սա ցո՞ղն է քո արշալույսի,
Թե վերջալույսի, ո՞վ Մաճառիստան»:*

*
*
*

XIX դ. 80-90-ական թվականներին «Փորձի» և «Արծազանքի» շրջանակից դուրս ստեղծվում է գրական մի կենտրոն ևս, որն ի թիվս գրական-բանասիրական հարցերի արծարծման, հավանաբար հետամուտ էր նաև ազգային-ազատագրական պայքարի կազմակերպման գործի օժանդակմանը: Այդ կենտրոնի գործիչները համախմբված էին երիտասարդ բանասեր, հրատարակիչ Սկրտիչ Բարխուդարյանի շուրջը, որը 1888 թ. հիմնադրում է «Համդես գրականական և պատմական» մատենաշարը: Այս հրատարակության 7 հատորները լույս են տեսել մինչ 1896 թ.: Մայրաքաղաքում գործող հայ մտավորականության նորաստեղծ այս բջիջը պարբերականի էջերում

հանդես էր բերում այնպիսի միտումներ, որոնք գրաքննական դժվարությունների պատճառով անհնար էր արտացոլել կովկասյան մամուլում¹⁵⁶։

Դեռևս 1878 թ. Գ. Բարխուդարյանը Նալբանդյանին նվիրված իր բանաստեղծության մեջ շեշտում էր այն միտքը, որ «անգութ մահը» խանգարել էր նրան իրականացնելու մի «սուրբ գործ», որի հաղթանակին սպասում էին հայ գործիչները։ Այսպես, ուրեմն, հայ երիտասարդության համար կար այդ «սուրբ գործը», որի իրականացմանը նա փորձում էր նվիրաբերել իր ուժերը 70-90-ական թվականներին։

Սակայն ծանոթությունն այդ ժամանակաշրջանի հայ հրապարակախոսության հետ, բացահայտում է մի շատ կարևոր հատկանիշ։ Կրելով հանդերձ Նալբանդյանի հայացքների բարեբեր ազդեցությունը, հետագա տասնամյակների հայ հրապարակախոսները, մինչև հայ սոցիալ-դեմոկրատական կուսակցության ասպարեզ ելնելը, ողջ հայ ժողովրդի սոցիալական և ազգային ազատագրության՝ Նալբանդյանի ներդաշնակ ծրագրից անջատելով սոցիալական հեղափոխության գաղափարը, իրենց գործունեության կիզակետում կենտրոնացնում էին միայն արևմտահայ ժողովրդի ազատագրության խնդիրը։

Այս առումով, բացառություն չէր կազմում և «Հանդեսի» խմբագրությունը, որի առաջատար բանաստեղծներն էին դարավերջի հայ ականավոր քնարերգուներ Հովհաննես Հովհաննիսյանը և Ալեքսանդր Ծատուրյանը։ Բացի նրանց գործերից, «Հանդեսի» էջերում տպագրվել են Գ. Բարխուդարյանի «Արծազանք» և «Ձմեռ» բանաստեղծությունները, որոնք 1882 թ. Կովկասի գրաքննությունն արգելել էր տպագրել «Արծազանքում», Լուի Բուլիեի «Սպիտակ գգեստ» բանաստեղծության թարգմանությունը, Թոմաս Մուրի «Խաղաղություն ձեզ» բանաստեղծությունը՝ նվիրված հայրենիքի փրկության համար զոհված հերոսների հիշատակին։ Շեշտված հայրենա-

¹⁵⁶ 1865 թ., համաձայն ինքնակալության գրաքննական նոր կանոնադրության, մայրաքաղաքի մամուլի օրգանները հրատարակվում էին առանց նախնական գրաքննության, իսկ ժայրամասերում (այդ թվում և Կովկասում) պահպանվում էր գրաքննական հին համակարգը, որը խստությունները հաճախ հասցնում էր ժայրահեղությունների։

սիրական ուղղություն ուներ Մարտովի «Դու չես գրավիլ, իմ հայրենիք, գեղեցկությամբ ոչ ոքին» բանաստեղծությունը: Տպագրվել է նաև Բայրոնի «Հրեական մեղեդիներ» շարքը, որին կցված էր Վեսելիվսկու՝ «Բայրոնը Մխիթարյանների մոտ» հոդվածը: Ռուս գիտնականն այս հոդվածը կառուցել էր Բայրոնի և Ավգերյանի այն գրույցների հիման վրա, որոնք խորհրդանշում էին հայ ժողովրդի վերածնության հեռանկարը և ցույց էր տալիս նրա ազատագրման ուղիները թուրքական լծից:

«Հանդեսի» 1894 թ. 5-րդ գրքում Բարխուդարյանը գետն-դուռն է Պետեֆիի «Իմ կինը և իմ սուրը» բանաստեղծությունը, որը պետք է օգներ դուրս բերելու հայությանն այն հանդարտ վիճակից, որում նա գտնվում էր և ոտքի հաներ այն պետության դեմ, որն արևմտահայ հրապարակախոս Արփիարյանի դեպուկ բնութագրությամբ՝ պաշարել էր իր երկրի հայ բնակչությանն իբրև թշնամական բանակի: Անկասկած, Ծատուրյանը լավ էր ծանոթ Պետեֆիի պոեզիային և թարգմանել էր նրա բանաստեղծություններից երկուսը («Պոետ և գինի», «Իմ սերը»): Պետեֆիին քաջածանոթ էր նաև համաշխարհային գրականության մեծ գիտակ Հովհաննիսյանը, որը թարգմանել էր նրա «Ես դուրս եմ գալիս դաշտը ամայի» քնարական բանաստեղծությունը: Հարկ է ենթադրել, որ 1889 թ. իր արտասահմանյան ճանապարհորդության ընթացքում Հովհաննիսյանը Կոստանդնուպոլսում և Վիեննայում հնարավորություն է ունեցել զուգահեռներ անցկացնելու ավստրիական լծից հարաբերականորեն ազատագրված հունգարական ժողովրդի և թուրքական լծի ներքո տառապող արևմտահայերի ճակատագրերի միջև: Հովհաննիսյանի մի շարք բանաստեղծությունները մեզ հիմք են տալիս հայտարարելու նույնիսկ, որ հայ բանաստեղծը որոշ ազդակներ է ստացել հունգարական պոեզիայից:

«Հանդեսում» տպագրված Ծատուրյանի և Հովհաննիսյանի բանաստեղծությունները տոգորված են հայ ժողովրդի ազատագրության ազնիվ խոհերով: Ծատուրյանի «Ախ, երան չէ՞» բանաստեղծության քնարական հերոսը պետեֆիական շնչով երազում է ահեղ մի ճակատամարտ, որը հնարավորություն ընծեմեր ցավատանջ հայորդուն սրով ձեռք բերելու ցանկալի ազատությունը:

*«Այնտեղ միաշունչ, միաբան հոգով
Մենք կհնչեինք երգն արիության,
Եվ հաղթանակի մեծաշուք փառքով
Մենք կփշրեինք ստրկության շղթան»:*

Իր հետագա բանաստեղծություններում ևս Ծատուրյանն օրերի անթափանց խավարում ոչ մի հույս չի նշմարում: Ժամանակակիցներից նա պահանջում է մաքառել.

*«Կռվենք աննահանջ, քանի չենք մեռել,
Կռվումն է միայն և՛ մահ և՛ փրկանք»:*

1889 թ. եվրոպական երկրներում կատարած ճանապարհորդությունից Հովհաննիսյանը վերադառնում է և մանկավարժական աշխատանքի անցնում նախ՝ Էջմիածնում, այնուհետև՝ 1891 թվականից Թիֆլիսում: Այստեղ աշխատելու տարիներին նա միաժամանակ կատարում էր «Արձագանքի» գլխավոր աշխատակցի պարտականությունները: «Արձագանքի» սեփական թղթակիցների հաղորդումներն այնքան ցնցող էին և այնպես էին ներկայացնում Հայաստանի իրական վիճակը թուրքիայում, որ Հովհաննիսյանն անմնացորդ նվիրվում է այդ հարցին: Բայց քանի որ կոպկասյան գրաքննության խստությունների պատճառով իր բոլոր գործերը չէ, որ Հովհաննիսյանը կարող էր տպագրել Թիֆլիսում, նա մեծապես օգտվում էր մոսկովյան «Հանդեսի» ընծեռած հնարավորություններից:

1890 թ. «Հանդեսի» 3-րդ գրքում տպագրված «Տղմուտ» բանաստեղծությունը կառուցված է քնարական վերհուշի սկզբունքով: Դարեր են անցել Ավարայրի ճակատամարտի օրվանից, երբ Տղմուտ գետի ափին հայ ժողովուրդը կենաց և մահու մարտի մեջ մտավ օտար բռնակալների դեմ: Հայերի նախնիները չեն խոնարհվել օտար նվաճողների առջև, չեն վաճառել իրենց խիղճը և անմահացել են: Իսկ ինչպե՞ս են իրենց պահել դարավոր ստրկության դատապարտված նրանց զավակները: Նրանք խոնարհվել են նոր հազկերտներին, մոռացել ազատության սուրբ պատկերը: Բանաստեղծը կոչ է անում հիշել Վարդան Մամիկոնյանին, միավորվել և սուրը ձեռքին՝ «վերջ տալ այս անարգ վիճակին արյունով»:

Նույն համարում է տպագրված «Զինվորի մահը» բանաս-

տեղծությունը: Մեռնում է զինվորը, կրծքի արյունով ներկելով հայրենի հողը. թող չողբան իր մահը. ինքը հանգիստ կննջի, սպասելով հայրենիքի ազատության ծայնին: Այնուհետև՝ նա կօրհնի իր բախտը, որ հայրենիքի ազատության համար զոհել է կյանքը:

Փոքր ազգությունների ազգային-ազատագրական պայքարը բանաստեղծը ներբողել է «Տեսնում եմ ահա» բանաստեղծությամբ: Այն նույնպես տպագրված է «Հանդեսի» 1890 թ. 3-րդ գրքում: Մի ժամանակաշրջան էր այդ, երբ արևմտահայ ազատագրական շարժումներն աշխուժացում էին ապրում և «Հանդեսի» աշխատակիցները հավանաբար աշխատում էին գաղափարական օժանդակություն ցուցաբերել այդ շարժումներին: Նրանք վկայակոչում են եվրոպական ժողովուրդների, այդ թվում, անկասկած, հունգարացիների պայքարի և համեմատական ազատության օրինակը: Ծանոթանանք Հովհաննիսյանի այս բանաստեղծությանը, որը գրվել է 1887 թ. Մոսկվայում.

*«Տեսնում եմ ահա - ազգեր են մեռնում,
Ազգեր են ծնվում, և արմավենին
Սուրբ ազատության դողդոջուն ծեռքում՝
Բախտն է մոտենում մատաղ ազգերին:
Եվ նախնյաց փառքը նոր արշալույսով
Ցոլում է նոցա պայծառ ճակատին,
Եվ ահեղ կռվում արյուն քրտինքով
Վաստակած անմահ աճում է դափնին:
Եվ միայն դու ես, իմ խեղճ հայրենիք,
Որ շղթայակապ հեծում ես դարձյալ,
Եվ պատահ պատահ կուրծքդ գեղեցիկ -
Ընկած ես որպես կենդանի մեռյալ»:*

Բանաստեղծը, սակայն, ցանկանում է հավատալ հարության օրվանը, ժողովրդի փրկությանը: Նա կոչ է անում.

*«Ոտքի ե՛լ, հոգիս, շղթադ թոթափի՛ր,
Բաց արա՛ աչքդ այդ մահվան քնից,
Թեև մահամերձ, դու մի ծայն հանի՛ր -
Որդիքդ օգնության կգան չորս կողմից»:*

Նույն թեման է շուշափված «Վարդանանց օրը» բանաստեղ-

ծության մեջ, որը տպագրվել է 1894 թ. 5-րդ համարում՝ Պետեֆիի «Իմ կինը և իմ սուրը» բանաստեղծության հարևանությամբ: Բանաստեղծը տրվում է՝ հիշողություններին, վերակենդանացնում հեռավոր անցյալի հերոսական մթնոլորտը... Հարություն առած նախնիների ոգին քաջալերում է նոր սերնդին և վերջինս՝ «կռվելու և մեռնելու» համար դիմում է նոր Ավարայրի: Շարժմանը մասնակցում են և կանայք. նոր սերնդի դյուցազունները տեսնելով ազատության այգը, նահատակվում են «Մեծ, սուրբ գործի» համար: Պատկերը փոխվում է: Այդ ամենը խաբուսիկ մի տեսիլ է: Իրական կյանքում արևմտահայերը շղթաների մեջ են, իսկ մարտի դաշտում հերոսներ դեռևս երևան չեն գալիս:

Մեր համոզմամբ Հովհաննիսյանն այս բանաստեղծության ներշնչանքը ստացել է Պետեֆիից: Ավելին, ընդհանուր հայրենասիրական պաթոսից բացի, որն աչքի է զարնվում Հովհաննիսյանի այս շարքի երգերում, այս բանաստեղծության մեջ նա բառացի կրկնում է Պետեֆիի «Իմ խնդրած մահը» բանաստեղծության մի քանի տողեր: Այսպես, Պետեֆին գրում է, թող լինի գարուն, լինի պատերազմ, ուր մարդկանց կրծքին արյունոտ վարդեր են ծաղկում: Թող հնչի ռազմի փողը.

*«Ես այնտեղ լինիմ և իմ սրտիցը
Թո՛ղ ծաղկի նույնպես արյունոտ վարդը:
... Եվ երբ ես խոցված վայր կընկնեմ ծիուց
Փակե շրթունքս մի համբույր վերջին,
Քաղցր համբույրդ, ո՛վ ազատություն,
Ամենասիրուն էակ երկնածին»:*

Հովհաննիսյանի բանաստեղծության մեջ արի կրծքերից արյուն է հոսում.

*«Փառավոր մահվան համբույրն ընդունած
Շրթունքն՝ հայրենի երկիրն է օրհնում»:*

Սակայն ինչպես ասացինք, դա բանաստեղծի երազանքն էր, մինչդեռ իրականում՝

*«Ոչ ժանգն է ջնջվել մեր շղթաներից,
Ոչ մեր կուրծքն է վարդով զարդարում»:*

1896 թ. հայկական կոտորածների օրերին Յովհաննիսյանը «Հանդեսում» զետեղում է «Դարերով լացիր» բանաստեղծությունը, հայերի ազատագրման պատրանքների կործանման ողբը: Այստեղ ներկայացնելով իր հայրենիքի վիճակը, բանաստեղծը բացառիկ մեծ ընդհանրացում է կատարում.

*«Դու կայծեր տվիր, խարույկ չունեցար,
Գնում ես դեպի անխաչ գերեզման»:*

Չնայած այդ ամենին, նա չի ուզում հաշտվել կատարվածի հետ. նրա սպասումների խոսքերն ուղղված են սերունդներին. արդյոք չի՞ վառվելու «այգը փառավոր», երկինքը չի՞ որոտալու, հովիտներն ու ծորերը չպե՞տք է ծովանան արյունով...

*«Թե՞ պիտի մնաս դու հուսահատված,
Որ օրհասական ժամըդ վերա գա,
Ողջակեզ լինիս կենդանի մեռած՝
Բռնության զագիր սեղանի վերա»¹⁵⁷:*

Այսպես, ժանոթությունը XIX դ. երկրորդ կեսի հայ պարբերական մամուլի և գրականության հետ մեզ հանգեցնում է այն հետևությանը, որ Պետեֆին 1861 թ. առաջին անգամ տպագրվելով հայերեն, այնուհետև՝ հիմնավորապես հաստատվել է հայ գրականության երկնակամարում, նոր երանգներով հարստացրել մեր ազատասիրական պոեզիան: Միևնույն ժամանակաշրջանի հայ մամուլի հրապարակախոսական նյութերի ուսումնասիրությունը վեր է հանում հայ-հունգարական կապերի առավել լայն շրջանակներ, այդ երկու ժողովուրդների քաղաքական-գաղափարական ասպարեզի ավելի խոր ու հիմնավոր շփումներ:



Բալկանյան երկրներում ծավալվող իրադարձությունների, այնուհետև՝ ռուս-թուրքական պատերազմի հետ կապված, XIX դ. 70-ական թվականներին, հայ հրապարակախոսական միտքն աշխուժանում է: Ե՛վ արևմտահայ, և՛ արևելահայ հատ-

¹⁵⁷ Բանաստեղծը չէր կարող գուշակել, որ եվրոպական երկրների անտարբեր հայացքի առջև, 1915 թ. «բռնության զագիր սեղանի վերա» տեղի կունենա արևմտահայության դաժան ողջակեզը՝ ցեղասպանությունը:

վածների հրապարակախոսները սկսում են քննարկել արևմտահայության հարցը, ժամանակը վրա հասած համարելով դրա լուծման համար: Հարցի լուծման ելակետը միակն էր. հայերը ևս, ինչպես բալկանյան ժողովուրդները, անմարդկային տառապանքներ էին կրում սուլթանական թուրքիայում: Արևմտյան Հայաստանում թուրքական վարչակարգը կիրառում էր նույնպիսի բարբարոսական քաղաքականություն, ինչպես Բուլղարիայում, ռուսի, եթե բուլղարներին պատերազմն ազատություն էր շնորհելու, ապա՝ այն պետք է ծեռք բերվեր և հայության համար:

Հայ մանուկի օրգանների էջերում երևան են գալիս ոչ միայն հավուր պատշաճի արտաքին լուրեր և քաղաքական տեսություններ, այլև հարուստ տեղեկություններ Արևմտյան Հայաստանի այլևայլ վայրերի հայության վիճակի մասին: Հենվելով պատմական օրինաչափության, ժամանակի ոգու և ազգայնության հզորացող սկզբունքների վրա՝ հայ հրապարակախոսները գուշակում էին սլավոնական ժողովուրդների հաղթանակը: «Փորձ» ամսագրի տեսաբան Ստեփանոս Պալասանյանը գրում է հոդվածների մի շարք՝ նվիրված XIX դ. ազգային շարժումներին («19-րդ դարու նշանաբանը», «Հունաստանի անկախությունը», «Հունգարիայի ազգությունները»): Առաջին հոդվածում, հենվելով XIX դ. սկսված ազգային շարժումների պատմության օրինաչափության վրա, հոդվածագիրը փորձում է եվրոպայի փոքր ու մեծ ազգությունների օրինակով հաստատել և հայ ժողովրդի գոյության ու վերածնության իրավունքը:

Ազգայնության գաղափարն արթնացել և «գորավոր կերպով արտահայտվել է» Հունաստանում, Հունգարիայում, Իտալիայում և Գերմանիայում: Այդ գաղափարը թագավորներին և ժողովուրդներին պարտադրում է հաշվի առնել փոքր ժողովուրդների իրավունքները, պահանջելով դաշինքների և ժառանգական իրավունքների վրա անցյալ դարերում ստեղծված պետությունների նոր բաժանում: «Եվ այս գաղափարի հաղթանակը մենք տեսնում ենք Հունաստանի անկախության, Հունգարիայի ինքնավարության և Իտալիայի ու Գերմանիայի միության մեջ: Այսօր իսկ մեր աչքերի առաջ նույն

գաղափարը իրագործելու են ձգտում արևելյան քրիստոնյաները»¹⁵⁸։

Հայերը նույնպես անցնում էին ազգային ինքնաճանաչության հայտնի գործընթացի միջով և ուղք էին դրել իրենց վերածնության փուլը։ Պալասանյանն ամենայն իրավամբ այդ շարժումը պայմանավորում է պատմական այն մեծ իրադարձությամբ, երբ Արևելյան Հայաստանն ազատագրվելով պարսից բռնակալությունից, միանում է Ռուսաստանին։ Թեև արևի ջերմությունից և ջրի խոնավությունից զուրկ տունկի պես դարեր շարունակ նրանք թառամել են, պատկերավոր ձևով իրավիճակն ընթերցողին է ներկայացնում Պալասանյանը, բայց չեն կորցրել իրենց կենսունակությունը։ Սկսած այդ հիշարժան ժամանակներից, շարունակում է նա, «արևի ջերմությունը սկսավ տաքացնել հայի թմրած մարմինը և ջուրը կազդուրել նորա հոգին, և ահա այսօր այդ մարմինը կենդանության նշաններ է ցույց տալիս, այդ հոգին արձակվում է դարևոր տգիտության կապանքներից»։ Այնուհետև՝ Պալասանյանը թվարկում է վերջին կես դարում արևելահայերի ձեռք բերած նվաճումները՝ գրական աշխարհաբարի զարգացման բարձր աստիճանը, նոր գրականության ստեղծումն ու վերելքը, դպրոցական գործի բարելավումը, կանանց կրթական համակարգի ստեղծումը և այլն։ Այս ամենը հայերի կենսունակության երաշխիքն են, գրում է Պալասանյանը, ուստի հաստատում կերպով ուղք դնելով վերածնության շավղի վրա, նրանք չպետք է ընկրկեն որևէ խոչընդոտի առջև¹⁵⁹։

Քաղաքակրթության շավղով հաստատական առաջ շարժվելու և բնավ տեղի չտալու այս ծրագիրը շարադրված էր արևելահայերի համար։ Սակայն հենց այն պահին, երբ շարվում էր Պալասանյանի հոդվածը, ռուսական զորքերը շարժվում էին մի կողմից դեպի Բալկաններ, իսկ մյուս կողմից դեպի Արևմտյան Հայաստանի տարածքը։ Սկսվում է 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմը և «Փորձի» տեսաբանը համոզեսի հաջորդ համարի համար պատրաստում է մի նոր հոդված։ Օգտագործելով Գերվինուսի «19-րդ դարի պատմությունը»՝ Վինենայի

¹⁵⁸ «Փորձ», 1877/78, թիվ 1, էջ 143։

¹⁵⁹ Նույն տեղում, էջ 173-174։

վերաժողովից ի վեր» գիրքը, նա հրատապ գրում է «Հունաստանի անկախությունը» ուսումնասիրությունը, գերմանացի պատմաբանի շարադրանքին ավելացնելով հույների՝ հանուն անկախության մղվող պայքարի դարավոր պատմությունը:

«Փորձի» խմբագրությունը Նալբանդյանից հետո որոշակի կապ էր տեսնում հայ ժողովրդի և եվրոպական ժողովուրդների կացության միջև և ձգտում ինչ-որ օրինաչափ ու նպատակասլաց հունի մեջ դնել հայկական շարժումներն Արևմտյան Հայաստանում: Այդ գաղափարը հստակորեն ձևակերպած է «Հունաստանի անկախությունը» հոդվածին կից խմբագրական խոսքում: Ամբողջությամբ մեջ ենք բերում մուտքի այդ խոսքը, որը ներկայացնում է «Փորձի» խմբագրության գործունեության ծրագիրը:

«Ոչինչ այնպես հետաքրքրական, այնպես խրատական չէ կարող լինել, որքան ներկա դարու ընթացքում զանազան մեծ ու փոքր ազգությունների գործ դրած հերոսական ջանքերը քաղաքական անկախությունը ձեռք բերելու: Հունաստանը, Դանուբյան իշխանությունները, սլավոնական փոքրիկ իշխանությունները՝ Սոնտենեգրոն և Սերբիան, Հունգարիան, վերջապես Իտալիան և Գերմանիան, յուրաքանչյուրը յուր ազգային ոգու և շրջապատող հանգամանքների համեմատ, զանազան միջոցներ են գործ դրել, այլևայլ ճանապարհներով են ընթացել իրանց դարևոր ցանկություններին հասնելու: Բայց նոցա բոլորի նպատակը միևնույնն էր, — ազատվիլ օտարական իշխանություններից և մի քաղաքական ու ազգային մարմին կազմել:

*Ցույց տալ այդ ազգերի մտավոր ու բարոյական գործունեությունը, ցույց տալ, թե որքան հաստատականություն, որպիսի անխոնջ և շարունակ աշխատություն են գործ դրել նոքա իրանց բաղձանքին հասնելու, մի քաղցր պարտավորություն է համարում յուր համար մեր Հանդեսը»*¹⁶⁰ (ընդգծումը մերն է — Մ. Մ.):

Ղեկավարվելով այս ծրագրով, խմբագրությունը Հունաստանից անցնում է հունգարական խնդրի լուսաբանմանը: Պատերազմի ամենաթեժ օրերն էին, 1877 թ. աշունը: Այն բանից հետո, երբ հոկտեմբերին գրաքննությունը տպագրության է թույ-

¹⁶⁰ Նույն տեղում, թիվ 2, էջ 163:

լատրում «Հունաստանի անկախությունը» հոդվածը, «Փորձի» խմբագրությունը գրաքննությանն է ներկայացնում մի նոր հոդված, որն արտատպություն էր ֆրանսիական «Revue des deux mondes» հանդեսի 1872 թ. օգոստոսի համարից և կրում էր «1848-1849 թթ. պատերազմի ժամանակաշրջանի հունգարական ժողովրդական պոեզիան» խորագիրը: Այն հավանաբար թարգմանել էր ֆրանսերենի հմուտ գիտակ Պալասանյանը: Այս հոդվածը, սակայն, Կովկասի գրաքննական կոմիտեն արգելում է տպագրել հետևյալ պատճառաբանությամբ. «Այլ ժողովուրդների [ապստամբական] ելույթների անալոգիայով հեղինակը նպատակ ունի ընթերցող հայերի մեջ առաջացնել հակապետական գաղափարներ՝ հայերի ապագա քաղաքական վերածնության մասին»:

«Փորձի» խմբագիր Ա. Հովհաննիսյանը բողոքում է կոմիտեի որոշման դեմ և քանի որ նախօրոք չէր նշել, թե հոդվածը թարգմանական է, իր դիմումի հետ մեկտեղ ներկայացնում է և ֆրանսիական հանդեսի համապատասխան համարը, որը գրաքննության թույլտվությամբ ժամանակին տարածվել էր Ռուսաստանում: Սաստիկ շահագրգռված հոդվածի տպագրությամբ՝ նա միաժամանակ դիմում է Կովկասի փոխարքայության քաղաքացիական գործերի գլխավոր վարչության պետին, խնդրելով դրական լուծում տալ հարցին: Գրաքննական կոմիտեն այս հոդվածին անդրադառնում է ևս մեկ անգամ ու հանձնարարում հայ գրաքննիչ Սելիք-Սեհրաբովին՝ զեկուցել այդ հարցի մասին: Հենվելով վերջինիս նոր զեկուցագրի վրա, գրաքննական կոմիտեն փոխարքայությանը հղած ծավալուն մի բացատրությամբ հիմնավորում է հոդվածի մերժումը: Փոխարքայության վարչության պետը քննելով և՛ դիմումը, և՛ գրաքննական կոմիտեի եզրակացությունը, վերջինիս հայտնում է հետևյալը. «Փորձ» հանդեսի խմբագրի՝ մեծ իշխան փոխարքային ուղղված դիմումի և գրաքննական կոմիտեի բացատրության առիթով հայտնում ենք, որ Նորին արքայական մեծությունը հաշվի առնելով գրաքննական կոմիտեի ներկայացրած բացատրության հանգամանքները, որոնք ստիպել են կոմիտեին մերժել այդ հոդվածը, այլև գտնելով, որ հոդվածն իր բովանդակության պատճառով չի կարող թույլատրվել տպագրության,

բարեհաճեց կարգադրել՝ Հովհաննիսյանի բողոքը թողնել առանց հետևանքի:

Այս մասին հարկ ենք համարում հաղորդել գրաքննական կոմիտեին՝ հետագա կարգադրությունների համար»¹⁶¹:

Գրության լուսանցքում կոմիտեի աշխատակցի ձեռքով գրված է. «հայտնել «Փորձի» պարոն խմբագրին»: Մի փոքր ներքև՝ «կարդացի և ընդունեցի ի գիտություն. Աբգար Հովհաննիսյան»:

Դժբախտաբար մեզ չհաջողվեց համապատասխան ֆոնդի գործերում հայտնաբերել այդ հոդվածը, սակայն, հենվելով գրաքննական կոմիտեի զեկուցագրի վրա, կարելի է ընդհանուր գծերով գաղափար կազմել դրա մասին:

Ձեկուցագրում շեշտվում է, թե հոդվածում ակնհայտորեն աշխույժ հետաքրքրություն է նկատվում ինչպես մեջ բերվող ազատասիրական և ազգային անկախության գաղափարները դրվատող երգերի, այնպես էլ հունգարական ապստամբության նկատմամբ, որի նպատակն էր տապալել երկրի գերագույն իշխանությունը: Ընդգծվում է հոդվածի այն հատվածը, որտեղ ասված էր, թե նոր ազատագրված ժողովուրդների վերածնության գաղափարը կարող է սքանչելի օրինակ լինել փոքրոգի անձանց համար, որոնք այլևս ոչ մի սպասելիք չունեն ապագայից: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվում բնագրում տեղ գտած հետևյալ կոչի վրա. «Մինչև ե՞րբ պետք է շարունակվի այս փոքրոգությունը. ժամանակն է արթնանալ, ժամանակն է»:

Ձեկուցագրում նշվում է նաև, թե թարգմանիչը բազմիցս շեղվում է բնագրից, իր կողմից ավելացնելով մտքեր և արտահայտություններ, որոնք հոդվածը դարձնում են ավելի միտումնավոր: Այսպես, երբ խոսվում է 1848 թ. հեղափոխության մասին, թարգմանիչն ավելացնում է. «Դժբախտաբար այն բարեհաջող ելք չունեցավ». կամ կասկածելի է համարում «հունգարացիների և այլ նոր ժողովուրդների վերածնության օրինակը...» արտահայտությունը: Ֆրանսերեն բնագրի այն մասում, որտեղ ասվում է, թե հունգարացիները ձեռք բերեցին իրենց պահանջների մեծ մասը, ավելացված է, թե ինչ ստացան. «Սեփական ազգային

¹⁶¹ *Վրացական կենտրոնական պետական պատմական արխիվ*, ֆ. 480, ց. 1, գ. 333:

ժողով, որը պաշտպանում է նրանց ազգային շահերը, հոգում ժողովրդի կրթական գործը և այլ հոգսերը: Սեփական գործ՝ երկրի՝ սահմանները պաշտպանելու համար» և այլն: «Երրորդ գլխում, որտեղ խոսվում է հունգարացիների անձնագոհության և հաղթանակների մասին, հիշատակվում է խիզախ Դեբոզի անունը (որը փախուստի ժամանակ սպանում է կնոջը, որպեսզի վերջինս թուրքերի ձեռքը չընկնի): Այստեղ Դեբոզի արարքը համեմատված է Ռադոմիստի անձնագոհության հետ: Թարգմանիչը «ծավալում ժանոթագրություն է տալիս Ռադոմիստի մասին, ասելով, թե նա եղել է հայ արքա և իր խիզախ գործերով հիշեցնում է հունգարացի հերոսին»:

«Այն հանգամանքը, — նշվում է այնուհետև զեկուցագրում, — որ հողվածը թարգմանություն է ֆրանսիականից, բնավ էլ չի փոխում դրա բնույթը, որն արտահայտված է հունգարացիների հուզումների նկարագրության մեջ՝ իրենց օրինական կառավարողների դեմ. հուզումներ, որոնց ճնշման գործին, ինչպես հայտնի է, մեր կառավարությունը գործոն մասնակցություն ունեցավ»: Այնուհետև ասված է. «Առանձնահատուկ ուշադրություն են գրավում հողվածի վերջին էջերը, որտեղ խոսվում է այն մասին, թե հունգարական ապստամբության ճնշման ժամանակ Ռուսաստանի օգնությունը հունգարական կառավարությանը, նրա դեմ թշնամանք առաջացրեց հունգարացիների մեջ»: «Այս ամենը, — եզրափակում է զեկուցագրի հեղինակը, — հողվածն ավելի ևս անհարմար են դարձնում հայկական մամուլում հրատարակելու համար, եթե մանավանդ հաշվի առնելու լինենք դրա [նոր] խմբագրությունն ու հավելումները»:

Ինչ վերաբերում է այն փաստին, թե հողվածի բնագիրն ի սկզբանե թույլատրված է եղել ցարական գրաքննության կողմից, ապա՝ այդ առիթով, զեկուցագրում վկայակոչվում է գրաքննական կանոնադրության 18-րդ անհեթեթ հողվածը, որի համաձայն ժամանակին գրաքննության թույլտվությամբ տպագրված նյութերի արտատպությունները ենթակա էին առավել խիստ ստուգման¹⁶²:

1877 թ. դեկտեմբեր-1878 թ. հունվար ամիսներին գրաքննության հետ վեճի մեջ մտած խմբագրությունը չհասնելով

¹⁶² Տե՛ս նաև Մ. Դ. Մխիթարյան, XIX դարի երկրորդ կեսի արևելահայ պարբերական մամուլի պատմությունից, էջ 231-234:

որևէ արդյունքի, այնուամենայնիվ, վճռում է խոսել Հունգարիայի մասին: Այդ դեպքերից մի քանի ամիս անց, «Փորձում» (1877/78, թիվ 4) տպագրվում է «Հունգարիայի ազգությունները» կոմպիլյացիոն հոդվածը, որը քաղված էր անգլիացի Պետերսոնի համանուն ուսումնասիրությունից: Ի՞նչն էր գրավել Պալասանյանին անգլիացի հեղինակի հոդվածում, ի՞նչ նպատակ էր հետապնդում խմբագրությունը: Ցույց տալ բռնակալության պայմաններում միևնույն լծի ներքո տառապող բազմազգ ժողովուրդների ճակատագիրը:

Իհարկե այս հոդվածը շատ էր զիջում 1848-1849 թթ. հեղափոխությանը նվիրված ծրագրային հոդվածին, բայց ամեն դեպքում, մասամբ պատասխանում էր խմբագրությանը հետաքրքրող խնդրին: Պետերսոնի հոդվածում հանգամանալից քննության է ենթարկված Հունգարիայի տարածքում ապրող ազգությունների վիճակը, ցույց է տրված նրանց անցած ճանապարհը, հունգարացիների վիճակը Մարիա Թերեզայի և Հովսեփ II-ի ազգածուլման քաղաքականության պայմաններում:

Պալասանյանը մեծ ջերմությամբ է շարադրում հունգար ժողովրդի ազգային վերածնության պատմությունը, հայրենասեր մտավորականության այն խմբի գործունեությունը, որը չնայած հաբսբուրգյան բռնապետության ծավալած հալածանքներին, ստեղծում է իր նոր գրականությունը («միակ գրականությունը հունգարական հողի վրա, որ կենդանության նշաններ է ցույց տալիս»):

Անկախ այն կարևորությունից, որն ունի հոդվածի տպագրության փաստը, մեծ հետաքրքրություն է ներկայացնում խմբագրության մի ծանոթագրությունը, որով Պալասանյանն առարկում է Պետերսոնին: Մի առիթով վերջինս մեջ բերելով Սուրբ Ստեփանոսի կտակի այն միտքը, ըստ որի երբ պետությունը մի լեզու և միևնույն սովորություններն ունի՝ լինում է թույլ և խախտ, իսկույն ավելացնում է. այդ կանոնը «հիշեցնում է մեզ մի այլ հռչակված կանոն՝ divide et impera (բաժանեա և տիրեսցես)»:

Հայ հրապարակախոսները, որ հունգարացիների ազգային հոգեբանությունն ավելի լավ էին ճանաչում, քան Սեծ Բրիտանիայի ներկայացուցիչը, իրենց պարտքն են համարում ուղղում մտցնել նրա հայտարարության մեջ. «Ցավում ենք, որ

հարգելի հեղինակը սխալ է հասկացել Սուրբ Ստեփանի այս խոսքի խորիմաստ միտքը: Հունգարական թագավորը ուզեցել է ասել, որ այն անազնիվ, բարբարոս տերությունները, որոնց ներքին քաղաքականությունն է բոլոր հպատակներին մի լեզու խոսեցնել, ամեն միջոցներ գործ դնելով, որ օտար ազգությունների լեզուն մոռացության տրվի, թույլ և խախտու են լինում: Համեն. հռչակավոր էօտվեշի գրվածքը Հունգարիայի ազգությունների մասին»¹⁶³:

Այն հանգամանքը, որ «Փորձի» հրատարակության առաջին երկու տարիներին այդ հանդեսում տպագրվել են նաև Պետեֆիի հինգ բանաստեղծությունները (այդ թվում այնպիսի հռչակավոր երգեր, ինչպես «Շղթա», «Հայրենիքի մասին», «Իմ խնդրած մահը» գործերը), մեզ հիմք է տալիս հավաստելու, որ 80-ական թվականների սկզբներին հունգարական հեղափոխության թեման որոշակի կշիռ ուներ արևելահայ հրապարակախոսության զինանոցում:

Ստ. Պալասանյանը սկզբնավորում է հունգարական հեղափոխությանը նվիրված հայ հեղինակների հոդվածների շարքը, որը 1889 թ. վրա հասած նրա վախճանից հետո ևս պարբերաբար ի հայտ է գալիս արևելահայ մամուլի էջերում: Սակայն մինչ այդ հոդվածներին ծանոթանալը, պետք է հաշվի առնել մի հետաքրքրական հանգամանք: Արևմտահայ մամուլում նման հոդվածներ գրեթե չէին տպագրվում. թուրքական ռեակցիան ստիպում էր հայ խմբագիրներին սահմանափակվել պաշտոնական քաղաքական լուրերի շրջանակներում: Դրա հետևանքով, նրանցից ամենահնարամիտը կարող էր երբեմն իրեն թույլատրել միմիայն չնչին մի հավելում կամ զեղում: Այնինչ, Ռուսաստանի հայ մամուլի գործիչները հնարավորություն ունեին ծավալվելու և դուրս գալով պաշտոնական հաղորդագրությունների սահմաններից, իրենց հետաքրքրող հարցերը քննարկել են առանձին հոդվածներում, որոնցից շատերն իրենց որոշակի ենթատեքստով ստացել են քաղաքական հնչեղություն և հայ քաղաքական հրապարակախոսության ցայտուն օրինակներից են: Իսկ եթե այդ հոդվածների մի մասը չի տպագրվել, ապա միևնույն է, արևելահայ գործիչները հետևողականորեն պայ-

¹⁶³ «Փորձ», 1877/78, թիվ 4, էջ 206:

քարել են գրաքննության դեմ, և անկախ այն բանից պարտվել են, թե հաղթել, իրենց ձայնը բարձրացրել են հանուն ազգային մշակույթի պաշտպանության, հանուն խոսքի ազատության:

Թեև, ինչպես ասացինք, արևմտահայ թերթերն առանձին հոդվածներ չեն նվիրել Հունգարիային, բայց մի հետաքրքրական բացառություն է կատարվել Մորիս Յոկայի հարցում: Մեծ գրողի գործունեության 50-ամյակի օրերին «Արևելքը» տպագրել է երեք հոդված («Գրական տոն մը»¹⁶⁴, «Մորիս Յոկա», «Յոկան Արևելքի և հայոց մեջ»):

Յոկային նվիրված ծավալուն հոդվածում արևմտահայ հրապարակախոս Բյուզանդ Քեչյանը մանրակրկիտ քննության է ենթարկել հունգարերեն լեզվի և գրականության զարգացման օրինաչափության հարցը: Նա հակադրվում է ֆրանսիացի այն գիտնականներին, որոնք մահ էին կանխագուշակում հունգարերենի համար և ժամանակի հունգարերենը զնահատում է իբրև ամենահարուստ, ամենաազդու և լավագույն գրական լեզուն: Նա եվրոպական երկրների լավագույն բանաստեղծների շարքն է դասում Վերեշմարտիին, Քյուֆալույին, Պետեֆիին, Արանին:

Քեչյանն այս հոդվածում հիշում է, որ 80-ական թթ. «Մասիս» թերթում տպագրած մի հոդվածում ինքը խոսելով գրաբարի և աշխարհաբարի առիթով ծավալված գրապայքարի հարցի մասին, վկայակոչել է հունգարերեն լեզվի օրինակը, որը տաղանդավոր գրողների ջանքերով կարճ ժամանակամիջոցում դարձել է գրականության լեզու:

Այժմ նույնպես գավեշտի ենթարկելով հունգարերեն լեզվի վախճանի վերաբերյալ արված գուշակությունները, Քեչյանը գրում է. «Երբ կա տարր մը յուր լեզուն գործածելու և զարգացնելու այնքան նախանձախնդիր, որքան են այն վեհանձն մաճառք և երբ կա լեզու մը այնքան ճկուն և ընդունակ, որքան Մորիս Յոկայի լեզուն, ո՞վ կրնա կանխադատել ապագայն»¹⁶⁵:

«Յոկան Արևելքի և հայոց մեջ» հոդվածն արտատպված է "Revue d'Orient" ամսագրում և պատկանում է Յ. Զիլինկարյանի գրչին¹⁶⁶: Այս հոդվածում Զիլինկարյանը պատմում է Յոկայի

¹⁶⁴ «Արևելքի» 1893 թ. դեկտեմբերի 31-ի՝ հիշյալ հոդվածը պարունակող համարը, դժբախտաբար չկար մեր ծեռքի տակ:

¹⁶⁵ «Արևելք», 1894, թիվ 2977:

¹⁶⁶ Նույն տեղում, թիվ 2979:

ժողովրդականության մասին Ռուսաստանում, արևելահայերի շրջանում և Արևմտյան Հայաստանում: Հիշատակվում է այն փաստը, որ արևմտահայերը մայրենի լեզվից բացի նույնիսկ թուրքերենի են թարգմանել Յոկայի վեպերը և որ առհասարակ «մաճառք սիրելի են ի Կ. Պոլիս»:

Կոստանդնուպոլսում ապրում էին վտարանդի հունգարացիք և եթե նրանք սիրելի էին տեղի հայությանը, ապա՝ իրենց հայրենասիրության և խիզախության համար: 1894 թ. արևմտահայ հեղինակը սրանից ավելին չէր կարող ասել: Չէր կարող ծավալվել և Քեչյանը, որն իրեն կաշկանդում է լեզվաբանական տեսություններով, Պետեֆիի և Վերեշմարտիի վաստակը տեսնում միայն գրական լեզվի զարգացմանը բերած նպաստում: Նա տողամիջում անուղղակիորեն միայն ասում է այն մեծ ճշմարտությունը, որի համար թերևս գրիչը ձեռքն էր վերցրել, այն է՝ հունգարացիների պատմությունն «ընդհանրապես հույժ պատվաբեր եղած է իրենց»:

Հունգարական հեղափոխությանը և ժամանակի հեղափոխական գործիչներին պատշաճ ուշադրության են արժանացրել արևելահայ հրապարակախոսները: Անկախ քաղաքական լուրերից, 1880-1890-ական թվականների հայ լրագրողներն իրենց թերթերում և հանդեսներում Պետեֆիից բացի տպագրել են Յոկայի գործերը: Այսպես, 1883 թ. Տ. Նազարյանը «Աղբյուր» մանկական հանդեսում տպագրել է նրա «Դժվար ընտրություն» պատմվածքը՝ Կ. Մ. Շահնազարյանի փոխադրությամբ: Ամսագրի խմբագիրը հակիրճ տեղեկություններով ընթերցողներին ծանոթացրել է Յոկայի կյանքի և գրական վաստակի հետ, շեշտելով, որ նա կրթությունը ստացել է Պրեսբուրգում՝ «Պետեֆի ժողովրդական երևելի բանաստեղծի հետ»:

«Լուսն» հանդեսի 1900 թ. 2-րդ գրքում տպագրվել է Յոկայի «Ուրացողը» վիպակը՝ Իս. Հարությունյանի թարգմանությամբ (գերմաներենից):

1890 թ., երբ «Արձագանքը» հրատարակվում էր իբրև պատկերազարդ հանդես, Ա. Հովհաննիսյանը կոմս Անդրաշիի մահվան կապակցությամբ այնտեղ գետեղել է նրա նկարը և ներկայացրել գործունեությունը: Հոդվածագիր Կ. Յաղուբյանն, ի դեպ, հատկապես ընդգծում է, որ «երբ 1848 թվին հունգարացիք Կոշուտի ղեկավարությամբ ապստամբեցան Ավստրիայի

դեմ, կոմս Անդրաշին յուր գոնվեյներով (գինվորներ) քաջությամբ կռվում էր կայսերական զորքերի դեմ»¹⁶⁷։

«Մեղու Հայաստանի» թերթի քաղաքական տեսաբան Սպանդար Սպանդարյանն անվերապահ համակրանքով արտահայտվելով ազգային-ազատագրական շարժումների մասին, 1881 թ. հետևյալ կերպ է բնութագրում ավստրիական բռնապետության քաղաքականությունը. «Ավստրիան Մետեռնիխի խավար քաղաքականությամբ ներշնչված՝ զբաղված էր ամեն տեսակ միջոցներով սպանել ժամանակի ազատ ոգին»¹⁶⁸ և բռնի պահել Հաբսբուրգի թագի տակ ազատությունից զրկված ականա հպատակ ազգերին, որոնք ազատության, հայրենասիրության վեհ զգացմունքներով ոգևորված՝ հանուն ազգայնության, մարդկության անձեռնմխելի սուրբ իրավունքների, ձգտում էին դեպի անկախությունը, դեպի ազգային ինքնուրույնությունը, իշխանությունը»¹⁶⁹։

Դարավերջին հունգարական իրադարձություններին անդրադարձել է նաև «Մշակ» լրագիրը, որը Լայոշ Կոշուտի մահվանն արձագանքել է մեծ հետաքրքրություն ներկայացնող երկու հոդվածներում։ Դրանցից մեկը խմբագրական հոդված էր, երկրորդը պատկանում էր Խ. Մալումյանի գրչին։ Երկու հոդվածներն էլ գրված են միևնույն ոգով և Կոշուտին ներկայացնում են իբրև 1848 թ. հունգարական հեղափոխության ղեկավարի ու ոգու։ Խմբագրական հոդվածի հեղինակը հանգամանորեն պատմում է 1848-1849 թթ. տեղի ունեցած անցքերի մասին։ Հունգարացիները տալիս են 100.000 զոհ, 50.000-ից ավելի գերվում են, վերանում է Սահմանադրությունը, խախտվում պետական ամբողջականությունը։ «Ունգարիան խորը խոցված ենթարկվեց այդ ծանր լուծին, բայց հույսը չկորեց ավելի լավ ապագայի համար»։ Թերթը գրում է, որ Կոշուտի ջան-

¹⁶⁷ Տե՛ս «Արձագանք», 1890, թիվ 6։

¹⁶⁸ Մ. Նալբանդյանը Մետեռնիխին անվանում է «ավստրիական բռնակալության ջերմեռանդ քուրմ», իսկ Մատթեոս Մամուրյանը «Հայկական նամականի» հրապարակախոսական աշխատության մեջ «Հայ Մեղերնիկ» է անվանում արևմտահայ հետադիմության պարագլուխ Չամուռժյանի հավատարիմ բարեկամին և զործակցին (տե՛ս Մ. Մամուրյան, Երևան, 1966, էջ 565-568)։

¹⁶⁹ «Մեղու Հայաստանի», 1881, թիվ 41։

քերն ապարդյուն չեն անցնում, Հունգարիան ձեռք է բերում գրեթե այն բոլոր իրավունքները, ինչի համար կռվում էր Կոշուտը¹⁷⁰:

Առավել զգացմունքային է «Կոշուտ» հոդվածի հեղինակի խոսքը: «Ահա մարդ: Ամուր, ինչպես ժայռ, զորեղ՝ ինչպես առյուծ, ազնիվ՝ աջողության մեջ. անընկճելի՝ ծախորդության ժամանակ: Դա կյանք չէր, այլ փոթորիկ»: Այնուհետև՝ շարադրվում է Կոշուտի կենսագրությունը: Թեև 70-ական թվականներին նա կարող էր վերադառնալ «իր անազատ հայրենիքը», ասված է հոդվածում, բայց Կոշուտը մերժում է հայրենակիցներին և հայտնում, որ «մինչև վերջին շունչը կմնա անհաշտ թշնամի՝ իր հայրենիքի վրա իշխող հաբսբուրգյան տանը»: Մինչ իր կյանքի վերջը նա հավատում էր իր հին իդեալներին, «մտքի հաղթանակին, ազատության գաղափարին և հայրենիքի ապագային»: Այնուհետև՝ հոդվածագիրը մանրամասն նկարագրում է Կոշուտի թաղումը, մեջբերումներ կատարում Յոկայի ճառից, հիշում պատգամավոր Հերմանի ճառի վերջին խոսքերը («Այս գերեզմանի վրա չէ բարձրանում հաշտության արմավենի: Կոշուտ նախատեսեց այն ընդհարումները, որոնք տեղի կունենան»):

«Կանցնեն տարիներ,— ավարտում է խոսքը «Մշակի» հոդվածագիրը,— տասնյակ տարիներ և այդ գերեզմանը կդառնա մի սրբություն, մի ուխտատեղի Ունգարիայի համար»¹⁷¹:

Հունգարական հեղափոխության հետ կապված իրադարձություններն առավել խորությամբ լուսաբանվել են «Արծագանք» շաբաթաթերթում: Մենք արդեն առիթ ունեցանք ծանոթանալու Գ. Բարխուդարյանի և Ստ. Պալասանյանի գործունեությանը, որոնց ջանքերով «Փորձի» ընթերցողները ծանոթանում էին Պետեֆիի պոեզիային ու եվրոպական փոքր ժողովուրդների վերածնության պատմությանը: Այդ ավանդությունը շարունակվում է և հետագայում, երբ Ա. Հովհաննիսյանը «Փորձից» հետո սկսում է իրատարակել «Արծագանք» շաբաթաթերթը:

Ըստ ամենայնի, հունգարական հեղափոխության ժամանակների պոեզիային նվիրված թարգմանական հոդվածի

¹⁷⁰ «Մշակ», 1894, թիվ 29:

¹⁷¹ Նույն տեղում, թիվ 38:

մերժումից հետո Պալասանյանը չի հուսալքվում և շարունակում է զբաղվել այդ թեմայով: Ծագումով Ռուսինիայի Բոդուշան քաղաքից, Պալասանյանը, հարկ է ենթադրել, Հունգարիայով ապրում էր, ինչպես իր հայրենիքով: Հեղափոխության տարիներին նա տասներկուամյա պատանի էր, որը չէր կարող իր մեծերից լսած չլինել, թե ինչ հերոսական օրեր է ապրում սահմանակից Հունգարիան: Հետագայում, ուսանելով Փարիզի Սուրադյան վարժարանում, նա հմտանում է օտար լեզուների մեջ, ձեռք բերում բանասիրական և պատմական հարուստ գիտելիքներ, որոնք նրան հնարավորություն են ընծեռում Հայաստանի պատմությունը լուսաբանել համաեվրոպական պատմության լայն հետնախորքի վրա:

1863 թ. Պալասանյանն աշխատանքի է անցնում Կովկասում և այլևս չի տեսնում իր հայրենիքը: Նրա մահից մի քանի տարի անց, 1892 թ., Ա. Հովհաննիսյանն «Արծազանքում» տպագրում է մի հետաքրքրական, բայց անավարտ ուսումնասիրություն՝ «Հունգարացոց ազգային բանաստեղծությունը 1848-1849-ի պատերազմի ժամանակ (Ստեփանոս Պալասանյանի ձեռագրերից)» խորագրով¹⁷²:

Արժեքավոր այս հոդվածը հունգարական հեղափոխությանը նվիրված ծրագրային ուսումնասիրություն է, որի առաջին մասում հեղինակը ներկայացնում է ժողովրդին կազմակերպված հեղափոխական ելույթի մղող պատմական-քաղաքական իրադրությունը: Երկրորդ բաժինը նվիրված է բուն հեղափոխությանն ու դրա մասնակիցներին: Հոդվածի երրորդ մասում Պալասանյանը խոսում է միջազգային քաղաքական այն գործոնների մասին, որոնց հետևանքով հեղափոխությունը պարտվել է: Ռուսաստանում գործող Պալասանյանի գրիչը վարանում է վճռական խոսք ասել: Հնարավոր է նույնիսկ, որ այդ խոսքն ասվել է, բայց գրաքննիչի միջամտությամբ հոդվածն ընթերցողին է հասել աղճատված տեսքով՝ առանց հասնելու տրամաբանական վախճանի:

Իր օրերի ընթերցողներին պատմական այդ նշանակալից իրադարձությանը ծանոթացնելու համար, Պալասանյանն իբրև պատմագիտական հավաստի սկզբնաղբյուր դիմում է առաջին

¹⁷² «Արծազանք», 1892, թիվ 17-19:

հերթին հունգարական ազգային պոեզիայի գանձարանին: Նրա համոզմամբ անցյալից եկող պատմական և ոչ մի վավերագիր չի կարող համեմատվել ժողովրդական երգերի հետ, որոնք պատմական ժամանակաշրջանի կենդանի վկաներն են: Հիրավի, գրում է նա, «ի՜նչ կարող է ավելի ստույգ, ավելի հավատարիմ լինել, քան երբ մի ժողովուրդ ինքը երգում է յուր կյանքի փառավոր կամ դժբախտ րոպեները»:

Հունգարական ժողովրդական երգերը, մանավանդ նրանք, «որոնք վերաբերում են 1848-ի հեղափոխության և ազգային անկախության համար տված հերոսական պատերազմին», Պալասանյանի բնութագրությամբ աչքի են ընկնում իրենց հոգեկան հափշտակությամբ, անընկճելի արիությամբ, հաստատուն կամքով և անվերապահ հայրենասիրությամբ: Այդ երգերը պատկանում էին Պետեֆիի, Գարայի, Տոթի, Արանի, Գիուլայիի և անանուն այլ հեղինակների գրչին, որոնք հենց մարտի դաշտում էին հորինում օրվա ոգին արտացոլող այդ հրաշունչ երգերը:

Քանի որ Պետեֆին քաջածանոթ էր հայ ընթերցողին, Պալասանյանը ծրագրում է խոսել նրա մյուս ժամանակակիցների մասին և նրանց ստեղծագործության միջոցով ներկայացնել «մի կենդանի պատկեր այն ձգտումներից, որ այնպիսի զորավոր կերպով արտահայտվեցան 1848-1849-ի շարժողության ժամանակ, բայց դժբախտաբար անհաջող ելք ունեցան»¹⁷³:

Այնուհետև՝ Պալասանյանը ներկայացնում է երկրում ստեղծված իրադրությունը, այն գործոնները, որոնց շնորհիվ «քաղաքական կյանքը հանկարծ հեղափոխականի էր փոխարկվում, այնպես, որ փոխանակ համբերությամբ և գրավոր իրավունքների անունով հին ազատությունների գործադրությունը պահանջելու, բնական իրավունքների հիման վրա բացարձակ ազատություն էին պահանջում»:

Պալասանյանն անդրադառնալով 1848 թ. հունգարացիներին համակած խանդավառությանը, ընդգծում է, թե նրանք ինչպես հայրենիքը, աստվածացնում էին ազատության

¹⁷³ Հեղափոխության պարտության վերաբերյալ արտահայտած իր այս կարծիքը Պալասանյանը բառացիորեն շարադրել էր և գրաքննության կողմից մերժված նախորդ թարգմանական հոդվածում:

գաղափարը, որին դիմում էին ամենաջերմ զգացումներով և ամեն տեսակ զոհաբերությունների պատրաստակամությամբ: «Ողջունքեզ, սուրբ ազատություն» բանաստեղծության ազատ շարադրանքով հարազատորեն ներկայացվում է երկրի մթնոլորտն այդ պահին¹⁷⁴: Չեռք բերված արտոնությունները ոգևորում են բոլորին, հաղթանակը թվում է կատարյալ, բայց Պալասանյանը հետևյալ գնահատականն է տալիս իրավիճակին. «Վիեննայի արքունիքը հավանաբար մաջառներին այն մտքով զիջողություններ էր արել, որ միայն ժամանակ ունենա ճնշելու իտալական ապստամբությունը, հաստատապես որոշելով բոլոր արտոնությունները ետ առնել, երբ բավական ուժով կզգա իրեն»: Այդ արքունիքն օգտագործում է և իր մյուս «զարհուրելի գեները», սլավոնական ժողովուրդների դժգոհությունը հունգարների ազատության նկատմամբ: Իսկապես, Ավստրիայի խրախուսանքով սեպտեմբերին սկսվում է խորվաթական արշավանքը՝ Ելաչիչի առաջնորդությամբ: Պալասանյանը մեջ է բերում Չուչորի «Մաջառների աստվածը դեռ կենդանի է» օրվա հիմնալի երգը:

Սկսվում է պատերազմը: Մարտակոչ: Բանաստեղծն իր երգով կոչում է հայրենիքի պաշտպաններին մարտադաշտ ելնելու. այդ երգում «արդյոք հո՞ւյսն է տիրապետում, թե մի գեղեցիկ հուսահատություն է երևում, կամ գուցե մի տեսակ հափշտակություն՝ խառն երկյուղի հետ»:

Պալասանյանը հղում է «զինվոր բանաստեղծի» «Վե՛ր կաց, մաջառ...» երգը: Ամբողջությամբ մեջ բերելով հիշյալ բանաստեղծության բնագիրը, Պալասանյանն առանձնահատուկ ուշադրության է արժանացնում այն տողերը, ուր խոսվում է ազատության մասին. նոր զինվորագրվողն ազատության համար պատրաստակամություն է հայտնում թափելու իր և ուրիշների արյունը... Ազատությունը, ասում է նա, «մի արյունագույն վարդ է, որ ծաղկում է պատերազմական դաշտերի վրա»: Բանաստեղծը՝ «ավելի գեղեցիկ» մեկնաբանություն է տալիս. «Ազատությունը մի երկնային ծաղիկ է, որ պատկանում է ազգերին: Ի՛նչ գործ ունին նորա հետ թագավորներն ու

¹⁷⁴ Բոլոր բանաստեղծությունները մեջ են բերվում ազատ թարգմանությամբ, առանց բանաստեղծների անվան հիշատակության:

կայսրները»: Պալասանյանը հունգարացիներին առհասարակ թագավորասեր ժողովուրդ համարելով, գտնում է, որ բանաստեղծությունն այնուամենայնիվ ճիշտ է արտացոլում պատմական ժամանակաշրջանի ոգին: «Անկախության համար տված պատերազմի ժամանակ ստեղծված երգերի մեջ, — գրում է նա, — չես պատահում թագավորություն բառին, իսկ եթե պատահում ես, անշուշտ նրանից առաջ կամ հետո մի անեծք է լինում, բայց ավելի հաճախ մի բացարձակ լռություն է տիրում»:

1848 թ. դեկտեմբերին և հաջորդ տարվա սկզբին պատերազմական գործողությունները լարված ընթացք են ստանում: Հունգարացի հասարակ արհեստավորը կամ ուսանողը, ամենքը զինվորագրվում են: Այդ օրերին նրանք երգում են նորածիլ ազատության երգերը, իրենց սերը, տխուր բաժանումը սիրած էակից: Հոգվածում ամբողջությամբ մեջ է բերվում «Վարդի կոկոնը բացվում է: Վերջապես իմ քաղցր հայրենիքի դրոշը ծածանվում է օդում» բանաստեղծությունը: Սրան հաջորդում է մատաղահաս աղջիկների հրաժեշտի երգը («Արտասուքները խեղդում են ինձ, որովհետև բարեկամս բաժանվել է ինձանից»): Որքան էլ այդ երգը թախծոտ է, հունգարացի օրիորդները չեն վիատեցնում իրենց քաջերին: «Այդ հակառակ կլինեմ մի երկրի ավանդությանը, — գրում է Պալասանյանը, — ուր կանայք քաջասրտությամբ միշտ հավասար են եղել այդ մարդկանց, թե ամուր բերդերը պաշտպանելով, ինչպես Երևակի կանայքը կամ Եղիսաբեթ Բակոշին, թե շարունակ և խաղաղ ճանապարհով ազգային լեզվի ու սովորությունների սրբազան ավանդը պահպանելով»:

Պալասանյանը, թեկուզ համառոտակի, հիշում է նաև ռազմի դաշտ մեկնող զինվորի և նրա մոր հրաժեշտի երգերը:

Հունգարացիները նահանջում են ավստրիացիների, խորվաթների և ռուսական բանակի առջև: Հունգարական քաղաքներն ընկնում են թշնամու ձեռքը: Եվրոպայում կարծում են, թե հունգարացիները պարտված են: Ինչպես գրում է Պալասանյանը, այդ կարծիքը ժամանակավրեպ էր: «Հունգարացիք այդպես շուտ անձնատուր չէին լինելու: Հայրենասերները իրանց պարտության առաջին շրջանում քիչ էին խոսում, այլ ավելի ներգործում էին: Շատ սակավ երգեր ենք գտնում, որ մի ակնարկություն անեն այդ դժբախտ ժամանակի վրա, այլ միայն

տեսնում ենք, որ ազգային գործի պաշտպանները, մղվելով միմյն էրկրի կենտրոնը, բուն Հունգարիայի դաշտային մասը, այն Պոլստան, այն Ալֆեոլը, որ այնքան անգամ երգել է Պետեֆին, նոր ուժեր էին ստանում այնտեղ: Կարծես թե այս արգավանդ երկիրը՝ զինվորված մարդիկ, հերոսներ ծնելու ծիրքն ունենար, որի շնորհիվ պիտի կատարվեր հպարտ Պոմպեոսի երբեմն հայտնած հրաշքը, այսինքն, թե բավական է երկրին ոտով խփել, որ լեգեոններ ծնին»:

Այս օրերին ամենքն են զինվորագրվում. ծերունիներ ու երեխաներ (օրինակ, մի ութամյա մանուկ), կալվածատերեր ու մշակներ, բոլորը... առանձնակի թեթևությամբ են սլանում հուսարները. նրանցից մեկի՝ Պերչելի մասին հորինած երգից մի քանի տող թարգմանելով, Պալասանյանը ճշմարիտ գիտնականի բժախնդրությամբ նկատում է, որ իր թարգմանությունը «չէ կարող արտահայտել բնագրի թեթև միանգամայն և վայրենի ներդաշնակությունը»:

Հոդվածի վերջաբանը նվիրված է հունգարացիներին օժանդակող ֆրանսիացի գործիչներին (Օգյուստ դը ժերանդո, Գիվեո) և լեհերին, որոնց հետ նրանք դաշնակցում էին 1831 թ. ի վեր: Նրանք դեմ հանդիման էին կանգնած երեք հյուսիսային թագավորություններին: «Լեհացիք, 1831-ի ապստամբության ժամանակ մեծ նպաստ էին գտել հունգարացոց կողմից...», — սկսում է Պալասանյանը, բայց նախադասությունը մնում է անավարտ:

Ա. Հովհաննիսյանը միաժամանակ հետևում էր Հունգարիայի կյանքին, անձամբ ծանոթ էր որոշ գործիչների և պրոֆեսորների հետ, ստանում էր "Journal d'Orient" շաբաթաթերթը. «Արծազանքում» տեղեկություններ էր հաղորդում Սամոշվարի հայության կյանքի, նրանց «Արմենիա» լրագրի մասին: 1893 թ. Մ. Յոկայի գործունեության 50-ամյակի առիթով գրված հոդվածում նա շտապում է շեշտել, որ գրողը քանքարավոր մատենագիր լինելուց բացի՝ ազատության մարտիկ է: Նա «հայտնի է Հունգարիայում, — գրում է Հովհաննիսյանը, — և իբրև մեծ հայրենասեր, որ յուր մտերիմ Պետեֆիի հետ միասին բորբոքել է յուր ազգի սրտում ազատասիրական վառ զգացմունք և մեծապես նպաստել է 1848 թվականի ազգային շարժմանը: Պարտությունից հետո Յոկան ոգևորիչ բանաստեղծությամբ

խրախուսեց յուր հայրենակիցներին, հուսով վառեց նոցա լքյալ հոգին և այնուհետև միշտ ազգային անկախության ու ազատության քարոզիչ է եղել»¹⁷⁵։

Ստանալով Կոշուտի մահվան լուրը, Ա. Յովհաննիսյանն առաջին հերթին տպագրում է Յոկայի խոսքը, արտասանված մարտի 21-ին, Կոշուտի թաղման օրը։ Անկախ այն բանից, որ այդ խոսքը Կոշուտի վաստակի ամենահիմնավոր (և բանաստեղծական) գնահատականն էր, Յովհաննիսյանը չէր կարող հաշվի չառնել և այդ խոսքի բուն ոգին, Կոշուտի թողած ավանդների վերհանումը։ Վերջին հաշվով այդ ավանդները շատ էին հարկավոր նաև անլուծելի քաղաքական հանգույցի առջև խարխափող արևմտահայերին։ «Ստեղծագործող խոսքի, աշխարհալույս գաղափարի պտուղները՝ *անբաժան Յունգարիան, ազատ ազգը, իրավանց հավասարությունը, անբռնազրոս միտքը կմնան հավիտյան*»։

Օրեր անց Յովհաննիսյանն իր թերթում զետեղում է Լ. Բաբայանի «Լյուդովիկոս Կոշուտ» հոդվածը, ուղարկված Լայպցիգից (մարտի 31-ին)¹⁷⁶, որտեղ հեղինակը ներկայացրել է Կոշուտի կենսագրության ամենամանրամասն շարադրանքը։ Յոդվածի սկզբում Բաբայանը գնահատականի ծանրակշիռ խոսք է ասում Կոշուտի հասցեին։ Այդ խոսքը տեսանելի է դարձնում ճշմարիտ հայրենասիրության ամբողջ վեհությունը և դրա անդինադրելի ձգողական ուժը։ Այդ խոսքը միաժամանակ անուղղակի խրախույս էր բոլոր նրանց համար, ովքեր իրենց մեջ աննշան իսկ կորով էին զգում՝ պիտանի լինելու իրենց հայրենիքին։

Կոշուտն անհասանելի էր իր մեծությամբ, ուստի և անմահացած՝ «տիեզերական պատմության մեջ և, մասնավորապես, հունգարական պատմության մեջ», – գրում է Բաբայանը։ Կոշուտն իր կյանքի և գործունեության ամբողջ ընթացքում աշխատում էր Յունգարիայի սուրբ գործի՝ ազատության համար։ «Կոշուտը զարմանալի հաստատականությամբ 1847 թ. իր արմատական-դեմոկրատական աշխարհահայեցողության մինչև

¹⁷⁵ «Արծազանք», 1893, թիվ 135։

¹⁷⁶ Նույն տեղում, 1894, թիվ 37-38։

վերջը հավատարիմ մնալով, աշխատել էր իր ազատամիտ քաղաքական կարծիքները, ցանկություններն ու պահանջները իր հայրենիքի ազատության համար գործադրել և Հուզարիայի անկախությունը ծեռք բերել: Նա ֆանատիկական ատելություն էր տածում դեպի Հաբսբուրգյան տունն ու ժամանակակից տերությունները և միշտ աշխատում էր Հուզարիայի նշանավոր մարդկանց իր աշխարհահայեցողությանց հետ ծանոթացնել և այդպիսով Հունգարիայի անկախության գործին նպաստել: Եվ հիրավի նա կարողացավ մեծ և պատվավոր ընդունելություն գտնել Հունգարիայի ազատամիտ և դեմոկրատ կուսակցության մեջ: Հունգարիայի այդ կուսակցությունն ի դեմս Կոշուտի միշտ տեսել է երկրպագության արժանի այն մարտիրոսին և քաղաքագետ մեծ մարդուն, որի միակ նպատակը իր հայրենիքի ազատությունը և դրա՝ ապագայում ունեցող բարելավոք դրությունն է եղել»¹⁷⁷:

Այնուհետև՝ Բաբայանը շարադրում է «պատմական այդ մեծ քաղաքագետ և հայրենասեր մարդու» կենսագրությունը: Ոչինչ այստեղ չի մոռացվել: Կենսագրական փաստերի հետ մեկտեղ, Բաբայանը փորձում է զնահատական տալ պատմական հանգուցային հարցերին: Այսպես, նրա կարծիքով, Կոշուտի հրաժարականը օգոստոսին՝ «Հունգարիայի անկախության գործին ահագին վնասներ տվեց»: Նա վերլուծում է և Գյորգեյի վարքագիծը: Հենվելով վերջինիս՝ հրապարակի վրա եղած նամակների վրա, Բաբայանն այն միտքն է հայտնում, թե նա ավստրիական և ռուսական բանակների հետ գտնվում էր գաղտնի հարաբերության մեջ: «Ինչպես երևում է, Գեորգեյը կամեցել է Հունգարիան մատնել, — գրում է Բաբայանը, — միայն թե կարողանա մեծ փառքի հասնել»¹⁷⁸: Սակայն չմեղանչելու համար պատմական ճշմարտության առջև, նա այնուամենայնիվ ավելացնում է. «Պատմությունը այս դեպքը դեռ չէ որոշել, թե արդյոք այդ բանը Գեորգեյի կողմից մատնություն է եղել, թե ոչ»:

Սրան հաջորդում է Կոշուտի շրջագայությունների պատմությունը: Անգլիան բուռն ծափահարություններով է ընդունում ազատության մարտիրոսին, այնինչ ԱՄՆ-ում մեծ հեղափոխա-

¹⁷⁷ Նույն տեղում, թիվ 37:

¹⁷⁸ Նույն տեղում, թիվ 38:

կանն իր դեմոկրատական գաղափարների համար հաստատուն հող չի գտնում: 1858 թ. նա վերադառնում է Լոնդոն: «Այստեղ նա Մաժձինիի և Ռուլլինի հետ կարմիր դեմոկրատների պաշտպանն էր հանդիսացել: Կոշուտը Լոնդոնից միշտ աշխատում էր իր հայրենիքի հեղափոխությունը փութացնել, բայց այս բանը դժբախտաբար չէր հաջողվում: Վիլլոֆրանկայի խաղաղությանը նրա վերջին հույսերն էին դրել ելան և Յունգարիայի անկախության գործը բոլորովին փչացավ: Այդ ժամանակվանից սկսած նա բոլորովին կատաղի բնավորություն էր ստացել: Կոշուտի պես մեծ հայրենասերը չէր կարող իր բնավորությունը չփոխել, որովհետև տեսնում էր, թե ինչպես իր երկարամյա աշխատությունն իզուր անցավ»¹⁷⁹ (ընդգծումը մերն է— Մ. Մ.):

Նա մահացավ մարտի 21-ին «մեծ ցավ և կսկիծ պատճառելով այն հունգարացիներին, որոնք Յունգարիայի անկախության գաղափարով էին ոգևորված: Կոշուտի մահով հունգարացիները կորցնում են իրենց ամենամեծ և ամենասիրելի հայրենասեր և քաղաքագետ մի անձնավորություն, որ Յունգարիայի երջանկությունը միայն նրա ազատության մեջ էր տեսնում:

Հանգիստ ոսկորներիդ, մե՛ծ հայրենասեր...»:

Հունգարական հեղափոխության նկատմամբ նման ակնածանք՝ «Արձագանքի» խմբագրությունն արտահայտում է երկու տարի անց՝ Հունգարիայի հազարամյակի տոնակատարության օրերին: 1896 թ. մայիսին Ա. Հովհաննիսյանը գրաքննությանն է ներկայացնում «Հունգարիայի ազատությունը» հոդվածը, որի հեղինակը հայ մանկավարժ և լրագրող Գ. Ճաղարբեկյանն էր: Գրաքննիչն ամեն բանից առաջ շտապում է փոխել հոդվածի վերնագիրը, այն դարձնելով «Հունգարիայի հազարամյակի առթիվ», այնուհետև՝ հանգամանորեն ծանոթանալով բովանդակությանը՝ կողմնակալության պատճառաբանությամբ արգելում է դրա լույս ընծայումը¹⁸⁰:

Խմբագրի համառ ջանքերի շնորհիվ միայն, այդ հոդվածը տպագրվում է «Արձագանքի» սեպտեմբերի 11-ի համարում: Հայ հասարակական մտքի պատմության համար ուշագրավ երևույթ

¹⁷⁹ Նույն տեղում:

¹⁸⁰ Վրացական կենտրոնական պետական պատմական արխիվ, ֆ. 480, գիրք լրացուցիչ, Ա գործ, թիվ 179:

է և այն, որ հազարամյակի առիթով պատրաստված հոդվածում
ևս, հայ հրապարակախոսները վերստին խոսում էին 1848-1849
թթ. հեղափոխական անցքերի մասին, իրենց ընթերցողների
ուշադրությունը կենտրոնացնում Յունգարիայի անցյալի փոթոր-
կահույզ իրադարձությունների վրա: Պատմական ժամանա-
կաշրջանի հրաշունչ մթնոլորտը վերականգնելու նպատակով,
հոդվածագիրն ամբողջությամբ մեջ է բերում ազգային մեծ եր-
գիչ Վերեշմարտիի հռչակավոր «Կոչ» բանաստեղծությունը
(«Անդալաճան սե՛ր և հավատարմություն պահպանիր դեպի
հայրենիքդ, մաջա՛ռ: Նա՛ է քո օրրանը. նա է քո գերեզմանը. նա
ծնում, փայփայում է քեզ, և երբ մեռնում ես, յուր գիրկն է
առնում»):

Ճաղարեկյանը վկայակոչում է պատմական այն գործոն-
ները, որոնք հուզում էին հունգարացիներին, պայքարի կոչում
նրանց: Ֆրանսիական հեղափոխությունը, հավասարության և
ազատության կրակոտ քարոզները չէին կարող չներգործել
նրանց վրա: Հուզվում էր և Իտալիան... Կոշուտը և Պետեֆին
սկսում են նախապատրաստել հունգարական ապստամբու-
թյունը: «Արծազանքի» թղթակիցը ներկայացնում է այդ երկու
գործիչներին, որոնք աներկյող գլխավորում են հեղափոխական
շարժումը: «Կոշուտը յուր հայրենիքի մեծ մարդն է. նա նուրբ
քաղաքագետ էր և խիզախ գործիչ: Պատահարների և փորձու-
թյանց դեմ աննկուն՝ որպես քարաժայռ, մրրիկների ժամին՝
անվրդով, անայլայլ, նպատակին դիմելիս՝ արագ ու անվրեպ՝
որպես լարից արծակված նետը, և ճակատագրի ու չարության
դեմ՝ ամպրոպ: Նա իշխում էր Յունգարիայի մտքի վրա, նա էր
ուղղություն տալիս ամենի քայլերին:

Ուրիշ էր Պետեֆին, դա ևս մարմնացած հայրենասիրու-
թյուն էր: Բայց յուր ռազմական ու մարգարեական երգերով
ազդում էր յուր հայրենակիցների զգացմունքների վրա, թև ու
թռիչք էր տալիս նրանց հայրենասիրության: Քաղաքներում և
գյուղերում, երիտասարդ ու ծեր, այր ու կին, դշխո և աղախին
նրա երգերն էին երգում: Եվ 1848-49 թվականների հունգարացի
ավստրիական զորաց թնդանոթների առջևը կանգնած՝ նրա
երգերովն էր ոգևորվում»¹⁸¹:

¹⁸¹ «Արծազանք», 1896, թիվ 100:

Հոգվածագիրը հանգամանորեն պատմում է հունգարական հեղափոխության ընթացքի, վերելքի և պարտության պատճառների մասին: Նա հոգվածն ավարտում է հայ ընթերցողներին հղված մի խորհմաստ հետևությամբ: Պարտությունից հետո Հունգարիան թեև ընկճված էր, բայց խորտակված չէր: «Նա կենդանի էր. մա դեռ երգում էր պատերազմի դաշտում գնդակի համբույրով մահացած Պետեֆիի երգերը»: Այդ դեպքերից տարիներ անց՝ 1867 թ., իրերի պատմական ընթացքը կյանքի է կոչում Ավստրո-Հունգարական միացյալ պետությամբ: Հունգարիան վերջապես հասնում է երանելի անկախության և, ինչպես գրում է ճաղարբեկյանը, աշխարհին «ուզում է ցույց տալ, թե ո՞րպիսի բարերար ազդեցություն է ունեցել այն վիճակը, որ Հունգարիան ձեռք է բերել յուր ընտիր որդոցը զոհելով»:

Սա ծրագիր էր հայության համար: 1896 թ. Արևմտյան Հայաստանը կանգնած էր կործանման եզրին, ինչպես ոչ հեռավոր անցյալում Հունգարիան, որն ազատագրվեց «յուր ընտիր որդոցը զոհելով»: Ի՞նչ ճանապարհ պետք է ընտրեին հայերը: Լուծման ուղղությունը բացահայտված էր: Սակայն «Արծազանքի» խմբագիրն ավելի է ընդարձակում իր հարցադրման սահմանները: 1896 թ. Արևելյան Հայաստանում ինքնակալությունը փակել էր հայկական դպրոցները և հետապնդում էր մշակութային կազմակերպությունների գործունեությունը: Մայրենի լեզվի հետագա զարգացման և այն պահպանելու խնդիրը մեծապես վտանգված էր: Հունգարիային նվիրված ճաղարբեկյանի հոդվածը միջոց էր ստեղծված իրավիճակի վտանգավորության աստիճանն ընթերցողներին հասու դարձնելու համար:

Ճաղարբեկյանն ամբողջովին մեջ բերելով Պետեֆիի «Իմ խնդրած մահը» բանաստեղծությունը, հարցնում է, թե ինչո՞ւ էր բանաստեղծը ցանկանում մեռնել ռազմի դաշտում: Որովհետև, շարունակում է նա, «Ավստրիան մաջարներին երկաթի կյանք էր միայն շնորհում: Մետեռնիխի քաղաքականությունը ձգտում էր ոստիկանական միջոցներով ճնշել ազգերի հոգին, մեռցնել ամեն մի ազատական ձգտում, Պետեֆին, նրա հետ և հունգարական ամբողջ ազգը, տեսնում է, որ այդ խաղաղ մահը չէ յուր բաժինը»:

Եթե Ա. Հովհաննիսյանը, սկսած «Փորձի» հրատարակու-

թյան օրերից, հունգարական թեման նպատակալսաց ձևով օգտագործում էր սաստկացնելու համար պայքարը սուբանական բռնապետության դեմ, ապա դարավերջին, Նիկոլայ II-ի ազգահալած քաղաքականության շրջանում, «Արծազանքի» խմբագրությունը Մետեռնիխի քաղաքականության քննադատությամբ (որը «ձգտում էր ոստիկանական միջոցներով ճնշել ազգերի հոգին») հունգարական թեման օգտագործում էր նաև արևելահայության նկատմամբ կիրառվող բռնությունների դեմ:

1897 թ. Հովհաննիսյանի թերթում սկսում են հաճախակի հրապարակվել չեխերին տրված լեզվական իրավունքների շուրջ խորհրդարանում ծավալված վեճերին առնչվող լուրերը: Հարցի պատմությունը հետևյալն էր: Ավստրիական կառավարությունը երկյուղելով այն բանից, որ չեխերը կմիանան հունգարացիներին, որոնք իրենց հերթին գոհ չլինելով ունեցած ինքնավարությունից, «ձգտում են ոչնչացնել Ավստրո-Հունգարիա խոսքի միջի փոքրիկ միացուցիչ գիծը և ինքնուրույն պետություն կազմել Հունգարիա անունով», թույլատրում է չեխերեն լեզուն մտցնել վարչական, դատական և դպրոցական հաստատությունների մեջ:

Վիեննայի քաղաքային խորհուրդը պահանջում է կայսրից չեղյալ հայտարարել վճիռը: «Արծազանքի» խմբագիրն այս պատեհ իրավիճակում ավելացնում է արևմտահայ ժողովրդի կենսափորձից առած իմաստուն մի դատողություն. «Հասկանալի է, իհարկե, թե ի՞նչ հետևանքներ կարելի է սպասել, եթե ավստրիական կառավարությունը այդպիսի մի սխալ քայլ անե, որովհետև Հունգարիան Տաճկաստան չէ, որ կարելի լինի անպատիժ ազգերի լեզուները կտրել»¹⁸²:

Հունգարիան չափանիշ էր: Այդ հաստատվում է բազում օրինակներով: Այս նույն հոդվածում «Արծազանքի» խմբագրությունը մեջ է բերում հունգարական "Nar. nov." թերթի խորհրդածությունը, որի հեղինակը ոչ միայն իրերն է կոչում իրենց անուններով, այլև ամենայն արժանապատվությամբ ազատասիրական իր խոհերն է նետում բռնակալական կառավարության դեմքին:

Թերթի տեսաբանը գրում է. «Գերմանական օպոզիցիան պառլամենտում աշկարա ցույց է տալիս տևտոնյան կոպտու-

¹⁸² Նույն տեղում, 1897, թիվ 57:

թյուն, մի ազգի մյուսի դեմ կատաղի բռնակալություն, թթու ազգասիրություն, որ բարկանում է և կատաղում միայն այն պատճառով, որ ուրիշներն էլ շնչում են, ապրում են: Օ՛հ, ի՞նչ դժվարությամբ է մի ազգ՝ նույնիսկ չնչին իրավունք ձեռք բերում, եթե նա դատապարտված է հարյուր տարի ապրել մի ուրիշ ավելի արտոնված ազգի հետ, դրա ապացույցն է Չեխիան»:

Խորհրդարանի վեճերի առիթով "Nar. nov."-ի հոդվածագիրն ավելացնում է. «Սա խաղ է: Բայց տխրալի, մանավանդ ստրկացած, կողոպտված, ճնշված մաջարական ազգերի համար... Թշվառ Հունգարիա, ի՞նչ դարձրին քեզ»:

Կշտամբանքի այս խոսքերը մեծ խորհուրդ ունեին և հայ ընթերցողի համար. ինչպիսի՞ բավականությամբ հայկական թերթերը, եթե միայն հնար և քաջություն ունենային, սուլթանական բռնապետության դեմքին կնետեին հունգարական թերթի այդ խոսքերը: Սակայն նրանք զրկված էին մարդկային բանականության սահմանած այդ հասարակ իրավունքից իսկ:

Ինչպես արդեն նշեցինք, Ա. Հովհաննիսյանը ստանում էր Արևելքին նվիրված հունգարական պարբերականները և կենդանի հետաքրքրություն ցուցաբերում դրանց էջերում գետեղված նյութերի հանդեպ: Այս առումով ուշագրավ է, որ որքան էլ ազատասիրության ու խիզախության առումով Հունգարիան Հովհաննիսյանի համար չափանիշ էր, նա այդուհանդերձ չէր երկնչում և հունգարական որոշ հրատարակությունների հետ բանավեճի մեջ ընդգրկվելուց: Այսպես, «"Journal d'Orient"-ի մի նոր սխրագործությունը և դր. Հորվաթը» հոդվածում նա մերկացնում է հիշյալ շաբաթաթերթի թույլ տված կեղծիքը:

Բնական գիտությունների դոկտոր Հորվաթը ռուսական կառավարության հրավերով գալիս է Կովկաս՝ ուսումնասիրություններ կատարելու: Վերադարձից հետո նա հրապարակային դասախոսություն է կարդում Կովկասի մասին, որի թեզերը կեղծում է ամսագիրը՝ դասախոսի անունից բացասական գծեր վերագրելով հայերին: Հովհաննիսյանը Հորվաթից խնդրում է նրա զեկուցման թեզերը, որոնք և հենց ֆրանսերեն լեզվով հրապարակելով «Արծազանքում», հույս է հայտնում, որ ամսագիրը կուղղի իր «դիտավորյալ սխալը»¹⁸³:

¹⁸³ Նույն տեղում, 1894, թիվ 38:

Հովհաննիսյանը բազմիցս խոսել է և հունգարացի գիտնական Վամբերիի մասին, որը սուլթան Աբդուլ Համիդ II-ի սիրալիրություններին պատասխանում էր հայության դեմ գրված իր անպատեհ հոդվածներով: «Մոնղոլական տրամաբանություն» բանավիճային փայլուն հոդվածում Հովհաննիսյանը մերկացնում է Վամբերիի գրչակից Սազվարի եղբայրներին: Նրանք Հունգարիայում հրատարակում էին ժամանակի «սողուն թերթերից» մեկը՝ "Revue d'Orient et de Hongrie"-ին:

Թերթը տպագրում է Լըվալի մի հոդվածը («Քաջամարտիկ պաշտպան Ոսկեղջյուրի իշխանության»), որի հեղինակը փորձում է ապացուցել, թե հայերը երջանիկ են Տաճկաստանում: Թուրքական «Սաբահ» լրագրից քաղված կեղծ վիճակագրական տվյալների հիման վրա, նա հայտնում էր, թե հայերի թիվը Տաճկաստանում կազմում է ընդհանենը 997.369 հոգի, և թե իբր Փոքր Ասիայի բոլոր վիլայեթներում մահմեդականները երեք անգամ գերազանցում են քրիստոնյաներին: Այնուհետև՝ Լըվալը խորհուրդ էր տալիս պոլսահայերին՝ ազդել իրենց դրսի եղբայրների վրա, «որ նրանք հանգիստ կենան, որովհետև իրանք երջանիկ են»:

«Ճշմարիտ է, որ Տաճկաստանում կան հայ մեծ պաշտոնյաներ, — գրում է Հովհաննիսյանը, — սակայն մի՞թե դրանից հետևում է, որ հայերի վիճակը երջանիկ է: Ճշմարիտ է, ենթադրենք, որ հայերը ոչ թե 900.000 են, այլ 4 հոգի միայն, ի՞նչ է հետևում, պետք չէ՞ արդյոք նրանք անդորր վիճակ ունենան:

Մենք խոսք չենք գտնում պ. Լըվալի վարմունքը բացատրելու, այսքանը կասենք միայն, որ այդպիսի մի հունգարացի հրապարակագրի գոյությունը անպատվություն է բերում Պետեֆիի հայրենիքին»¹⁸⁴:

Ինչպես տեսնում ենք, Աբգար Հովհաննիսյանի համար Պետեֆիի դուլցազնական կերպարը մարմնավորում էր Հունգարիա հասկացողությունը, որն իր հերթին պայքարի և հաղթանակի խորհրդանիշն էր: Ուստի, նրա համոզմամբ, յուրաքանչյուր հունգարացի պետք է պատասխանատվություն կրեր իր երկրի արժանապատվության համար:

¹⁸⁴ Նույն տեղում, 1893, թիվ 91:

Մեր կողմից հիշատակված հոդվածները բնավ չեն սպառնում նյութերի այն շարքը, որը տեղ է գտել XIX դ. երկրորդ կեսի հայ պարբերական մամուլի էջերում: Այդ մամուլը հարուստ է և հետևաբար կարոտ առավել հիմնավոր ու մանրագնին ուսումնասիրության: Հրապարակված փաստերը, սակայն, անվերապահ են դարձնում այն իրողությունը, որ առաջավոր հայ գործիչների համար Հունգարիան սոսկ պետություն չէր, այլ բարոյական անբասիր մի չափանիշ միջազգային ասպարեզում:

XIX դ. վերջին քառորդի ճգնաժամային իրադրության պայմաններում հայ մտավորականներն իրենց հայացքը հաճախ են շրջել դեպի Հունգարիան և կենսական ուժեր քաղել 1848-1849 թթ. հեղափոխության բովում թրծված այդ երկրի ազատասիրական ավանդներից: Հունգարական հեղափոխությունը հարստացրել է հայ հասարակական միտքը, առավել հատու դարձրել հրապարակախոսական խոսքը և ապագայի նկատմամբ վստահություն ներշնչել ազատասեր հայ ժողովրդին:

ԱՆՁՆԱՆՈՒՆԵՐԻ ՑԱՆԿ

Ա

Աբդուլ Ջամիլ II – 120

Ազոնց – 39

Աղաթոն Մ. – 57

Աղանյան Գ. – 89

Անդրաշի – 105-106

Ավգերյան Յ. – 91

Ավերբուխ Ռ. – 16, 37

Ավերսբերգ – 50

Արան Յ. – 104, 109

Արծրունի Գ. – 85

Արփիարյան Ա. – 91

Աուլիխ – 39

Բ

Բաբայան Լ. – 113-114

Բակունին Մ. – 73-74

Բայրոն Ջ. – 91

Բասգևիչ տե՛ս Պասկևիչ

Բատիանի-Լ. – 17-19, 39, 54

Բարխուդարյան Գ. – 86-87,

89-90, 107

Բարխուդարյան Մ. – 89, 91

Բեիբուդյան – 55

Բեմ – 22, 27-30, 36, 38, 52-53,

55, 57-61, 63-64

Բերթել – 63

Բուդադյան Մ. – 81-82

Բուլիե Լ. – 90

Բուխնեյր – 28-29, 58

Բուրբոններ – 80

Գ

Գաստիլիոնե – 29

Գարա – 109

Գարա Սուստաֆա – 23

Գարիբալդի Ջ. – 73-74, 76, 80

Գարկեր Տ. – 43

Գյորգեյ Ա. – 28, 34-39, 52-53,

60-61, 63-64, 66, 114

Գերվինուս Գ. – 97

Գերցեն Ա. – 81

Գիշ Է. – 10, 17, 26, 39, 55

Գիվեո – 112

Գիուլայի – 109

Գնեզիչ – 39

Գոշուֆ տե՛ս Կոշուտ –

Դ

Դամյանիչ – 39

Դաֆորա – 14

Դեժոնֆի – 39

Դեմբինսկի – 34, 38, 52-53, 57,

62

Դյունա հայր – 80

Դոբոգ – 101

Դոբրոյուբով Ն. – 79

Ե

Եզովպոս – 67

Ելաշիչ Յ. – 16-17, 19, 22, 26,

29, 34-35, 39, 47, 50, 61, 110

Եպարքոս – 69

Է

Էօսվեշ – 103

Թ

Թաղիադյան Մ. – 4, 65-68

Ժ

Ժերանդո Օ. – 112

Լ

Լազար Վ. – 38-39

Լամբերդ – 18-19, 22

Լայնինգեն-Վեստերբուրգ – 39

Լաներ – 39

Լատուր – 20, 22, 42, 50

Լեդերեր – 15

Լեոպարդի Ջ. – 84-85

Լըվալ – 120

Լյուտեր – 61

Լոնգֆելլո Յ. – 84

Լուգաչ Դ. – 40

Լուի Ֆիլիպ – 12

Լուկով – 19

Ծ

Ծատուրյան Ալ. – 90-92

Կ

Կեռնեյ տե՛ս Գյորգեյ

Կեորկեյ տե՛ս Գյորգեյ

Կիվյոն – 38

Կոշուտ Լ. – 9, 13, 16-19, 23, 25-27, 30-31, 33-36, 38, 41, 43-46, 50-51, 55, 57, 59-61, 63-64, 68, 70, 74, 105-107, 113-116

Կորովեյ Ի. – 41

Կորովյան տե՛ս Կորովեյ –

Հ

Հայնալ – 34-35, 38-39, 42-43, 56, 62-63

Հավեր Լ. – 42

Հարությունյան Իս. – 105

Հերման – 107

Հեֆներ – 14

Հոնվետ – 40

Հովհաննիսյան Աբգար – 85, 99-100, 105, 107-108, 112-113, 115, 117-120

Հովհաննիսյան Աշոտ – 73-74, 81

Հովհաննիսյան Հ. – 90-95

Հովսեփ II – 102

Հորվաթ – 119

Ղ

Ղազարյան տե՛ս Լազար Վ. –

Ճ

Ճաղարբեկյան Գ. – 115-117

Ս

Մալունյան Իս. – 106

Մածծինի տե՛ս Մածծինի

Մածծինի Ջ. – 43, 73-74, 76, 115

Մամիկոնյան Վ. – 92

Մամիկոնյանց Յ. – 70

Մամուրյան Մ. – 106

Մատարաշ – 18

Մարիա Թերեզա – 102

Մարտով – 91

Մելիք-Մեհրաբով – 99

Մեծարոս տե՛ս Մեսարոշ

Մեսարոշ – 26, 34, 38, 52, 60,
63

Մեսսենիաուզեր – 22

Մետեռնիս Կ. – 12, 76, 106,
117-118

Միանսարյան Մ. – 83-84

Մխիթարյան Մ. – 85-86, 101

Մխիթարյաններ – 6-11, 13, 19-
20, 22, 24, 27, 29, 31, 34-
35, 37, 39-42, 44, 46-49,
52, 65, 74

Մոկա – 26

Մուր Թ. – 84, 90

Յ

Յաղուբյան Կ. – 105

Յոկա Մ. – 104, 105, 107, 112-
113

Ն

Նաբոլի – 64

Նադ Շանդոր – 39

Նազարյան Տ. – 105

Նալբանդյան Մ. – 72-84, 90,
98, 106

Նիկոլայ I – 33, 43, 55, 66, 71,
74, 76

Նիկոլայ II – 118

Նիկողայոս Ա. տե՛ս
Նիկոլայ I –

Նյուժան – 25, 34

Շ

Շահնազարյան Կ. – 105

Շիրխոր Կ. – 67

Շլիք – 26, 29

Շվայտլ – 39

Չ

Չամուռճյան Յ. – 57, 106

Չիլինկարյան Յ. – 104

Չուչոր – 110

Պ

Պալասանյան Ստ. – 96-97, 99,
102-103, 107-112

Պալտազարյան Ղ. – 49, 52

Պալոկ Յ. – 19

Պասկևիչ Ի. – 34-35, 37, 43, 52-
53, 55, 63-64, 66

Պատկանյան Գ. – 69-70

Պատկանյան Ռ. – 83, 86-87

Պեմ տե՛ս Բեմ –

Պենետեք – 29

Պետերսոն – 102

Պետեֆի Շ. – 82, 84-89, 91, 94-
95, 103-105, 107, 109, 112,
116-117, 120

Պերչել – 38, 52, 112

Պիսթոնց – 64

Պյոլտենբերգ – 39

Պոմպեոս Գ. – 112

Ռ

Ռադոմիստ – 101

Ռյուտիկեր – 37-38

Ռուլին – 115

Ս

Սազվարի եղբայրներ – 120

Սաս – 34

Սարինյան Ս. – 82

Սեմերե – 17

Սեմպեշի – 19

Սիմոնիչ – 25-26

Սկարյադին – 29
 Սոպիենքի (Սոբենսկի) Յ. – 23
 Սպանդարյան Ս. – 106
 Սվաճյան Հ. – 80-81
 Ստեփաննե Խ. – 84-85
 Սուրբ Ստեփանոս – 23, 27, 43,
 60, 102-103

Վ
 Վամբերի Ա. – 120
 Վեթքեյ – 64
 Վելդեն – 29, 31
 Վեչեի – 39
 Վեսելովսկի Ա. – 91
 Վերեշնարտի – 104-105, 116
 Վինդիշգրեց Ա. – 7, 23, 25-27,
 29-30, 39, 50-51
 Վոլկենուք – 29
 Վուսին – 34

Տ
 Տալեն – 25
 Տերյան Վ. – 89
 Տյորեք – 39
 Տյումա հայր տե՛ս Դյումա
 հայր –
 Տոք – 109

Ր
 Րակոշի Ե. – 111

ՌԻ
 Ռեպսդեր Դ. – 45

Ք
 Քասսոնդ տե՛ս Կոշուտ –
 Քեչյան Բ. – 104-105
 Քիշ տե՛ս Գիշ
 Քմեթի – 64
 Քյուֆալու – 104
 Քմեռիք – 64
 Քոշուք տե՛ս Կոշուտ

Օ
 Օգարյով Ն. – 81
 Օ'գոմեյլ – 9

Ֆ
 Ֆեդդեր – 39
 Ֆոկլ – 29
 Ֆոհք – 76
 Ֆուադ – 55

ՄԱՐԳՈ ՄԽԻԹԱՐՅԱՆԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

1956

Մ. Նալբանդյանի շուրջ արևելահայ մամուլում ծավալված մի պոլեմիկայի մասին // ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր», թիվ 4, էջ 73-80:

Խոշոր ավանդ նալբանդյանագիտության մեջ (*գրախոս. Աշ. Հովհաննիսյան*, Նալբանդյանը և նրա ժամանակը, գիրք 1, Երևան, 1955) // «Գրական թերթ», 7.VI:

«Վազը» վեպը (*գրախոս. Մ. Դավթյան*, Վազը, Բաքու, 1955) // «ՍԳ», թիվ 4, էջ 143-145:

1958

«Հյուսիսափայլ» ամսագիրը, Երևան, 262 էջ:

Գրախոս. Ս. Ավագյան, Արժեքավոր աշխատություն «Հյուսիսափայլի» մասին // «Երևանի համալսարան», 25.III.1959:

«Հյուսիսափայլի» հիմնադրման պատմությունից // ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր», թիվ 2, էջ 79-80:

Բանասիրական պրպտումներ // Նույն տեղում, թիվ 8, էջ 83-87:

«Հյուսիսափայլի» 100-ամյակը // «Սովետական Հայաստան», թիվ 1, էջ 39-40: -

«Հյուսիսափայլ» ամսագրի 100 տարին // «Երևան», 12.1.

Օգտակար աշխատություն (*գրախոս. Ս. Գ. Арешян*, Армянская печать и царская цензура, Ереван, 1957) // «ՍԳ», թիվ 10, էջ 131-134:

1959

«Նալբանդյանի գրական ստեղծագործությունը» (*գրախոս. Խ. Ս. Սարգսյան*, Նալբանդյանի գրական ստեղծագործությունը, Երևան, 1959) // «Գրական թերթ», 16.X:

Պատմվածքներ մարդու մասին (*գրախոս. Վ. Պետրոսյան*, Վերջին հիշերը, Երևան, 1959) // «ՍԳ», թիվ 12, էջ 154-156:

1960

Մատենադարանի Լազարյանների արխիվը // «Բանբեր Մատենադարանի», թիվ 5, էջ 345-368:

Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միանալու ժամանակաշրջանին վերաբերող փաստաթուղթ // ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր», թիվ 4, էջ 91-92:

«Կռունկ հայոց աշխարհին» ամսագրի 100 տարին // «Գրական թերթ», 15.1:

Հայ-արաբական գրական կապերի պատմությունից // Նույն տեղում, 12.VIII:

Նոր գիրք պատանիների համար (*գրախոս. Հ. Ղուկասյան*, Անհանգիստ պատանեկություն, Երևան, 1959) // Նույն տեղում, 1.VII:

1961

Հայ պարբերական մամուլի ցենզուրայի պատմությունից // ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր», թիվ 7, էջ 73-80:

Ռուս մեծ ռեպուցիոն-դեմոկրատը (Ն. Ա. Դոբրոլյուբովի մահվան 100-ամյակի առթիվ) // «Գրական թերթ», 1.X:

«Հայրենի հող» վեպը (*գրախոս. Բ. Ուլուբաբյան*, Հայրենի հող, Երևան, 1959) // «ՍԳ», թիվ 4, էջ 146-149:

Նոր ուսումնասիրություն հայ-ռուս գրական կապերի մասին (*գրախոս. Գ. Հովնան*, Ռուս-հայ գրական կապերը 19-20-րդ դարերում, գ. 1, Երևան, 1960) // «Երևան», 20.V:

1962

Ռուս մեծ հրապարակախոսը (Ա. Ի. Գերցենի ծննդյան 150-ամյակի առթիվ) // «Գրական թերթ», 6.IV:

Մեծանուն հրապարակախոսը (Ստեփանոս Նազարյանի ծննդյան 150-ամյակի առթիվ) // «Երևան», 28.XII:

Գաղթաշխարհի երգեր (*գրախոս. Մ. Աթմաճյան*,

1963

Ս. Հախումյանի «Գործ» հանդեսը (1882-1884) // Հայ պարբերական մամուլի պատմությունից, հ. 1, Երևան, էջ 219-238:

«Հայ նոր գրականության պատմության» գիտական հրատարակության շուրջ // «ՍԳ», թիվ 7, էջ 130-137:

Սայաթ-Նովայի կյանքը // «Ավանգարդ», 2.VII:

Մեծ հեղափոխականն ու հրապարակախոսը (Ն. Պ. Օգարյովի ծննդյան 150-ամյակը) // «Գրական թերթ», 8.XII:

Արժեքավոր աշխատություն (գրախոս. Ա. Ավետիսյան, Գևորգ Ախվերդյան. կյանքն ու գործունեությունը, Երևան, 1963) // «Երևան», 27.XII:

1964

Առաջին հայ պարբերականը («Ազդարարի» 170-ամյակի առթիվ) // «ՊԲՀ», թիվ 4, էջ 43-52:

Արգասալից ճանապարհ // «Հայաստանի աշխատավորուհի», թիվ 3, էջ 5-6:

Մանկավարժական հարցերը «Հայկական աշխարհ» ամսագրում // «Սովետական մանկավարժ», թիվ 12, էջ 61-64:

Հայ գրականության պատմության ակնարկը չեխերեն // «Գրական թերթ», 17.VII:

Գրականությունը «Ազդարարի» էջերում // Նույն տեղում, 16.X:

«Ազդարարի» 170 տարին // «Բանվոր», 16.X:

«Հայկական աշխարհ» ամսագրի 100 տարին // «Երևան», 16.XII:

Литература на страницах “Аздарара” // “Литературная Армения”, N 11, с. 84-85.

Սովետահայ մամուլի պատմությունից (գրախոս. Վ. Ս. Ամիրբեկյան, Սովետահայ տեղական մամուլը (1921-1925), Երևան, 1964) // «Գրական թերթ», 14.VIII:

Ուրախալի հանդիպում հին բարեկամների հետ (գրախոս.

Աղավնի, Շիրակ, Երևան, 1964) // Նույն տեղում, 21. VIII:

1965

Դմիտրի Պիսարև (ծննդյան 125-ամյակի առթիվ) // «Սովետական Հայաստան», 19.X:

1966

Մի անտիպ փաստաթուղթ ցարական գրաքննության արխիվից // «ՊԲՀ», թիվ 2, էջ 131-146:

Չեխ ժողովրդի ազատագրական պայքարի արտացոլումը հայ մամուլի էջերում // «ԼՀԳ», թիվ 9, էջ 99-103:

Բանասերը, լեզվաբանը, թարգմանչուհին // «Սովետական Հայաստան», թիվ 9, էջ 12-13:

Ազնիվ նվիրումով // «Երեկոյան Երևան», 3.VI:

А. Б. Каринян // Краткая литературная энциклопедия, т. 3, М., с. 410.

1967

Նա համակ կյանք է (Աշ. Հովհաննիսյանի ծննդյան 80-ամյակի առթիվ) // «Սովետական Հայաստան», թիվ 7, էջ 25-26:

Մի բանաստեղծության պատմությունից // «Գրական թերթ», 14.IV:

Գաբրիել Տեր-Հովհաննիսյան (ծննդյան 130-ամյակի առթիվ) // «Սովետական Հայաստան», 2.VIII:

Գրողը և պատմական ճշմարտությունը (գրախոս. Գ. Մահարի, Այրվող այգեստաններ, Երևան, 1966) // «ԼՀԳ», թիվ 10, էջ 108-115:

1968

Նյութեր հայ պարբերական մամուլի գրաքննության պատմությունից // «ՊԲՀ», թիվ 2, էջ 147-162:

«Փորձ» և «Արծազանք» պարբերականները և ցարական գրաքննությունը // «ԲԵՀ», թիվ 3, էջ 123-136:

Թադևոս Ավդալբեկյանի «Միքայել Նալբանդյան»
աշխատության գրաքննական գործը // «Գրական թերթ», 23.II:
«Գրողների բառարան» մատենաշարը չեխերեն //
«Սովետական Հայաստան», 18.V:

«Արարատ» հանդեսի հարյուր տարին // «Հայրենիքի
ծայն», 3.VII:

Мурч // Краткая литературная энциклопедия, т. 5, с. 23.

Мшак // Там же, с. 39.

1969

Հարություն Շմավոնյանը և նրա գործակիցները // «ՊԲՀ»,
թիվ 4, էջ 130-146:

Ժողովրդի գործին նվիրվելու գեղեցիկ օրինակ (Աբգար
Հովհաննիսյանի ծննդյան 120-ամյակի առթիվ) // «Սովետական
Հայաստան», 9.VII:

1970

Երկու խոսք // «Ազդարար» [վերատպություն], Փարիզ, էջ
V-XIX:

Զարմանալի անակնկալ (*գրախոս*. Ս. Դ. Ավագյան, Նյուքեր
Ղարաբաղի նախասովետական շրջանի մամուլի
պատմությունից, Երևան, 1969) // «Գրական թերթ», 30.I:

Ստ. Նազարյանի «Նամականին» (*գրախոս*. Ստեփանոս
Նազարյան, Նամականի. տեքստը կազմեց, ծանոթագրեց և
առաջաբանը գրեց Ռուզան Նանունյանը, Երևան, 1969) //
«Սովետական Հայաստան», 1.IX:

1971

Էջեր արևելահայ պարբերական մամուլի գրաքննության
պատմությունից // Էջեր հայ ժողովրդի պատմության և
բանասիրության, Երևան, էջ 254-297:

Հունգարական ազգային-ազատագրական շարժումները
«Փորձի» և «Արձագանքի» էջերում // «ԼՀԳ», թիվ 12, էջ 28-36:

Գրախոս. Վ. Երկանյան, Պալքար հայկական նոր դպրոցի

համար Անդրկովկասում (1870-1905), Երևան, 1970 // Նույն տեղում, էջ 83-84:

1972

Աբգար Հովհաննիսյան // Հայ նոր գրականության պատմություն, հ. 4, Երևան, էջ 89-109:

Սի էջ հայ լրագրության պատմությունից // «ԲԵՀ», թիվ 1, էջ 182-187:

Սախլասի ֆելիետոնները // «ՍԳ», թիվ 4, էջ 153-157:

1973

Ալեքսանդր Ծատուրյանը ժամանակակիցների հուշերում // «ԼՀԳ», թիվ 2, էջ 43-50:

Շանդոր Պետեֆի // «Հայրենիքի ծայն», 17.1:

Նալբանդյանի գրական ժառանգության շուրջ // «Գրական թերթ», 18.V:

1974

Կովկասի գրաքննական կոմիտեի նյութերից // «ՊԲՀ», թիվ 3, էջ 105-112:

Հայ լրագրության սկզբնավորողը // «Հայրենիքի ծայն», 27.II:

Առաջին հայ պարբերականը // «Երեկոյան Երևան», 18.X:
Արարատ // ՀՍՀ, հ. 1, էջ 695:

1976

XIX դ. երկրորդ կեսի արևելահայ պարբերական մամուլի պատմությունից («Փորձ», «Արձագանք»), Երևան, 560 էջ:

Գրախոս. Պ. Հակոբյան, Գիտական առաջընթաց քայլ // «Գրական թերթ», 25.XI.1977; Հ. Դավթյան, Համակողմանի ուսումնասիրություն // «ՍԳ», 1978, թիվ 3, էջ 143-144:

Հարություն Շնավոնյան // Հայ մշակույթի նշանավոր գործիչները. V-XVIII դարեր, Երևան, էջ 567-574:

«Արարատ» շաբաթաթերթը // «ԼՂԳ», թիվ 4, էջ 24-34:
Արտաշես Կարինյան (ծննդյան 90-ամյակի առթիվ) // «ՊԲՀ», թիվ 4, էջ 231-236:

Արտաշես Կարինյան // Ագիտատոր և պրոպագանդիստ, թիվ 23, էջ 36-38 [անստորագիր]:

Գրականությունը «Փորձ» հանդեսում (հրատարակման 100-ամյակի առթիվ) // «Գրական թերթ», 15.X:

Արծազանք // ՀՍՀ, հ. 2, էջ 84-85:

1977

Գործ // ՀՍՀ, հ. 3, էջ 172:

Եղանակ բյուզանդյան // Նույն տեղում, էջ 499:

1978

Երկու դրվագ հայ և ռուս մշակութային կապերի պատմությունից // «Գարուն», թիվ 7, էջ 65-68:

Նյութեր Հարություն Շնավոնյանի գործունեության մասին // «ԼՂԳ», թիվ 7, էջ 91-96:

Էնֆիանյան Հ. // ՀՍՀ, հ. 4, էջ 60:

Լումա // Նույն տեղում, էջ 681:

Գրախոս. Ս. Ն. Հակոբյան, «Մետեորա» հանդեսը արևմտահայ լուսավորական դեմոկրատական շարժման մեջ, Երևան, 1977 // «ԼՂԳ», թիվ 9, էջ 106-108:

1979

Միջայել Նալբանդյանի հրապարակախոսությունը // Միջայել Նալբանդյան, Հրապարակախոսական երկեր, Երևան, էջ 3-26:

Մատենագիտական տեղեկություններ // Նույն տեղում, էջ 529-533:

«Հյուսիսափայլ» ամսագրի շապկանկարի շուրջ // «ՍԳ», թիվ 2, էջ 145-147:

Մարտնչող հեղափոխական հրապարակախոսը // «Երեկոյան Երևան», 15.XI:

Երկու հազվագյուտ շապկանկար // «Գրական թերթ», 16.XI:

Кровью освятить свободу // “Комсомолец”, 17.XI:

Ծիւն Ավարայրի // ՀԱՅ, հ. 5, էջ 125:

Կռունկ հայոց աշխարհին // Նույն տեղում, էջ 668:

Գրախոս. Ռ. Պ. Նանունյան, Ստեփանոս Նազարյան.
կյանքը և գործունեությունը, Երևան, 1978 // «ԼՂԳ», թիվ 7, էջ 112-114:

Պատ. խմբ. Ս. Ս. Նազարյան, Հայ մանկապատանեկան
մամուլը (1851-1917), Երևան, 219 էջ:

Խմբ. Միքայել Նալբանդյան, Հրապարակախոսական
երկեր, Երևան, 534 էջ:

Խմբ. Կոլեգայի անդամ. Միքայել Նալբանդյան, Երկերի
լիակատար ժողովածու վեց հատորով, հ. 1-6, Երևան, 1979-
1997:

1980

Համբավաբեր Ռուսիո // ՀԱՅ, հ. 6, էջ 107:

Հայկական աշխարհ // Նույն տեղում, էջ 169:

Հանդես գրականական և պատմական // Նույն տեղում, էջ
220:

Հյուսիսափայլ // Նույն տեղում, էջ 450:

Հովհաննիսյան Աբգար // Նույն տեղում, էջ 567:

Ծանոթագրություններ // Միքայել Նալբանդյան, Երկերի
լիակատար ժողովածու վեց հատորով, հ. 2, Երևան, էջ 397-438
(Ն. Հ. Մուրադյանի հեղինակակցությամբ):

Խմբ. Հայ պարբերական մամուլը քրդերի մասին
(մատենագիտություն, 1850-1920), Երևան, 189 էջ:

1981

Նորից Սարգիս Վարշամյանցի նամակի առթիվ // «ՊԲՀ»,
թիվ 3, էջ 243-252:

«Հյուսիսափայլը» և «Մեղուն» // «Սովետական Հայաս-
տան», 17.XII:

Եվ ապագան հյուսեց դափնեպսակներ (Հարություն

Արվաճյանի ծննդյան 150-ամյակի առթիվ) // «Երեկոյան Երևան», 17.XII:

Ճռաքաղ // ՀՍՀ, հ. 7, էջ 106:

Մանկավարժանոց // Նույն տեղում, էջ 234:

Մասյաց աղավնի // Նույն տեղում, էջ 270:

Գրախոս. Ս. Սաղյան, Ռաֆայել Պատկանյան. կյանքը և գործը, Երևան, 1980 // «ԼՀԳ», թիվ 10, էջ 115-117:

1982

Ա. Բ. Կարինյան // «ՊԲՀ», թիվ 2, էջ 235-236:

Բեգզադեի առեղծվածը // «Գրական թերթ», 6.VIII:

Մուրադյան Գ. // ՀՍՀ, հ. 8, էջ 94:

Նոր ազդարար // Նույն տեղում, էջ 348:

Նոր դար // Նույն տեղում, էջ 353:

Շահնազարյան Կ. // Նույն տեղում, էջ 427:

Շանշյան Պ. // Նույն տեղում, էջ 450-451:

Շմավոնյան Հ. // Նույն տեղում, էջ 525:

Չամուռնյան Հ. // Նույն տեղում, էջ 664:

Арутюн: Шмавонян // Видные деятели армянской культуры (V-XVIII века), Ереван, с. 453-459.

Ծանոթագրություններ // Միքայել Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու վեց հատորով, հ. 3, Երևան, էջ 353-456:

1983

1848-1849 թթ. հունգարական հեղափոխությունը և հայ հասարակական միտքը // Հայ-հունգարական պատմական և մշակութային կապերի պատմությունից, Երևան, էջ 391-436:

Գրախոս. Ազատասիրական գաղափարները հայ հրապարակախոսության մեջ (1820-1920 թթ.). տեքստը պատրաստեցին, առաջաբանը և ծանոթագրությունները գրեցին Ալմաստ Ջաքարյանը, Գարրի Հովհաննիսյանը, Երևան, 1982 // «ԼՀԳ», թիվ 9, էջ 95-97:

1984

Սիմեոնյան Պ. // ՀՍՀ, հ. 10, էջ 375:

Սոգինյան Թ. // Նույն տեղում, էջ 487-488:

Կարևոր ավանդ (գրախոս. Էդ. Ջրբաշյան, Միքայել Նալբանդյանը և արդիականությունը, Երևան, 1984) // «Գրական թերթ», 21.IX:

1985

Սովրեմենիկ // ՅՍՀ, հ. 11, էջ 17:

Սպանդարյան Սպանդար // Նույն տեղում, էջ 50-51:

Ստեփանե խ. // Նույն տեղում, էջ 128:

Վաճառական // Նույն տեղում, էջ 254:

Զնյուռնիայի մամուլի պատմությունը (գրախոս. Ս. Ն. Դակոբյան, Զնյուռնահայ պարբերական մամուլը (1839-1860), Երևան, 1984) // «Գրական թերթ», 2.VIII:

1986

Նալբանդյանի ծածկանունների շուրջ // «ԼՂԳ», թիվ 3, էջ 59-69; թիվ 5, էջ 63-73:

Արևելահայ առաջին պարբերաթերթը («Արևելյան ծանուցմունք» շաբաթաթերթի հրատարակության 170-ամյակի առթիվ) // «ԴԲՀ», թիվ 4, էջ 63-72:

Փարոս // ՅՍՀ, հ. 12, էջ 324:

Փորձ // Նույն տեղում, էջ 366:

Պատ. խմբ. Դայ պարբերական մամուլը: Մատենագիտական համահավաք ցուցակ (1794-1980), կազմեց Ս. Ա. Բաբլոյանը, Երևան, 471 էջ:

1987

Արևելահայ մամուլ // ՅՍՀ, Սովետական Դայաստան, էջ 453-454:

Պատ. խմբ. Ս. Ն. Դակոբյան, Զնյուռնահայ պարբերական մամուլը (1861-1880), Երևան, 362 էջ:

1989

Սսեր Սսերյանը նամակներում // «ԼՂԳ», թիվ 1, էջ 78-85:

1990

Գաբրիել Պատկանյան և Ներսես Աշտարակեցի // «ԼՂԳ»,
թիվ 12, էջ 30-40:

1991

Թիֆլիսյան խճանկար // «ԼՂԳ», թիվ 5, էջ 59-67:
Аракс // Армянский вопрос. Энциклопедия, Ереван, с. 29-
30.

Ардзаганк // Там же, с. 32.
Мегу Айастани // Там же, с. 224.
Нор дар // Там же, с. 247-248.
Порц // Там же, с. 267.
Спандарян Спандар // Там же, с. 306.
Գրախոս. Ա. Ա. Խառատյան, Արևմտահայ պարբերական
մամուլը և գրաքննությունը Օսմանյան Թուրքիայում (1857-
1908), Երևան, 1989 // «ՊԲՀ», թիվ 1, էջ 208-212:

1993

Հայ պարբերական մամուլի ազդարարը // «Հայաստանի
հանրապետություն», 1.IX:

1994

Արևելահայ մամուլի սկզբնավորումը և լուսավորական
շարժումը XIX դ. առաջին կեսին, Երևան, 398 էջ:

Գրախոս. Հ. Ասմարյան, Արևելահայ մամուլի սկզբնա-
վորման պատմությունը // «Հայաստանի հանրապետություն»,
23.II.1995; Ա. Մարգարյան, Լրագրության սիրելին //
«Հայաստան», 13.V.1995; Է. Կոստանդյան // «ԼՂԳ», 1995, թիվ
2, էջ 148-151:

Ծանոթացեք. հայ մամուլի առաջին լրագրողը // «Նպա-
տակ», 16.XI:

//

1995

Առաջին հայ պարբերաթերթը և նրա խմբագիրը // «ԼՂԳ»,
թիվ 2, էջ 3-16:

Հայ լրագրության ծնունդը. «Ազդարար»-200 //
«Հայաստանի հանրապետություն», 28.1:

Լյուդմիլա Մոտալովայի սխրանքը // Նույն տեղում, 18.IV:

Գրախոս. Էդ. Զրբաշյան, Թումանյանը և հայ
գրականության ավանդույթները // «ՊԲՀ», թիվ 2, էջ 237-241:

1996

«Մամուլը կյանքի աղն է» // «Նոր-դար», 10.1:

Արաքս // Հայկական հարց. հանրագիտարան, Երևան, էջ
53:

Արծազանք // Նույն տեղում, էջ 65:

Մեղու Հայաստանի // Նույն տեղում, էջ 327-328:

Նոր դար // Նույն տեղում, էջ 357-358:

Սպանդարյան Սպանդար // Նույն տեղում, էջ 419-420:

Փորձ // Նույն տեղում, էջ 455:

1997

Գրախոս. Ստեփանոս Նազարյան, Երկերի ժողովածու.
տեքստը և ծանոթագրությունները՝ Ռ. Նանունյանի, Երևան, 1996
// «ԼՂԳ», թիվ 3, էջ 177-179:

1998

Հին առեղծվածի վերծանման նոր փորձ // «ԼՂԳ», թիվ 3,
էջ 53-63:

1999

«Կոմս Էմմանուելի» ծագումնաբանությունը // «Հայաս-
տանի հանրապետություն», 18.VIII:

«Բանբեր գրականության և արվեստի» հանդեսը // «ՊԲՀ»,
թիվ 3, էջ 107-120:

Խորեն Ստեփանեի «Հայկական աշխարհ» ամսագիրը,
Երևան, 113 էջ:

Գրախոս. Զ. Ասմարյան, Ուշագրավ աշխատություն //
«Հայաստանի հանրապետություն», 10.VI; Է. Կոստանդյան //
«ՊԲՀ», 2003, թիվ 2:

Խորեն Եպիսկոպոս Ստեփանեի կյանքն ու լրագրային
գործունեությունը // «Էջմիածին», թիվ Թ, էջ 46-57:

«Գարուն» ամսագիրը // «ՊԲՀ», թիվ 3, էջ 119-136:

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ԲԵՀ - Բանբեր Երևանի համալսարանի

ԼՀԳ - Լրաբեր հասարակական գիտությունների

ՀՍՀ - Հայկական սովետական հանրագիտարան

ՊԲՀ - Պատմա-բանասիրական հանդես

ՍԳ - Սովետական գրականություն

ՔՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱԲԱՆ.....3-5

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

«ԵՎՐՈՊԱ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹԸ ԵՎ
ՀՈՒՆԳԱՐԱԿԱՆ ՀԵՂԱԺՈՒՍՈՒԹՅՈՒՆԸ6-48

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՀՈՒՆԳԱՐԱԿԱՆ ՀԵՂԱԺՈՒՍՈՒԹՅԱՆ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ
XIX ԴԱՐԻ 50-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՅ
ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՍՈՒԼՈՒՄ.....49-70

ԳԼՈՒԽ ԵՐԲՈՐԴ

ՀԱՅ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՄԻՏՔԸ ԵՎ
ՀՈՒՆԳԱՐԱԿԱՆ ՀԵՂԱԺՈՒՍՈՒԹՅՈՒՆԸ.....71-121
ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ122-125
ՄԱՐԳՈ ՄԽԻԹԱՐՅԱՆԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ.....126-138

Մարգո Համբարձումի Մխիթարյան
1848-1849 թթ. հունգարական հեղափոխության
արձագանքները հայ իրականության մեջ

Марго Амбарцумовна Мхитарян
Отклики венгерской революции 1848-1849 гг. в
армянской действительности

Margo Mkhitarian
Les échos de la révolution hongroise de 1848-1849 dans la
réalité arménienne

Համակարգչային շարվածքը՝ Վ. Պողոսյանի

10007

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ



FL0686025

